

**www.ընսահն.ամ**


ԺԱՄԱՆԱԿԱԿԻՒԹՅԱՆ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱՅՈՒԹՅՈՒՆ @ՄԹԵՐԳՈՐԻ ՀԱՅԱՍՏԱՆ



Խմբագիրներ՝  
Վիոլետ Գրիգորյան  
Վահրամ Մարտիրոսյան

## Նենսի Ագարյան

Նա արձակեց իր շալվարի կոճակն ու եղունգի մկրատով կտրեց իր առնանդամն ու թափահարեց



## Արթուր Սահակյան

բենզին, ՇՇԿ, հյուրանոցային ցանց ... բանակ, են քոչարյանն էլ մի կողմից, բա մեռք չի է մարդը:




## Վահե Ավետյան

Նայում են սև կոստիս, ծիծակ, դեմք քյառք կոշոներիս, ույյրան ագնոսներիս ու նախանձում են

## Նարեկ Նիկողոսյան

Ինչքան դժվար է ժամերը կյանքով լցնելը...



## Տիգրան Պասկևիչյան

«Եթե քսան տարեկանում չես մեռել, ուրեմն պոետ չես»:




## Կարեն Կարսյան

Ես երազում էի խաչվել նորա մարմճին Ու այդ կերպ հավետ միախառնել մեր արյունները Ես երազում էի հետևել Թե ինչպես է նա իր երկար թարթիչներով խոզանակում ատամներս Ու դառնում էի պոետ...

## Կարեն Միսիթարյան

- Տղան լողի մարզիչ էր: Վանա լճի չորացումից հետո գործազուրկ մնաց...



## Անահիտ Քայրապետյան

Հաստատ իջուս եմ, որ ասքալտը ֆ-ով է գրվում:




## Գոհար Նիկողոսյան

ամենաամենա-  
մենասովորական  
օնանիզմով հիվանդ  
Կոնջ քիին, հաստատ որ  
հաստատ, կչոքի մի  
մոխրագույն և կամ  
շիկակարմիր  
և կամ սեփսու  
և կամ ճեփճերմակ  
կատու:

## Յաբեթ Մուրադյան

Թուղթ,  
իմ ճերմակ, սրսփուն,  
իմ մանկության  
անկողին,  
բոլորիցս մեղքն էլի դու  
ես...



## Արման Գրիգորյան



... նա տեսնում է պենիսը, հասկանում է, որ ինքն այն չունի և ուզում է ունենալ:



## Վահան Իշխանյան

պապիկը չի տատիկը  
չի: պապիկը մեռել ա:  
տատիկը չի մեռել: թե  
հակառակը:

**Կարինե Գասպարյան**  
Այլս ցերեկ չէր, որ  
զվո՞նեին  
Անորակ-տեղական  
երևանցի  
Նաև էջմիածինցի  
ճանճերը...




**Լուսի Ստեփանյան**  
Իրենց մեծատառով  
Աստված ախսեր՝  
Տիգրան Կարապետիչից  
Միզարեթի գլանակ են  
մուրալու:

**Դավիթ Գրիգորյան**  
Կյանքը, ինչպես և  
քաքը, լինում է երկար և  
կարծ, առողջ կամ՝ ոչ  
այնքան, շատ  
դեպքերում՝  
անկանխատեսելի:

**Լևոն Նազարեթյան**  
Ինչպես ասում են, «ա»  
ասելուց հետո  
պարտադրված ես  
ասելու «բ», հետո էլ՝  
«գ», և ինչն  
ամենատհաճն է՝ «դ»:




**Լևոն Զավախյան**  
- Բըօնա-պետ-հեռա-  
ցիր... Բըօնա-պետ-  
հեռա-ցիր...



**Ծովինար**  
մի բառանոց  
նամակ  
“սիկտիր”

**Լիդա Ասատրյան**  
կգնա բ-ի՝ կմոռանա:  
Չօգնեց՝  
հայրենասիրական  
թեմայով երգեր կերպի...



**Մոմիկ Վարդանյան**  
Պոետ, ո՞ւր է քո  
պահպանակը, –  
հագի՛ր...



**Շուշան Ավագյան**  
(հազ) Արաքսում հոսող  
մարմինների պես (հազ)

**Հարություն**  
**Հարությունյան**  
Գիշերը Սեղրակը չքննեց:



**Ռովիաննես**  
**Թեքոյոցյան**  
Մահամերձ էր,  
չհասցրեցի նրան  
մարդակարի սպանել:

**Djsheko**  
Հայաստանը  
Մուֆթլանդիան ա, ես՝  
Հայմուֆթ բանկի  
նախագահը ...

## 4

### Շուշան Ավագյան

### ՄԱՅԻՍԻ ՄԵԿՆ Է

Իսկ ես թքած ունեմ ձեր օրենքների վրա,  
որ սարդուստայնի պես ծուղակում են իմ ծանրացած մարմինը,  
մտքերը, եւ դրանք փոշու պես  
փակչում են («Անկախության հրապարակ») մետրոյի հաջորդ վագոնին  
և - անհետանում - կփորձն զրի առնել - «անմահացնել պահը»,  
բայց նույն վայրկյանին, Բրետոնում, նորա մայրիկը՝  
առանց դեմքի որևէ արտահայտության,  
ծաղկի (վարդ կամ հիրիկ) չորացած ցողունը կոտրում է  
երկու մասի ու գցում աղբամանը - արդյոք ի՞նչ է մտածում՝  
նստած աթոռին - դիտում է քառակուսի տուփի էկրանին (ձայնը մարած)  
ելույթ ունեցող մարդուկներին

մթության մեջ նրա դեմքին շողջողում է լույսի ցոլքը  
էկրանից: Տասմերեք տարեկանում առջիկները ամենանուրբ  
ու փիրուն «պահն» են ապրում - ամենայուրին ժամանակը՝  
երբ քեզ կոտրում են, «հեզաճկուն» կոնքից բռնած,  
իսկ հետո սկսում են ինքդ հավատալ բոլոր ստերին.  
հարմարվել, առաջադիմել մյուս աշակերտուիհների պես,  
համառությանք գործածելով այն լեզուն, որ հերքում է  
քո իսկ գոյությունը, սատարում քո ոտնահարմանը - այո -  
այս ամենը անտեսանելի են, ինչպես (Վերը նշված) փոշու մասնիկները՝  
նստած մետրոյի վագոնի անկյունային պատին փակցված Գրանդ Տարակոյի  
ազդագրի եզրին: Այսօր մայիսի մեկն է, և ուզում են  
ստեղծել այս պահը (ոչ թե «օգտվել պահից»)  
երախտագիտությամբ հաճբուրելու  
հիվանդանոցի բուժքույրերի հոգնած դեմքերը,  
մեր հարևան ժամացույցի գործարանի պահակին,  
անձոռնի ու քաղցկեղաննան սրճարաններում վազվաղ  
սպասուիհներին՝ նրանք մոռացել են քնքշությունը -  
դատարկ տեղը նրանց մի՛ ժպտացեք. նրանց հայացքը սառել է  
ձեր ձեռքին,  
որ դանդաղ ու համոզմունքով գնում է դեպի ետևի գրպանը,  
համում դրամապանակը և -  
այո, ես թքած ունեմ ձեր օրենքների վրա,  
որոնք գրվում են արյան վրա, արնոտ գրիչներով  
(Նադրալյանի ու նրա նմանների  
հաշվին), իսկ կապիտալիզմի տանկը դղրդյունով ուղղվում է  
Կրեմլինից դեպի Կովկաս -

**ԳԱՎԱՐԻՏ ՄԱՍԿՎԱ - կարծես երազ էր,**

միայն թե իման իրական տեսք է ստացել  
դիմակահանդեսի, ու դիմակներն արագ փոխվում են,  
նոր անուններ ի հայտ գալիս. զինվորները կուրորեն ծառայում են

իրենց «Երկրի պաշտպանության» համար - կամ թե  
իրենց իսկ հայրենակիցներին (ում որ «պաշտպանում են»)  
ոտնակոխ անելու, նսենացնելու, Բաղրամյանի վրա  
ծուղակելու ու թունավորելու գաղով՝ իրենց ավտոմատացած,  
դերիլացած նեղ հայացքներով - բայց նրանք ևս տասներեք տարեկանուն

շատ փիրուն էին, շատ հավատացյալ ու ընդօրինակող -  
եթե չեք կարող գնալ ընդդեմ տանկի - ապա (բնականաբար)  
(Վասակի օրինակով) պիտի հեծնեք տանկը - և թող երկաթյա  
ձեր գենքը, որ ցցված է ձեր ոտքերի արանքից -  
թող այն լինի շատերի ահն ու ահազանգը (վախը) (կամ «հարգանքը»)  
չէ՞ որ այդ եք ուզում - որ տիրեք, տիրեք, տիրեք

## ԾՆՆԴԱՏԱՆՅ

Սկզբում դողն է հաղթահարում՝  
հանկարծակի  
հեռախոսով հարազատի մահվան մասին  
լուր ստանալու պես՝

հուսալքվում եմ -  
ակնթարթ՝ վայրկյաններ, րոպեն՝ ժամներ,  
հետաձգում եմ, ուշացնում... (Դա ինձ  
չի պատահի),  
բղավում եմ, կրկնում:

Ի՞նչ կմտածեն: Ինչու՞՛: Յակապատկեր՝  
արդեն վեց տարի է, ինչ հայերեն չեմ գրել.  
Ես ճանաչում եմ քո այդ կեցվածքը՝  
մեջքով պատին,  
տեսնում եմ դաստակիդ ոսկրոտ հոդերը -  
մի պաղ աշուն, դեռ տասնվեցդ չլրացած,  
խելակորույս վնտրում էիր  
մի վստահելի բժշկի,  
լավ կլիներ՝ կին-մասնագետ,

որ հասկանա,

որ չնայի քեզ լկտիորեն  
հայրաբար - խստաբարո - մեղադրանքով  
(դատախազի աթոռից) (ասես քո մարմինը պատկանում է նրան)  
այլ լուր  
վերջացնի իր գործն ու թողնի հանգիստ  
(լաս)  
կատաղի բռունցքներդ պատին հարվածելով՝  
դատարկվես  
քո կրացած գլուխը՝  
հանգստի սպառված թատրոն,

իսկ հետո՝ վերանորոգում

- այո -

## 6 ԼՍԱՐԱՆՈՒՄ

Նա պատմում է (լսարանում) բռնաբարված

կանանց ամբոխի մասին, թե ինչպես էին  
(շարաններով) (մեզ) տանում դեպի սպանդանոց -

(սրահում) բամբ ու կոշտ հազոցները (տղամարդկանց)`  
ասես ագրավների (կամ Գերագույն ծերակույտի) կանչ,  
իրար ձայնակցում, փորձում են միջամտել,

միջ-ա-մուտք (բացատրությունը՝ տես բառարանում)

Նրա ձայնը սկսվում է, հազոցների միջից -  
շարունակում շշնջալ (մի (բանավոր) տիսուր հեքիաթ)

ու իմ ձայնալարերը ասես կտրված հեռախոսագծեր լինեն՝  
մասնատված - խզված - պատռված - միջամտված  
(հազ) Արաքսում հոսող մարմինների պես (հազ)  
Նրա պատմությունը (հազ) վերցված է իրական դեպքից (հազ)  
անմեղություն մեխված խաչին (հազ) հոշոտված անմեղություն  
(հազ) պատից կախված են (հազ) (հազ) իինգ առանձին կտավներ  
որ միասին կազմում են (հազ) կոնց անդամալուծված (հազ)  
մարմնանասեր (հազ) դեմքն աղճատված է (հազ) դիմագծերը  
խզրզված (հազ) սա իրական պատմություն է (հազ) (հազ)  
բայց չգրանցված (հազ) միայն բանավոր (հազ) շշուկով (հազ)  
չկրկնվող բառերով (հազ) բառակապակցություններով (հազ) արտա-  
սանվում է (հազ) միայն մեկ (հազ) վերջին անգամ (հազ) նրա ձայնը  
(հազ) իմ (հազ) ձայնը (հազ) (հազ) միջա(հազ)մտվում է (հազ) -

## ԴԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ

<Կան>այք, ովքեր կանայք են (ըստ Գերտրուդ  
Ստայնի), ովքեր գիտեն շատ բաներ կանանց մասին,  
բայց միևնույն ժամանակ՝

կանայք,  
ովքեր գրում են թերեմներ կանանց մասին,  
իրենց հեռու են պահում այդ իսկ կանանցից,  
ուն մասին ունեն գրած շատ գրքեր,  
և բազում լինելով՝ այս կանայք

ցիրուցան են լինում

մյուս կանանցից, որոնց մասին  
«գիտեն շատ բաներ»,  
և գրել են թերեմներ, որոնք միգուցեն կարևոր են,  
բայց ան-տեղի են

այս գրուցում,  
թե կան կանայք, ովքեր բացեիբաց  
հայտարարում են, որ «գիտեն» անհուն բաներ կանանց  
մասին, բայց ո՞ր կանանց, Գերտրուդ -

նշված չէ (կամ ել ու՞մ է հետաքրքիր),  
թե ո՞ր կանայք ո՞ր կանանց մասին գիտեն ի՞նչ.  
(անչափ

շատ բաներ)

ու գրուն են նրանց մասին  
եռանկյունաչափական թեորեմներ... <կան>այք՝  
երկա՞ր մազերով, թե՞ կարճ, կր՞ո՞ր ունքերով, թե՞ ուղիղ,

մու՞գ մաշկով,  
շե՞ղ աչքերով,  
բարա՞կ մեջքով,  
հաստամարմի՞ն,

Կուրբե՞ի կանայք, թե՞ Ֆլորերի,  
ամուսնացա՞ծ, թե՞ բաժանված,

փողոցայի՞ն, տնտեսվա՞ր, տարե՞ց, երիտասա՞րդ,  
քաղաքապետարանի՞ կանայք, թե՞ անգործ,

շարքայի՞ն, զինվո՞ր, զինվա՞ծ,  
թե՞ կանայք ստրկացած,  
հլու՞ , հնազա՞նդ - ո՞ր կանայք, Գերտրուդ -

հավատացյա՞լ, ֆեմ ֆատալիտե՞ր, բանաստե՞ղծ կանայք,  
թե՞ գյուղացիներ - հզոր ծեռքերով ու լայնակուրծք,  
էմիգրա՞նտ կանայք, թե՞ քաղաքացիներ,  
պատերազմո՞վ բռնաբարված կանայք,  
թե՞ հասարակությամբ,

մետաֆիզիկակա՞ն, սու՞րբ կամ կառուցապատվա՞ծ,  
ընտանիք կազմո՞ղ կանայք, թե՞ «ընտանիք քանդող»,  
դավաճանված ամուսինների՞, թե՞ ծնողների կողմից,  
անփորձ օրիորդ Սարգիր՞ն, թե՞ Կարենինա,  
գովազդային ցուցանակներում սառած մանեկեննե՞ր,  
Սր. Սարգիս Եկեղեցու խնկամանների աղբն ավլո՞ղ,  
Մարգարյանի ցուլտ պալատներում ծննդաբերո՞ն,  
մածուն մերո՞ն, բուրդը չբխո՞ղ, լավաշ թխո՞ղ -

ըստ Գերտրուդ Ստայնի՝

<կան>այք -

## ՍԱՅՍԱՆԻՑ ԴՈՒՐՍ

Այս կանացի մաշկի տակ, հարմարվելով

քսանյոթ տարի՝

միջուկդ դեռ շատ փխրուն է,

դեմքդ

փոփոխվում է լույսի անկյան ներքո -

քո սևաթույր կարճ մազերը, որ խառնիխուռն  
բզբզված են միջ-հարավ-արևմտյան երկայնությամբ,

# www.բնագիր.am

8

դուր չեն գալիս ռուս պոետին -

(չափազանց անկանոն ու սև ես)

նրան անհասանելի են քո աչերի տիսրությունն ու հանդուգն  
քմծիծաղը՝ քո տարբերությունը,

աննմանությունը՝

դու դիմադրում ես ռուսայնացմանը - ընդհանրացմանը -

հանաձայնեցմանը - պոռնկացմանը - գրեհկացմանը,

ես զննում եմ քո խորունկ ու մթագնած աչերը՝

նշածն,

որ թափանցում են յուրահատկությամբ.

(դա աննկարագրելի է)

աննկարագրելի է նաև այն, թե ինչպե՞ս,

ինչ ուժգնությանը ես հերքում ավտոմատացման թելիկները,

որ սարդուստայնի պես ծուղակում են քեզ - (ահա) -

մեկ ծեռքով լվանում ես սուրճի բաժակները,

մյուսով՝ սեղմում ստեղնաշարի քառակուսիկները փոշոտված,

մյուսով՝ թերթում կուրդինյանի չտպագրված նամակների

պատճենահանած ժողովածուն, մյուսով՝ փորձում ես արձակել

ճերմակ հաբն իր պատյանից, աջով ծեփում ես մաշկագույն պորսելենից<sup>1</sup>

կուժի դետալներ, իսկ ձախով՝ սրբում թախիծը, ծանրացած քո

կոպերին - անտարբերություն - (ուզում եմ),

որ դեղձի դեղնությամբ,

հյութալի ու թթվաշ անհարթությամբ,

թավշի փափկությամբ - արձակվես բուրմունքով -

լսու՞մ ես - Դեյվիսը հեղաշրջում է

այն ամենը, ինչ անցյալուն

կառուցված էր համերաշխության վրա ահա - (այդ պահն է)

երբ քննարկում ես բացասական - նոտամիջյան

երկրորդական - երրորդական (թերի) հնչյունները, այն

տարածքը լարերի միջև, որ

անտեսվում է,

որ չի տրվում բացատրության, որ անպիտակ է՝ սահմանից դուրս,

որ - իմաստավորված չէ - անօրենք չարտոնագրված -

անանուն անձայնագիր - ահա քո այս բառերը

հասան իմ ականջի խոռոչին - (լրեցին Դեյվիսի հնչյունները) - տիրեց

լրություն - սենյակ՝ լի լրությամբ - չարտասանված

խոսքեր - պալիմպստից<sup>2</sup> ազատված -

մի ահեղ մռունչ -

արագ զարկեր՝ զարկերակի -

<sup>1</sup> Ճեմապակի:

<sup>2</sup> Յիմ դարերից մնացած բազմակիորեն գրված ու չնշված գրառումներով մագաղաթ:

## ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՒ

Մի տառը՝ մի հնչյուն՝ մի պատմություն -  
մի մահ - շարունակություն - անավարտություն  
(մի վայրկյանը - մի տարածություն)  
անպարփակ, անձև, բայց կայուն ու պտղաբեր  
(նռնենու պես), որտեղ ծիծեռնակը (կամ ավելի հավանականորեն  
սև մորթով սարդը) բույն է դրել, ու հաջորդ տարի կփնտրի

մի նոր ծառ, մի նոր հանգրվան - ճյուղերի միջև -

(աշխարհներ) այս մեկում՝ Անի Դիմիանկոյի բաղաձայնը,  
որ չափազանց կանացի է իր գրգռողոց զայրույթով,  
լսվում է հեռախոսափողի (քո ծայնի հետին պլանում) միջից,  
կարծես կոնտեքստ - փաքարված քո ուրվագծերին -

ամեն շարժումդ փորձում եմ թարգմանել, մեկնաբանել, բաղդատել,  
«ծանր ու թեթև» անել, քննարկել ինքս ինձ հետ -

հետո՝ ինքը բառը, որ քննչորեն արտասամեցիր երեկ,  
աստիճանների վրա նստած, «մեր բակում» - ՀԵՌՔՈՒՄ ԵՍ -  
հերքում եմ (քեզ) ողջ մարմնով ու եռւթյամբ՝  
անբացատրելիորեն դժվար է - անտանելի - անկարելի - իգուր  
ու համենայն դեպս (փորձի համար) շարունակում են մերժել նաև  
մաշկիդ ճերմակությունը - ծգողականությունը - քիմիական լուծույթները,  
որ այրիչ են, բռնկվող, հրոհիկ պես լափող, մոխրացնող - ու քամու հետ  
պարելով ես տարածվում եմ քեզնից հեռու - (ազատված վերջապես)

իմ սենյակում, որտեղ բառարաններն (իրար վրա դիզված)

անհամբեր սպասում են, որ իրենց գործածեն: (Փոքրիկ) սեղանիս վրա թափթփված են հետևյալը՝

- սիզարեթի տուփի (ամեն շաբաթ մեկ այլ տեսակ)
- (կանաչ) Օքրիտ ծամոններ
- մի քանի գիրք (Լին Շեջինյան, Վիոլետ լը Դուկ, Սիմոն դը Բովուար՝ ոսկեզօծ պատյանով՝ շատերի համար «Քունավոր» պարունակությամբ)
- մայրիկիս տված թաշկինակը (չինական, ծաղկազարդով) (որն այլևս մոդայից դուրս է, բայց փորձում եմ պահպանել իին սովորույթը)
- սառած թեյով բաժակս
- քո կրակարիչը - հ՞նչ էիր թարգմանում այսօր Ֆրանսերենից,  
Լիդի Սալվե՞ր - բա՞րդ է (մեր հարաբերությունների պե՞ս)
- «կան հատկանշական բառակապակցություններ կամ պատկերներ,  
որ չեն թարգմանվում» - չլուծված խնդիրների պես - չհարաբերակցված են  
իսկ «հարացուցիչ» պոստմոդեռնը բոլորին պարզապես վերածել է  
պարանոիկ սայրորդների<sup>3</sup>, և գրողները փորձում են  
«շահագործման» ենթարկել  
իրենց իսկ ըմբեղցողներին. սա էլ մտային գաղրութացման (կամ  
մաստուրբացիայի) մի նոր տեսակ է - մի նոր էտապ.

<sup>3</sup> օտար մարմինների մկանամբ հզոր դիմադրողականությամբ կես-մարդ- կես-մեքենա:

# www.բնագիր.am

10

Երբ քաղաքից գնում ես գյուղ - ուր էլ լիճի -  
(Ծաղկաձորում) կամ (Բլումինգթոնում), միւնույն է,  
գարնանը փթռում են ծառերը՝ խնձորենին, յասանանի թփերը -  
«Խոտը կանաչ է» եզրագծի երկու կողմում.  
Իիշողությունը նորովի է մարսում կրկնվող երևոյթները.  
և ցանկացած օտար քաղաքացու պես, նույնիսկ դեղնած ջինսերս  
ու սև օձիքով շապիկս արտակարգ են թվում կողքիս նստած  
ուսուցչի տեսքով տղամարդուն -

Երեկ էլիզը էլ-նամակով հարցնում էր (երկու տարի լռությունից հետո),  
թե ո՞վ է ինձ այստեղ «պրիվետ» ասում -  
և որքան ռուսական շեշտումն ընդգծված լինի,  
այնքան՝ լավ, քանի որ նմանվում ենք Պուշկինն ավարտած  
քաղքենիներին - ուրեմն - այսպիսով - անհրաժեշտություն չեմ տեսնում  
կարուտելու մի գաղափար, որ ինս չէ, ինձ չի պատկանում,

մի խոսքով՝ խորթ է,  
անհրապույր, «ձևական», մեքենայացված, սինթետիկ - «ս պրիվետոն»՝

մեր ձգտումներից շատերի պես՝ շորթել, գրվել, «փող դիզել», տիրել,  
լափել հարկանից շատ («լափել» բառն այստեղ կրկնում եմ տարբեր իմաստով)`  
բարեկամիդ «աչքը համելու» նպատակով (բնագրով՝ ուզում եմ այն, ինչ չունեմ),  
իսկ լիազորված եմ ասելու - «ո՛չ» - բավական է - սա էլ շատ է - բավարար -  
ահա - ընթերցող - դու խճվեցիր իմ «սահմանների ներքո»

զգացի՞ր -

փորձում եմ «հարիֆացնել» - դե՛ - համարյա հավատացիր,  
որ ազատ ես իմ հայացքից, որ այն օրյեկտիվ է, անկողմնակալ,  
որ չեմ զննում քեզ (դառնացած), այլ միայն «թույլ տալիս» (հեշտանքով),

որ ներխուժես իմ ներքնաշխարհը, անտեսանելիորեն, գողեգող -  
վստահ լինելով, որ եթե յուրաքանչյուր բառն ընթեռնելի է, ապա՝ արծարծելի -  
չե՞՞ որ «հևկական» պոետներին այդպես են չափանշում քննադատները.  
իսկ այն մագնիսային դաշտերը, որ ստեղծվում են բարերի միջև,  
ան-ընթեռ-նելի տարածքներում՝ դրանք ևս պտղ-ա-սու են,  
(չզսպված, նրանք սիրախաղում են քեզ հետ)

հուսալով, որ թարգմանչաց տոնը յուրովի է ընկալվում. աննախադեա՝

իմս դաշնում է քոնը, հասարակայնանում, վերածվում համայնքին՝  
մինչ այդ - ես վտարված եմ քո հասարակությունից - ինչու՞ -  
էվակուացված, օտարացված, ցանկապատված,  
պատասխանը գիտես միայն դու -  
(սիրելիս)

## Տիգրան Պասկահյան

### Ծխախոտ

Չետո, երբ ես ամեն Փարիզ գնացողի խնդրում էի ինձ համար մի տուփ «Ժիտան» բերել, և ամեն Փարիզ գնացող բերում էր այդ հիանալի ծխախոտը, ես հասկանում էի, որ այսօրվա ու երեկվա հեռավորությունն ավելի մեծ է, քան, ասենք, Տիգրան Մեծի արքայությունն ընդհանրապես: Իհարկե, կարող էի ուրիշ բան ուզել, օրինակ՝ Կալվաջոս, որն ամընդհատ խնում էին Ռենարկի հերոսները, և դա շատ ժամանակ առաջ մեզ դուր էր գալիս, և մեր ընկերը՝ Արման Ավագյանը, մեզ տանում էր իշխան, իր տատուապափ գյուղը, որ տնական խնձորի օդի խմենք ու երևակայենք, թե մենք Ռենարկի հերոսներն ենք: Արմանը մեռավ 22 տարեկանում, 1987 թվականին՝ չիմանալով, որ մեռնելու ժամանակները դեռ գալու են:

«Ժիտանը» հիմա էլ իմ ամենասիրելի ծխախոտն է: Ես ամեն օր մի բան ծխելով՝ ծխում եմ «Ժիտան», որովհետև այն իմ կյանքի մեջ կարևոր մի բան է սկսել:

Արտագաղթի 70-ականների ալիքը մեզ համար ողբերգություն չէր, այլ մեզանից ոնանց հավանական շփումը քաղաքակրթության այլևայլ տեսակների հետ: Եվ մենք չինք ողբում, այլ երանի էինք տալիս՝ Գագոն գնաց, Արտաշը գնաց, Էղոն գնաց: Չերքը Կարոյին էր հասել, ու մայիսի Վերջին՝ դասերից հետո, Կարոն մեզ մի փոքր խմբով հրավիրել էր իրենց արդեն վաճառված տունն ու Ամերիկայի քեֆ էր անում: Կարոյի ծնողներն արդեն քաղաքակրթության այլևայլ դրսևորումների մեջ, թե՝ այլևայլ գործերով տնից բացակայում էին: Մենք ու մենք էինք՝ տղերքով ու մի երկու աղջկե, որ մեր լեզվով ասած «Ավոյ», այսինքն՝ յուրային էին: Այսինքն՝ բան էր, մի քիչ շատ խմենք կամ համը համենք, բան չին խոսի: Կլշենին, իբր իրենք հեզ էլ աղջկ չեն:

Ուտել-խմելը լավ էր՝ ախտարական ուտեստներ, սովետահայ կրնակ՝ մի բանի աստղանի: Չետո սկսեցինք շշի ֆռացնել: Կողմանացույցի պես բան էր. ում վրա կանգներ, դիմացինի հետ պետք է պաչաչվեր: Միանգամից ասեմ, որ ինձ վրա երբեք էլ չկանգնեց, որովհետև, այսպես կոչված, շահումով խաղերում միշտ ու մինչև հիմա անբախտ եմ: Կանգնեց Կարոյի ու Աննայի վրա: Շակատագիր ծաղր, անհեթեթություն, անպարհարություն գուցե, որովհետև այսպես թե այսպես Աննան այդ տնից դուրս գալուց առաջ համբուրելու էր Կարոյին, արտասելու էր ու բաժանման դաշնությունը մեղմելու համար նորից էր համբուրելու Կարոյին: Խսկ մենք մնալու էինք նոյն փոսում: Փոսն այստեղ փոխարենական իմաստով

չէ, այլ՝ ուղիղ, քանի որ մեր դպրոցը փոսում էր և կոչվում էր «Փոսի դպրոց»:

Կարոն, նստած տեղից ձգվելով, ինչպես դա լինում է ամերիկյան կամ եվրոպական կինոներում, բացեց պահարանի բարն ու այնտեղից հանեց մի տուփ ծխախոտ: Բոլորս նախ լարվեցինք, հետո ցանկությունը մեր մեջ թրթաց ու նայեցինք, թե Կարոն ոնց է բացում մեզ անհայտ ծխախոտի տուփը:

- Ի՞նչ սիգարետ ա,- հարցրեց մեզանից մեկը:

- Զգիտեմ, էս կա տանը,- մեծավարի ասաց Կարոն:

- Էս արանց ֆիլտրի ա՝, - զարմացավ Անդոն ու տեսավ, որ մի բանի ձեռք արդեն տուփի մոտ է: Ինքն էլ ձգվեց: Ու մինչ իրար հերթ չտալով ծխախոտ էինք վերցնում, տուփի մոտ տեսանք նաև Անժելի ձեռքքը: Կստա են, բոլոր տղերքը միաժամանակ նոյն ապուշ զարմանքով մտածեցինք՝ ծխում ա: Եվ մտածեցինք՝ եթե ծխում ա, ուրեմն... Եվ մտածեցինք, եթե ուրեմն, ուրեմն... Եվ ամեն մեկս մտքում մեզ պատկերացրինք առաջինը, բայց երկնտեցինք, որ եթե ծխում ա՝ ուրեմն...

Անժելը ցուցանատի և միջնամատի ամենածայրով բռնել էր ծխախոտն ու սպասում էր կրակի: Անժելը չէր կրահում մեր ուրեմնները: Անժելն օւզում էր մեզ հետ լինել ու մեզ հավասար, իսկ մենք կրակ չէինք գտնում: Կարոն գրամանից հանեց «Զիպո» կրակվարիչն ու ծրնգացնելով վառեց: Անժելն, ուրեմն, կպցրեց ծխախոտն ու ներս քաշեց ծուխը: Չետո, մենք հերթով արեցինք նոյնը: Թունդ ծխախոտի առաջին ներշնչումից գլխապըտույտ առաջացավ: Սկզբուն մտածեցինք ծխախոտից է, հետո հասկացանք, որ դա աղրենալինի մեր ամբարմերում Անժելի հանկարծ հայտնությունն է:

Ծխախոտի համն ինձ դուր էկավ: Ես մտածեցի՝ երբեք չեմ նոռանա այդ համը: Այդպես էլ եղավ՝ երբեք չմոռացա: Ծխեցինք, ներշնչեցինք, նայեցինք իրար, ստուգեցինք: Աննան մի տեսակ խորթացավ, հեռացավ մեզանից: Ու որ ուշադրությունից դուրս չմնա, ասաց՝ ես էլ կծխեի, բայց, հիշում եք, չէ՝, թքաբորբս, նոր են բուժվել: Ու որ հավատանք, ասաց՝ երանի ծեզ, ինչ լավ ա:

Մենք մտովի արդեն տիրել էինք Անժելին, Անժելն արդեն մերն էր: Մեր դենքի փայլը սահման չուներ, ու մեր ունգերից ծորացող ծուխը չէր տարրալուծվում էր անսահմանության մեջ, և դա ժամանակի սահմաններում չտեղավորվող վիճակ էր: Մեզ թվում էր, որ այդպես են ապրում կյանքի երկրորդ, հետո երրորդ, հետո չորրորդ, հետո բոլոր մյուս տասնամյակները՝ անժելախառն ու ծխակոլոլ: Ու հանկարծ մեզանից մեկը ճշաց՝ Անժել՝: Մի պահ թվաց, թե դա երևակայական հեշտանքի ճիշ էր, բայց երբ նայեցինք նրա դենքին, հասկացանք, ուրեմն, որ Կարոյի Անժերիկա գնալը ողբեր-

գությամբ է ավարտվում: Անժելը ճեփ-ճերմակ էր, հայացը՝ անգիտակից, չորացած շուրթերը ջուր էին աղերսում: Մի խոսքով, Անժելը մեռնում էր, բայց ընդհատվողը ոչ թե նրա կյանքն էր, այլ տղանարդ դառնալու մեր գործընթացը:

- Անժել,- գրեթե միաձայն գոռում էինք մենք: Անժելը դեռ շնչում էր: Մեզանից ոչ մեկն այսքան մոտից չէր տեսել մեռնող մարդ, առավելս՝ մեռնող ամսել: Միակ բանը, որ կարող էինք անել այդ պահին, մեռնողին ուշադիր նայելն էր: Անժելն իր ոտքով վեր էր կացել տեղից ու անկենդան պարկել բազմոցին: Մեզանից ոչ մեկն իր մտքինը չէր ուզում մատնել ու չէր ուզում մոտ գնալ աղջկան: Միայն Աննան էր անհանգիստ քայլում սենյակում՝ փորձելով իր վրա սևեռել մեր գոյություն չունեցող ուշադրությունը:

Անդո՞ն հարյուր տարվա ծխողի պես հանգըրեց ծխախոտն ու հրահանգեց բացել պատուհանը: Կարոյենց տունն առաջին հարկում էր, իսկ վերևում՝ հարկանի բաց պատշգամբը: Յարևանն էլ մեր դպրոցի պահակ, Լա Սկալայի չկայացած տեսոր ախապար Յակոբն էր, և այդ պատճառով պատուհան բացել Կարոյի սրտով չեղ:

Կարոյն ասեց՝ ջուր լցնենք վրեն: - Պետք չէ,- սառնասրտորեն կանխեցի ես ու բազմոցին մոտենալով ակերիս մեջ առա Անժելի ոտնաթաքը: Ես հետո պիտի իմանայի, որ կնոջ ամենազգայուն մասը ոտնաթաքն է, իսկ այդ պահին մտածում էի մի բանի մասին՝ վերացնել առկա անխստորժությունը:

Անժելի ոտնաթաքը սառն էր: Ես հետո պիտի իմանայի, որ մարդու մահը սկսվում է ոտնաթաքերի սառչելուց: Երկու ձեռքով սկսեցի շփել նախ մի ոտնաթաքը, հետո՝ մյուս: Դեմքին կենդանության նշաններ երևացին: Սկսեցի ավելի ուժեղ շփել: Անժելը ձայն հանեց, ասաց՝ ցավում է: Զգիտեմ ինչու, որոշեցի ձեռները նույնպես շփել ու ձեռներն էլ շփեցի: Տղերը հանգստացած շունչ քաշեցին: Հետո մենք անցանք մյուս սենյակ ու էի մի-մի հատ քաշեցինք:

### Դանդաղ ընթացք

Մի քանի տարի առաջ մտքովս անգամ չէր անցնի, թե ես կարող եմ մեքենա վարել: - 37 տարեկանուն սովորելը շատ դժվար է,- ասում էր քշել սովորեցնողը, - կամ լավ կրշես, կամ ամբողջ կյանքում տիաճություն կպատճաշի քեզ էր բանը: Ես սովորում էի ու մտքովս անգամ չէր անցնում, թե երբեմ մենակ, առանց վարպետի ու առանց նրա ոտքի տակ եղած պահեստային արգելակների: Եվ երբ կարիքից դրդված սկսել է տաքսի քշել, մի օր պատահաբար վերցրեցի այդ խմբագրին իր սիրուհու հետ: Նա ձայնից ինձ ճանաչեց և իրավիճակի անհեթերությունը ցույնու համար սիրուհուն ասաց, թե սա կանչով տաքսի չէ, այլ իր երեմնի հեղինակն իրեն տեսել ու կանգնել է: Ինչպիսի հարգանք... Սիրուհին, իհարկե, չհավատաց, որովհետև խմբագրին իր հեռախոսից էր զանգել տաքսի ծառայություն, և չհավատաց կրկնակի, որովհետև ես փողից չիրաժարվեցի: Գիշերվա մեկն էր, և այդ ժամին փողից հրաժարվելը նման կլիներ զոհված մեկի անունով բանաստեղծություն տպագրելուն: Իսկ երբ նրանցից հետո մեքենա պատվիրած մարմնավաճառուիին օժանելիք ցողեց իր պարարտ լանջին, ես հասկացա, որ մեծ սխալ է փող վերցնելը, հատկապես որ դու արդեն մի անգամ զոհված պոետ ես: Եվ երբ նրան հասցրի շքեղ հյուրանոցի մոտ, ու երբ նա սկսեց փորփրել դրամապանակը,

մեքենայով մտա տաքսի ծառայություն, հասկացա, թե ինչն էր ինձ տիաճություն պատճառելու, թես քշել սովորեցնողն ամենակին էլ դա ի նկատի չուներ: Ինքը խոսում էր գրական ամսագրի խմբագրի հանգով, ով քսան տարեկան պոետիս գործերը մերժելով ասում էր. «Եթե քսան տարեկանում չես մեռել, ուրեմն պոետ չես»: Ճեշտ է, չէ՞ դատողություններ ամելը, հատկապես, երբ դրանը ուրիշի ճակատագրին են վերաբերում: Եվ ուրիշի մեռնելն էլ առաջինություն է՝ անհերքելի հեղինակության պես մի բան: Եվ երբ ես բանաստեղծությունների մի այլ փունց՝ ուրիշի անունով ստորագրած, տվեցի ընկերուհու և խնդրեցի, որ տանի նույն խմբագրի մոտ ու ասի, որ իր վաղամեռիկ եղբոր բանաստեղծություններն են, և եղբայրն էլ զոհվել է աֆղանական պատերազմում (այն ժամանակ մեզ մոտիկ ուրիշ պատերազմ չկար), այդ խմբագրիր ոչ միայն տպել էր բանաստեղծություններս, այլև հուզից առաջարան գրել, թե Ա.Ա.-ն շարունակում է մեր պոետների՝ ծաղիկ հասակում մեռնելու ազգային ավանդությը: Նա առանձնապես ուշադրություն չէր դարձրել աֆղանական պատերազմում զոհված լինելու հանգամանքի վրա, այլ շեշտել էր վաղամեռիկ լինելու փաստը, որ կապեր ազգային ավանդությի հետ: Եվ հետո, մի օր, երբ այդ խմբագրի հետ բավական մտերիմ էինք արդեն, և ես ասացի, որ այդ վաղամեռիկը ես եմ, նա շփոթվեց. «Ես չգիտեի, որ դու Աֆղանաստանում կուվել ես»: - Նույնիսկ զոհվել,- ասացի ես: - Չէ, Աստված հեռու պահի քեզանից,- կարծ կապեց ինքը: Դիմա ինչո՞ւ եմ իհշում այս ամենը, որովհետև 37-ն էլ պոետի համար մեռնելու վատ տարիք չէ, բայց ես այդ տարիքում սկսեցի մեքենա վարել սովորել, ու 37.5-ում արդեն մենակ էի քշում, առանց վարպետի ու առանց պահեստային արգելակների: Եվ երբ կարիքից դրդված սկսել է տաքսի քշել, մի օր պատահաբար վերցրեցի այդ խմբագրին իր սիրուհու հետ: Նա ձայնից ինձ ճանաչեց և իրավիճակի անհեթերությունը ցույնու համար սիրուհուն ասաց, թե սա կանչով տաքսի չէ, այլ իր երեմնի հեղինակն իրեն տեսել ու կանգնել է: Ինչպիսի հարգանք... Սիրուհին, իհարկե, չհավատաց, որովհետև խմբագրին իր հեռախոսից էր զանգել տաքսի ծառայություն, և չհավատաց կրկնակի, որովհետև ես փողից չիրաժարվեցի: Գիշերվա մեկն էր, և այդ ժամին փողից հրաժարվելը նման կլիներ զոհված մեկի անունով բանաստեղծություն տպագրելուն: Իսկ երբ նրանցից հետո մեքենա պատվիրած մարմնավաճառուիին օժանելիք ցողեց իր պարարտ լանջին, ես հասկացա, որ մեծ սխալ է փող վերցնելը, հատկապես որ դու արդեն մի անգամ զոհված պոետ ես: Եվ երբ նրան հասցրի շքեղ հյուրանոցի մոտ, ու երբ նա սկսեց փորփրել դրամապանակը,

Նա կտրուկ ասացի՝ իջեք, ձեր փոխարեն վճարել են, ու նա իջավ անմիջապես: - Չորրորդ, չորրորդ,- գոռում էր ռադիոն, - չորրորդ, Բայրոնի փողոց, պատվեր կա: Բայրոնն իմ պատանեկության ամենասիրելի փողոցներից մեկն էր՝ կարծ ու ծուռ, աղեղի նման կամ բումերանգի՝ պվելի շուտ: Ես Բայրոնի փողոց գնացի ու կանգնեցի թերթի կրպակի մոտ: Կինը, որ նստեց մեքենաս, հավանաբար տարեկից էր ինձ ու դուռը շրխկացնելով ասաց՝ գնաճը: Նա այնպես ասաց՝ գնաճը, որ «ո՞ւր» հարցնելն ամիսնաստ էր: Ես իջա վար, թեքվեցի Սայաթ Նովայով աջ, հետո՝ ձախ Մաշտոցի պողոտայով, հետո Ամիրյանով դարձյալ ձախ թեքվեցի, մի պտույտ արեցի հրապարակում, հետո Նալբանդյանով բարձրացած Սայաթ Նովա, հատեցի Տերյանի խաչմերուկն ու աջ թեքվելով մտա Բայրոնի փողոց: Կանգնեցի կրպակի մոտ: Կին իջավ ու լուր հեռացավ: Ես մնացի կրպակի մոտ կանգնած: Ուադին կրկին գոռաց՝ չորրորդ, չորրորդ, որտե՞ղ ես: - Բայրոնի փողոցում,- ասացի ես ու հանկարծ նկատեցի, որ պատանեկությանս ամենասիրելի փողոցում մի անծոռնի շենք են կառուցել: - Բայրոնի ութ մոտեցիր, սպասող կա,- գոռաց ռադիոն: Ես հենց Բայրոնի ութի մոտ էի, և, մի քիչ սպասելուց հետո, նույն կինը նատեց մեքենաս ու պվելի վճռական ասաց՝ գնաճը: - Գնացինք,- ասացի ես ու կրկնեցի նույն երթուղին: - Եթե կարելի է, դանդաղ քշեք,- ասաց կինը, - ինձ դանդաղ ընթացքն է դուր գալիս: - Ինձ էլ,- ասացի ես: - Ուրեմն, դուք հաստատ քառասուն տարեկան եք,- մի քիչ պաթետիկ տոնով ասաց կինը: Կնոջ այդտեսակ տոնն ինձ եղբեք դուր չի եկել, բայց այս անգամ շատ

Ծնվել է ԱՄՆ-ի Մասաչուսեթս նահանգի Ուոլփոլ քաղաքում, ավարտել Նյու Յորքի Քոլոմբիա համալսարանի ստեղծագործական բաժինը: 1998թ. կազմել է «Կիթառ տղա» երկու հոգանոց ֆոլք-փանք երաժշտական խումբը և բողարկել «Ինձ պես աննորմալները» ձայներիզը: Նրա բանաստեղծությունների ու ներկայացումների տեքստերի հավաքածուն տպագրվել է «Եշխանուի Աննորմալ» խորագրով (2000թ.): Ակսած 2002թ. Նյու Յորքի «Կորնելիա» սրճարանում Ագարյանը կազմակերպում է «Ընթերցումներ» գրամշակութային միջոցառումը, որտեղ հանդես են գալիս հայ գրողներ, արվեստագետներ ու երաժիշտներ, ինչպիսիք են Միշելին Սիարոնյան Մարքոնը, Նենսի Գրիգորյանը, Գևորգ Չունանյանը, Փաթրիչա Սաֆարյան Ուորդը, Արլին Ուսկի Ավագյանը, Յուլի Վարդանյանը և ուրիշներ: Ներկայում ապրում է Նյու Յորքում ու աշխատում երկրորդ գորի վրա:

### Ներբող՝ նվիրված խուճապի նոպային

Զախ անրակիս վրա քարի պես մի բան կա,  
մաշկիս տակ: Զգիտեմ, թե ինչպես հայտնվեց այնտեղ,  
բայց ուզում եմ, որ անհետանա - ծեռքերս դողում են  
և բուլանում իմ ծանրության ներք, իսկ դեղնավուն լեղին  
ցինվում է բերանիս մոտեցված երիկամածս ամանին,  
անկողնուց նույնպես տիած հոտ է գալիս, մինչ այդ

բուժքույրը գիտ է - ես  
համոզված եմ - նույն բանը կրկնելով անընդհատ բավական է  
փսխես ասում է վերջ տուր կարծես թե դա ամեն ինչի լուծումն է -  
եթե երկու ասեղն ու հոգման ստամոքս չեն հանգստացնելու - ինչպես  
կարող են մի գիտ բուժքորոշ խոսքերն օգնել. նրա խալաթին փակցված է անվան  
պիտակ, որի վրա ոչինչ էլ չկա գրված, մինչ այդ

Ես մտորում եմ, թե ո՞ր ընկերներս կգան ինձ այցի -  
արդյոք դասախոսներս կզգա՞ն իմ բացակայությունը՝ լռված այս  
հոտած պալատում, Reader's Digest-ի հին համարի ծիծաղն ամենալավ  
դարմանն է - հա-հա-հա, չէ, չի փրկում - ու  
ինձ գալիս է այցելության Զառան, նա ինձ ասում է իր ծվծվան  
ծայնով՝ Նենսի, որու նրանց ասա, որ լարվածությունից մոտդ հոգեկան  
խանգարում է առաջացել, ու նրանք  
մի բուժում կգտնեն,

բայց ես կառչում եմ  
նրա բերած բարձին՝ որպես միսիթարանք ու ասում՝ ոչ,  
ոչինչ էլ չեն անի, արդեն փորձել են, հասկանու՞մ ես, թող ինձ հանգիստ,  
ու նա վերջապես գնում է. ճերմակ մազերով բժշկին ասում եմ՝  
կարծում եմ, որ սա լարվածությունից է, իսկ նա՝ ոչ մի ռեակցիա,  
ինչպես էլ գիտե՞ի - ու երբ նա հեռանում է,  
սկսում են հևալ-փսխել կրկին

հեռախոսով՝ մայրիկիս հետ, միջանցքում, հիվանդանոցի կեղտոտ  
անդրավարտիքը հագիս - հարցնում է ինձ՝ լավանու՞մ ես, փսխումդ  
դադարե՞ց. այո, բայց ցնդվել եմ, օգնիր ինձ - ասում է՝  
իինա կոճապղպեղի լիմոնադ կրերեմ...

Մինչ այդ ես գնում եմ «Ուսուցանել Ամերիկան» կազմակերպության հարցազրույցին՝ այս կոպիտ աշխատակցի հետ քննարկելու, թե ինչպես կվերաբերվեի դեռահաս հանցագործին, որի ձեռքին դանակ կա. Ես դանակների հետ չունեմ, մի կողմ դիր, նա ինձ ասում է՝ հյա փորձի՝ - տես կդնե՞մ, դե լավ, նման դեպքում անպատրաստ եմ, չգիտեմ էլ ի՞նչ ամեմ, միգուցե փսխելը կօգնի, միգուցե ես կփսխեմ այդ դանակով երեխայի վրա

միգուցե ճայերի պես՝ ֆիլմի ժապավենից\*՝  
Երբ փոքրիկը կտցահարում է մոր կարմիր լեզվակն, ու  
նա փսխում է իր կերակուրը, որ փոքրիկն ուտի, միգուցե  
այդպիս կամեմ, միգուցե  
ին ցավը կարգապահության անզուգական միջոց է,  
իսկ աշխատակցի հագին ճերմակ շապիկն ու ալ փողկապը նրան հենց  
ճայի են ննանեցնում, ու նա ասում է՝ վերադարձիր ժամը 3-ին,  
երկրորդ փուլի համար նախապատրաստիր մի փորձնական դաս,

ու ես վերադառնում եմ  
հանրակացարան - մտածում - մտածում -  
մտածում - հիվանդագին ցավը բարախում է սրտիս, ուղեղիս  
ռիթմի հետ՝ այս դեպրեսիայով ինձնից ակնկալում են, որ դա՞ս տամ, հա՝,  
ձևացնե՞մ, որ ուսուցիչ եմ, որ դա իմ ապագան է, որ այն ինձ կօգնի անկախանալ  
ու վերջապես ծնողներիս մոտից հեռանալ՝ ընտանիք, որ փսխելս ախտորոշել է  
որպես խանգարում. զանգում եմ նրան,

զանգում եմ մայրիկին, նա ժամանակին նույնպես ուսուցիչ էր, ու  
հարցնում եմ՝ ի՞նչ ես կարծում, ի՞նչ սովորեցնեմ նրանց,  
ու նա պատասխանում է՝ նախ սկսիր հետևյալ դասով, թող նկարեն  
մի պատկեր՝ «Ինչպես եմ զգում այսօր» խորագրով, հենց այդպես էլ  
անում եմ, կանգնում եմ լսարանում, ժապում ու գրատախտակին գրում  
(աննորմալի պես)՝ ինչպես եք զգում այսօր, ու նրանք ասում են՝ Տես՛՛  
ՈՒՐԱԽ ՋՂԱՅԻՆ ՄՈԼՈՐՎԱԾ ԲԱԽՏԱՎՈՐ ՕԹԵՅ

հետո ինձ են հարցնում՝  
իսկ դու՞ք ինչպես եք զգում, ու ես ուզում եմ պատասխանել  
փսխելու պես՝ օքեյ, սիրտս է խառնում, բայց փոխարենն ասում եմ՝  
ներվային, դե՛ իսկ հիմա որոշեք, թե ինչ զույներ եք օգտագործելու  
ձեր նկարի համար, ինչպիսի գծեր, պատկերներ՝ փոքր կամ մեծ -  
դե՛, պատկերացրեք, որ նկարիչներ եք ու սկսեք,

իսկ հագիս մայրիկիս բրդե կանաչ զգեստն է, որով նա դասավանդում էր  
50-ական թվականներին, հագիս նաև նրա ժպիտն է, նրա ձայնն ու  
նրա աչքերը, մինչ այդ ես ունեմ մի քար՝ մի քար, որ նա երբեք չի  
զգացել՝ ձախ անրակիս վրա, որովհետև նա այդ քարն ինձ է  
փոխանցել՝ առանց նույնիսկ զգուշացնելու, այն

ՃՆՇՈՒՄ Է

մինչ այդ նրանք առաջարկում են ինձ այդ գործը,  
իսկ ես հրաժարվում եմ, ես չեմ կարող լինել ուսուցիչ՝ պատրաստ չեմ,

\* Ալայդմերով ժապավեն, որ ցույց են տալիս ամերիկան դպրոցներից շատերում:

16

չափազանց անվստահ եմ ինքս ինձ վրա՝ դառնալու հասարակության անդամ,  
բայց չեմ կողմնորոշվում՝ անվստահ եմ, որովհետև կի՞ն եմ, թե՞ ծնողներիս,  
ավելի շուտ՝ նայրիկիս պատճառով, կամ միգուցե այդ ապուշ քարն է,  
որ պարունակում է վիտամիններ ու միներալներ, որոնք բացասական  
են ազդում արյանս ու հոգեկանիս վրա

ու ես քշում եմ երկրի մի ծայրից  
մյուսը Զարայի հետ. նա բղավում է՝ քշիր ավելի արագ,  
իսկ ես լալիս եմ, լալիս՝ նրա ծեռքը բռնած, կրկին փսխելով  
պատուհանից դուրս, իսկ մեքենան սուրում է հարավային  
Դակոտայի միջով, այն վերջ չունի, ստամոքսիս լեղին էլ ասես  
վերջ չունի ու հասնում ենք ծովեզրին,  
արևմտյան ափի անծայրություն

կեղտոտ ափ

իսկ ես դեռ այստեղ եմ, երկու տարի անց, դեռ փսխում եմ,  
ու էլ ոչ մի ձգտում չմնաց, էլ չեմ ուզում լինել  
ո՛չ ուսուցիչ, ո՛չ ճայ, ո՛չ մայրիկս, ո՛չ էլ արվեստագետ -  
պարզապես ուզում եմ, որ այս փսխանքը դադարի,  
ինչպես է ձեզ համար նման կարիերան՝ մի ապագա, որ սիրոս  
չխառնի - թքած ունեմ -

ու քարն էլ չքացավ:

## Իրականություն

Նա հարցրեց՝ դու լեսքիա՞ն ես:  
Ոչ, պատասխանեցի՝ բիսեքսուալ, բայց  
վախենում եմ տղամարդկանցից:  
Նա հարցրեց՝ կոնկրետ ինչի՞ց ես վախենում:  
Նրանց առնանդամից՝ պատասխանեցի  
ու նրան նայեցի ունեցերս բարձրացրած,  
իսկ նա արձակեց իր շալվարի կոճակն ու  
եղունգի մկրատով կտրեց իր առնանդամն  
ու թափահարեց՝ վարդագույն՝ իմ դեմքի առջև,  
իսկ ես այն խլեցի ու վագեցի  
դեպի մայրամուտ, ու  
այն ընկավ օվկիանոսի ալիքների մեջ  
ու ծփծփաց Լեսբոս կղզու ափերին,  
որտեղ այն մաքրեցին, դատարկեցին  
ու մշակեցին տեղական վայրի բույսերով,  
որ կարծրանա,  
և օգտագործեցին,  
որպես տամպոնի պնակ:

(«Հշխանուիի Անորմալ» հավաքածուից, 2000թ.  
թարգմանություն՝ Շ. Ավագյան)

## Վահե Ավետյան

### Թիֆլիս, իմ սե՞ր...

Թմրադեղի ակնհայտ ազդեցության տակ՝ մարդակեր մենքերի ոհմակն ինձ իրում է մի կողմ, մյուս ոհմակն Աշոտին՝ դեպի տաքսու առաջը կտրած մենքերի երկրորդ մեքենան:

- Թմրադեղերի տարածման դեմ պայքարի հատուկ գնդի հրամանատար Եսիմինչածն:

- Լավ պայքարած ես, երևում ա:

- Յա, ես դու խի՞ ես ըստն դուխով, արա... Կարող ա՞ մի քիչ քանդենք, խելոքնաս:

- Փորձի, տես: Բայց, որ երկար քանդես, կարող ա դեմ առնես:

- Դակումենտներդ տուր հըլը: Յա, ես ի՞նչ պասպորտ ա: Սուլիդի՞ն, հա՞: Ասում եմ, չե՞, ձենդ տաք տեղից ա գալիս:

- Վրացականից լա՞վն ա:

Չլսելու է տալիս:

- Ի՞նչ ես անում Թիֆլիսում:

Տաքսուց բարկացած դուրս է գալիս վարորդ պապին ու գոռում, անոթանք է տալիս մենքերին: Ի՞նչ կմտածեն վրացիների մասին:

Կողը կանգնած լակոտը շրիկացնում է բաց ձեռքով, ծեր մարդու քիթ ու բերանին, վայ բռնում, կոխում է ենու՝ մեքենան ու դրուզ շրիկոցով փակում: Ծերուկը հազիվ հասցնում է մատները փախցնել դռան արանքից:

- Ես էլ քեզ վրացական պասպորտ: Ի՞նչ ես անում Թիֆլիսում:

- Արտաքին գործերի նախարարի հրավերով եմ եկել:

- Յա, գենացվալեն, բա ինչի՞ չես ասում, որ մեր ախապոր մոտ ես եկել: Դեղից - մեղից ո՞նց եք, կարա՞ք մի քիչ գրև ամեր:

- Չե, դեղ-մեն չենք օգտագործում:

- Յա, կարտը կով քանկոնատից դոլար եք հանում ու չե՞ք դեղվում: Բա Սուլիդինում ի՞նչ կայֆեր եք անում: Ասս ապրելու տեղ չի, էլի:

- Բանկոնատն ի՞նչ գիտես: Յետևու՞մ եք մեզ:

- Յա, բա գիտես քաղաքը թիւն ենք գալիս, որ աշկերից ջոգե՞նք՝ որ հարիֆ ջերը փող կա: Լավ, գենացվալեն, լոմկա ա, հելանք: Բատոնն Եսիմինչաշվիլուն բարևի, ասա՝ իրա խաթր, հարց չկա...

\*\*\*

Փորձում են համոզել, որ դրանը վերցնի պապին:

- Տղա ջան, վաս բան մի մտածիր վրացիների մասին, փողն էլ չեմ վերցնելու, խնդրում եմ, մի անպատվիր ինձ, չեմ վերցնելու: Տղա ջան, դրանք վրացի չեին, իրեշ էին, իրեշ, խնդրում եմ, մի նեղացիր վրացիներից:

Գրկում, հաճրուրում եմ վրացի պապիս չսափրված, սիրելի, կմճռոտ ու ազնիվ այտը: Զորով խցկում են դրանը գրպանը:

- Յանգիստ, պապ ջան, գիտեմ: Դրանցից մեր մոտ էլ կան:

Սթրիոլմ

2004-03-25

### Դավայ, ես հելա, պակա...

Մտնում եմ Պապլավոկ, նայում եմ նատած կլրիս գլուխսներին: Վայ ձեր մաման քունե՞մ, ես ինչ բողի վաստակներ են նստած, արա՞՛: Խի՞ սրանք քար չեն տաշում, արա՞՛: Նայում են սաղ ինձ, նախանձում են - նայում են սև կոստիս, ծիծակ, դեմք քյառք կոշոներիս, ռեյբան ագնուներիս ու նախանձում են, ծեր մաման քունեմ, ես ինչ գյոր են, արա, սաղ, իլը սրանց գյորի հագուկապածը, արա, իլը սրանց, արա՞... ծեր ագառկա մերը քունեմ, ես ծեր դերասան գյոր մերը քունեմ:

Ես պուցը ոնց որ վասր չի, ի՞ր՝, արա՞՛, իլը դրա մարդուն, արա՞՛, գիդնագան կլնի, քու՞ աշկառնիկ մաման քունեմ...

Լավ էլ կծիծի ագառկեն... Տանեմ սրան էսօր: Ես ինչ ագառկա են, արա, սաղ... Պատերազմի ժամանակ ծակն էիք մտել սաղդ, արա՞՛, ծեր մերը քունեմ... Ի՞նձ էիք հարիֆի տեղ դրել, գիտեիք ի՞նձ եք քշելու, ծեր մաման քունեմ, պապայս վրեն 10000 կանաչ փող նստավ մինչև էսօր, արա՞՛, մերներդ քունելով են քթներիցդ բերելու:

Մտնում եմ զուգարան, հանում եմ կակայինս, քաշում եմ քիթս:

Են աշկառնիկ բողի տղեն կողքս ուզում ա մթան շոի, բայց նայում ա՝, նայում ա՝ բողի տղեն:

Կակրազ էկել ես, մամադ քունեմ: Յանում եմ մատուցես ու՝ բերնին, բերնին, բերնին... Արու՞նը, արու՞նը, ոնց ա ֆշշում, արա՞՛, ես ինչ կայֆ ա՝...

Զեռս ցավաց...

Մաուզեռը խրում են ենու, վառատնիկը հավքում են ձեռս ու՝ ունիտագին, ունիտագին, ունիտագին...

Արունլվիկ գլուխը թողում են ջարդուխուրդ ունիտագի մեջ, զուրը քաշում են...

18

Ուխա՞յ, ես ինչ կայֆ օր ա էսօր, արա՞...  
Լվացվում եմ, շորերս դզում, դուս եմ գալի զալ:  
Սադ գլուխները կոխել են ոռները, մթամ չեն լսել,  
ձեր ազառկա...

Կայնած, ծանդր, նայըմ եմ, դեմքիս նայող չկա: Նայըմ եմ մուզիկանտներին, որ ջոգեն, որ զյումրվա տրնգու վախտն ա: Պապիրոս եմ վառում, սկսում ա նեզրական տղնգին:

Դավայ, ես հելա..., պակա...

Սթրիոլ  
2004-03-25  
o(\*L\*)o

## Ուի գենետիկա

- Տատ, թուրքերը մեզ ջարդել ե՞ն:  
- Հա, թաղեմ դրանց ազիզը, մինչև վերջին մարդը պետք է ջարդել դրանց: Երկու միլիոն հայի միս են կերել մարդակերները:  
- Բա ինչո՞ւ էին հայերը կոտորվում: Թուրք չէր մեռնու՞ն:  
- Քիչ էին մեռնում, թաղեմ դրանց ազիզը:  
- Տատ, դու քո աչքով ջարդ տեսե՞լ ես:  
- Չե, բալա ջան: Մեր գերդաստանը շուտ դուրս եկավ Մուշից, հասրինք Տաշխալա գալ:  
- Բա ո՞նց եղավ, որ շուտ դուրս եկաք: Ինչո՞ւ մյուսները դուրս չեկան:  
- Բալա ջան, մեր ցեղի տղամարդիկ ծուռ էին: Լսեցին ջարդերի մասին, հրավիրեցին գյուտ եկած թուրքերի ջոկատը խնջույքի: Զինվորների համար մարագում սեղան գցեցին, սպայի համար՝ տանը: Մինչև Խեցն սպային տանը խեղդում էր, Զուրաք ամին ու Արամը եղանակերը դեմ տվին մարագի դրանն ու վառեցին: Խեցն սպայի դիակը հետո գցեց ցորենի հորն ու ասեց. «Ճժեր, շոեք, քաքեք վրեն ու թաղեք»: Այդ գիշեր ամբողջ գյուղով դուրս եկանք:

- Ելի՞ էր մարդասպաններին ես իիշել, այ կնիկ:  
- Մարդասպան են, մարդասպան չեն, 37 թվին մեր գյուղից ոչ մեկի չտարան: Զեր ամբողջ գեղին իրար ծախտեց, մարդ չմնաց:

Մի ձեռքը պիժամայի գրաբանում, մյուսով ճանճասպանը աջ ու ձախ ճլբտացնելով, ուրախ-զվարք շվշպացնելով, հեռանում է բոլշիկ պապիկս բեմից:

Ես շվարած մտածում եմ: Արա, ես ի՞նչ ոռի, մարդասպանների ու ծախողների գենետիկա ունեմ:

## 10 դոլար տուր

- 10 դոլար տուր, ծծեմ:

Կյանքում նման բան չէի լսել: Ապշեցի:

Այս աղջկն առանց քաշվելու, հակիրծ ծևակերպում է ուզածն ու արդեն զարմանքի նշաններ է ցոյց տալիս՝ հավանաբար բթությանս պատճառով: Տեսր հաստատ ապուշի է, որովհետև հենց այդպիսի վիճակում եմ:

- Բա ի՞նչ ես ուզում: Շուտ ասա: Սոված եմ:

- Ջենց սովածանում ես, ծծո՞ւմ ես:

- Հաճախ: Այստեղ ով էլ սովածանում է, ծծում է: Սա Բրայթոն Բիչն է, լսե՞լ ես: Եթե կարծում ես, որ դու չես ծծում, սխալվում ես: Ոզո՞ւմ ես, թե՞ չէ: Ի՞նչ ես տասը դոլարի համար զահինս տանում: Սոված եմ: Հասկանու՞մ ես ինչ է սոված լինելը:

Համոզված է, որ չեմ հասկանում: Հանկարծ կրահեցի, որ գիշերվա հազարին, Բրայթոն Բիչի ծակերում թափառելու համար շատ լավ եմ հազնված:

- Լսի, չեմ ուզում ծծես, բայց երեսուն դոլար ունեմ, կեսը կտամ:

Ապշեց: Իմ նման ինչ-որ բանի վրա կյանքում առաջին անգամ զարմացավ:

- Ծի՞շտ ես ասում: Լու՞րջ: Ինձ տիած չէ, լուրջ, վեցս չէ: Լավ կլինի քեզ, խոստանում եմ: Կատակ չե՞ս անում, իսկապես կտա՞ս:

- Հա, կտամ, բայց մի հատ քսանդուարանց է, երկու հատ՝ իինց: Մանրել կարո՞՞ղ ենք ինչ-որ տեղ:

- Ուզում ես՝ քսան տուր: Չե, չէ, կատակ եմ անում, արի զնանք, մի տեղ գիտեմ: Սոված չե՞ս: Որտեղի՞ց ես եկել: Անգլերենի եկրոպական է: Եկրոպայի՞ց ես եկել: Անունդ ի՞նչ է:

- Բաղալի վի:

- Ինչ դժվար անում է:

Տեսնես, որ ասեի՝ Վահե է, ավելի հեշտ կլինե՞ր:

\*\*\*

Ուտում ենք: Յնդիկ խոհարար դժգոհ մրթմրթում է քթի տակ՝ պոռնիկին հետս ներս բերելու համար:

- Ի՞նչ բարի մարդ ես:

- Չես կարող վստահ լինել:

- Բայց դու ինձ կերակրեցիր:

- Ջետո ի՞նչ: Ասում եմ՝ Աստված է կերակրում մարդկանց, երբ խնդրում են:

- Ու՞ր էր բա երեկ, մյուս օրը:

- Ո՞վ:

- Աստված: Այսօր տեսար ինքր, փողոցներում աղերսում էի, որ ծծելու համար տաս դոլար տան:

- Փորձիր ծծելու փոխարեն հաց աղերսել:
- Մուրացկանություն անե՞մ:
- Զգիտեմ: Դու ես որոշում: Պոռճկութունն ավելի լավ է գուցեն, չգիտեմ: Դու կիմանաս:
- Ուսում ենք լուռ:
  - Ինչո՞վ ես զբաղված:
  - Ուսում են:
  - Չե, ընդհամապես, կյանքում:
  - Ոչնչով: Գործազուրկ են:
- Կասկածանքով վեր ու վար նայեց նորից հագուստիս:
- Վաղու՞ց ես գործազուրկ:
- Այսօրվանից: Մի չորս ժամ առաջ պարզվեց:
- Ցավում են:
- Ես՝ ոչ:
- Տարօրինակ մարդ ես:
- Գիտեմ:
- Ինչո՞վ էիր զբաղվում: Ինչու՞ հեռացրին աշխատանքից:
- Քաղաքականությամբ: Ինքս որոշեցի հեռանալ:
- Ինչո՞ւ:
- Հոգնեցի անընդհատ զգվելի մարդ տեսնելուց:
- Այսօր անտանելի զգվանք են ապրել, բավական է: Ել չեն ոինանում:
- Կշտացած աղջիկը ժառանգացած աղջիկը:
- Ինձնի՞ց էլ զգվելի: Տաս դոլարով ծծողից էլ զգվելի՞:
- Ի՞նչ ասեմ, չգիտեմ: Որ ասեմ՝ այսօրվա հանդիպածն մարդկանց հետ համեմատած ինքը սուրբ է, կիավատա՞։ Ղմվար: Ես աղջիկը օրվա հացի համար է ծծում, քաղաքական այրերն ինչի՞՝ հայրենիքի՞։ Լոռում են:

- Որտե՞ղ ես ապրում:
- Մթորիոլմում:
- Այստեղ՝ Նյու Յորքում նկատի ունեմ:
- Ոչ մի տեղ այլևս: Մի 3-4 ժամից թունում են:
- Բա ի՞նչ ես ամելու: Գործ կգտնե՞ս: Լսի, դու դրամ ունե՞ս:
- Ճա: Ճաշիվը որ փակենք, մի տասը դոլար կմնա: Կվիսենք:
- Թերահավատորեն նայեց, մեկ էլ կարծես հասկացավ ամբողջ խորությունը որի, որի մեջ նստած եմ իինա: - Լսի, դու լու՞ր ես խոսում: Տեսնում են, որ լուրջ ես: Ես մարդ շատ եմ տեսնում: Զգում եմ, որ ճիշտ ես ասում: Լսի, նստի այստեղ, տեղ չզնաս, ես մի երկու ժամում մի 50-60 դոլար կաշխատեմ: OK?: Սպասի, շուտ կզամ:
- Յանկարծակի գլխումս ծագած միտքը խելագարեցնում է. ինձ համար անհանգստացող միակ մարդը իինա Բրայթոն Բիչում տասը դոլարով ծծող աղջիկն է: Յինա ուզում է մի 5-6 հոգու ծծել, որ ինձ օգնի: Միրսու սկսում է մղկտալ այս վտիտ արարածի նկատմամբ երախտագիտության ու սիրո խեղբող, խառնաշփոք զգացումից:

- Յաաա, ի՞նչ եղավ քեզ: Ի՞նչ է կատարվում քեզ հետ: Ի՞նչ է այսօր քեզ հետ պատահել:

Գրկում է գլուխս երկու ծեռքով: Ուզում են հայացը փախցնել, որ խայտառակ չլինեն: Չեմ հասցնում: Երեսս հազիկ խրում եմ երկու անուշահոտ ստիմքների մեջ: Մղկտում եմ: Ինչքան երկար եմ սպասել էս արցունքներիս: Տարիներ շարունակ: Ու իինա հեղեղում եմ նրանցով Բրայթոն Բիչում փողոցային պոռնիկի կուրծքը: Արցունքի երկու խոշոր, տաք կաթիլ ընկավ երեսիս:

20

## ծովինար

([www.bnagir.am/?go=readers&r\\_work=395](http://www.bnagir.am/?go=readers&r_work=395))

## ռեժիմ

([http://www.bnagir.am/?go=readers&r\\_work=395](http://www.bnagir.am/?go=readers&r_work=395))

առավոտյան արթնանալ  
այն երազից  
որտեղ  
սերս  
հերթական անգամ  
կողքովս ացավ  
Ես՝ նրա հետևկից  
ու  
ափսոս որ  
չհաշորի մի բան էլ ասել  
լավ հաջորդ անգամ  
հաջորդ երազում

օդը պղտորել  
առաջին պատահած  
ծխախոտի ծխով  
փչացնել երեխաների  
առողջությունը

մտքում հայինյել  
որ  
սուրճ դնող չի եղել ու  
տաք ջուր էլ չկա

միանալ  
ասեղը փչացած ձայնարկիչի պես  
ու սկավառակի պես  
ավելի փչանալ

հիշել  
որ մեկ է ոչինչ չես փոխի  
ու մեղեղին փոխել:

վերջապես հաշտվել  
որ պետք է առաջին սուրճդ խմես  
շորերդ քաման հագնես  
մազերդ չմոռանաս սանրես  
գիրքը վերցնես որ տաս տիրոջը  
կոշիկերդ մաքրես, ահ, լավ վաղը,  
ու...

դոները չխառնելով դուրս թռչել տնից:

մեքենայի տակ չընկնելով  
քանի որ  
ո՞ր խելոք մարդն է առավոտ կանուխ կյանքի հետ  
խաղում

հասնել այն կետին  
ուր այնքան սպասված մարշրուտնին  
դուրս բացի ու որւ  
հիշես  
որ մարդ մարդու բարեկամ է  
ընկեր ու հենարան

ընթացքում՝  
զգայարաններիդ սանդղակը  
հասցի թռթռալ  
-ից +ի միջակայքերում՝  
“Ուսւական Ռադիո”

իսկ այն աղջի՞կը  
իսկական փերի  
ա՝ ն երանի թե  
իմ մազերն էլ  
ոսկի լինեին  
աչքերս կապույտ  
հասակ կակաչ  
կուրծքս անկրծկալ  
աչքերս անթաց

դրան չխկոցից  
որ չզարթնեի  
կմնայի  
նստած երազում՝  
փերի

տնից՝ տուն  
փողոցից՝ փողոց  
սրճարանից՝ սրճարան

(-Whenever you want.  
-Wherever you wish.  
-Anyhow I can.)

- Աշուտ, չես հասկանու՞մ:  
- Մի արա, Ալեն:  
- Ո՞նց ես, Էլենչիկ:  
- Բարև, ախաղերներ:

վերջապես  
ժամանակը  
քրքրվելու  
քայլայվելու  
քոռ ու փոշման մնալու  
քաղաքի տակը քերելու  
տակը նարգարիտներ  
գտնելու  
ու  
նարգարիտները  
գցելու  
բոլորի առաջ

\*\*\*

գիշերը՝  
երազում  
կկանգնացնեմ  
ավտորուսը  
կես-ճամփին  
ու կիշնեմ

Ես չեմ թողնի որ դու մեռնես

կիանգցնեմ  
ծխախոտը  
կողքի պատին  
ու ծակից՝  
կնայեմ ես աշխարհի  
անցուդարձին

Ես չեմ թողնի որ դու մեռնես

մի ոտք կիշնի  
գլխիս վրա  
ու կանցնի  
ուրախության  
իմ սահմանը

Ես չեմ թողնի որ դու մեռնես

\*\*\*

քո դիմացի մայթի աղջիկը  
քո կողքի սեղանի աղջիկը  
քո բաժակ առ բաժակ աղջիկը  
քո կաթիլ առ կաթիլ աղջիկը  
քո անընդհատ նույն աղջիկը  
քո միշտ ուրիշ աղջիկը  
քո կյանքից բռնված աղջիկը  
քո մահից բռնվող աղջիկը

## անվերնագիր

մի ականջով լսի ինձ  
ու մի աչքով ինձ նայի  
ինձ մի կոշիկ նվիրի  
ու մի մազդ էլ քեզ պահի  
ձվիդ թայն ինձ հերիք ա  
ու մի ծակը շալվարիդ  
ինձ իմ կյանքը հերիք ա  
որ նստեմ ու այն կարեմ  
ինձ մատնացույց արա մատով  
որն ամենաքիչն ես սիրում  
ու լցուր փսխուկի հոտով  
իմ ուղեղի ծալքերը  
մենակ ցավդ մի խնայի  
շռայլ եղի սեր իմ  
հոգուդ ճեղքը մի սվաղի  
եդ իմ եղեմն ա

\*\*\*

կվերցնեմ մի շիշ օղի  
հետը մի քիչ գեյթուն  
կողքը մի լիմոն  
ու կնստեմ  
մի  
կաֆեում:  
մենակ կլինեմ  
պատահական  
անցնողների հետ  
ոչ մի խանգարող բամ՝  
կենացդ խմելու:  
կենացդ կխմեն  
ես քաղաքի թթված դեմքերը  
որ անունդ լսելուց ավելի են թթվում  
ես քաղաքի պայծառ նտքերը  
որ առիթը բաց չեն թողնի  
մի բաժակ գցելու  
մի երկու լրիվ անձանոթ նարդ  
ու քեզ բալետ անող երկու  
ծանոթ մարդ  
եղանակը լավ  
ամիսը մայիս  
օրը խաղաղ  
հոգիս հանգիստ  
էլ ինչ ասեմ  
քո կենացին

# www.բնագիր.am

22

սերը

Երևանի կտուրներից  
բացվող  
տեսարան

սերը  
մերկ կուրծքս  
ծածկող  
լսարան

սերը  
հաճախարանի  
միջանցք որտեղ կարելի է  
տեսնել

սերը  
բազրիք  
որտեղից կարելի է  
ընկնել

սերը  
մի քաշալ գլուխ  
Երևանի  
փողոցներում

սերը  
մի շորանոց  
աղջիկ առավոտ-  
գիշերներում

սերը

բենում չերգված  
երգ  
պատահական  
հղիություն

սերը  
"անվերնագիր"  
բանաստեղծություն

սերը  
յոթ տարվա  
սպասում  
դրան հետևում

ու երեսունյոթ՝  
կյանքի  
եթերում

սերը  
մի նամակ  
անվերնագիր

սերը  
մի նամակ  
"սիկտիր"

Գոհար Նիկողոսյան

## Ինքնասիրություն

23

...Կինը, որ միակին էր փնտրում՝ նրան հավիտենապես սիրելու, իր կյանքի օրը անճահության վերածելու և լինելու համար, ինքն իր վրա կանգ առավ: Ակնադրեց-աչառեց սեփական զիստերը, շոշափեց փոքր կրծքերը հաստատող գույգ խոշոր պտուկները ու, ասես համոզվելու համար, որ ամեն բան իր տեղում է, տենչաց ինքը իրեն, ծանր հոգոցներով և սրտաճնլիկ ինքնարհանարհանքով անկողին ուղեկցվեց:

Միշտ էլ... ինչ իիշում է, ինքն է իրեն հասկանում, ինքն իրեն պաշտպանում, ինքը իրեն է պաշտում՝ աղոթում, իրեն-իրեն հուսավառվում, ինքն իրեն է լուսավորվում:

Համոզո՞ւմ, գուրգուրո՞ւմ, արտասվո՞ւմ է... Խաղաղեցնում իրեն, ու իրեն-իրեն էլ խաղաղվում է...

Ի՞նչն է, արդյոք, խանգարում՝ զգացմունքային աշխարհից թոքափելով տեղափոխվել ներաշխարհ, հասնել սեփական մարմին՝ ամենամոտիկ վայրը, կայարան-տաճարը՝ համայն աշխարհում:

Ինքնարավարարվել:

Անհապաղ:

Ու...

Քանի դեռ...

Ինքը միայնակ է ու քանի դեռ ինքն է իր տղամարդն ու

քանի դեռ

Վիվալդու տարվա չորս եղանակը չի փոխարինվել Մոցարտ-էքստագով,

ու

քանի դեռ

իր ներսում, ասես՝ մի մարդաբույր հնոցում չի բարախել, դեռևս, որպես սիրտ, Բախը,

ու

քանի դեռ

չեն բախվել ժամանակի գույգ սլաքները՝ գույգ գազանների բախման խաչմերուկում,

ու քանի դեռ

իրարու չեն հանդիպել՝ Առաջինն ու Վերջինը,

ժամանակն է,

Եվ՝ կարո՞ղ է,

և պատրաստ է,

ունակ-ընդունակ է ընդվզել Երկնքի դեմ, ջղաձգվել,

ինքնասիրաբար,

հերկինս,

հենց՝ այն ուղղությամբ, ուրկից հեշտասիրաբար,

արցունքից բացի ուրիշ ոչինչ չթօշեց Սիրո չոլերը... Ոչինչը թթեց Սիրո չոլերը:

Սիւնույն է՝ ամենայնինչ նույնական է՝ նույնասիրաբար,

և սա կիրք չէ,

օ,

ոչ,

որին խաչվում ես երբեմ, գրգիռ առ գրգիռ, կետ առ կետ, հառաչից հառաչ:

Սա պարտականություն է:

Երկնքի՝ Վերև-ներքևին պարտադրվող-հերթական խաչ,

Բայց...

Օրե՛ր կանցնեն,

և,

օրեր հետո,

մարկեսյան մենացավով

24

ամենաամենաամենասովորական օնանիզմով հիվանդ Կնոջ թկին, հաստատ որ հաստատ, կչոքի մի մոխրագույն և կան շիկակարմիր

և կան սեփսև

և կան ճնշիցերմակ

Կատու:

Ործ, որ ծագի համաճարակով չտառապի, այլև և՝ մկնակերությամբ:

Այո՛: Նա բերման է Ենթարկվել ոչ թե կնոջ համար,

այլ՝ կրծողմերի...

Բայց,

մուկ թողած,

մուկ լքած,

մուկ մոռացած,

հավերժ ճկուն կատուն

տաք-տաք լպսում է կնոջ արցունքահամ աչքերը՝ նրա օրգազմից քիչ առաջ, կշտանում-հագենում, հագենում-կշտանում,

արցունքների հետքով իջնում-իջնում-իջնում,

մինչ շուրթեր է հասնում,

մի կարիլի հետքով՝ մինչև դունչ, միակ երկարընթաց կարիլի հետքով էլ՝ մինչև պարանոց...

Այս անգամ յնքնաբավարարումն ուշանում է, փոխարինելու են շտապում արցունքները...

Երկնքի անհուն ուղղությամբ խեղովոր ու Երկիր ուղղությամբ խեղված Կնոջ՝ ինձ, նա՝ կատուն, անվերջորեն ու անընդմեջ կխանգարի...

Կխափանի՝ վախը,

Կխանգարի՝ հաչի սեփականաշնորհ պարտականությունը՝ իր երրորդական, նորընտիր գալուստով,

Յոգեգալուստով:

Փրչոտը կանի ամեն բան, որ խափանվի կնոջ՝ վերմարդկային պարտականությունը:

Շայռառատում է Կինը՝ կատվին, ջախիսխ-ջախիսխում, մկան չափ ու պատառ ու պես ընդիատում, մկնափայ անում, իսկ կատուն,

սկորեն

սահուն է կնոջ մարմինն իվեր, Չարացածին իր բարությամբ գազագացնելու:

Տմբումբացող գույգ ձկեր՝ երկճյուղ մորութի տեղակ:

Նա՝ կատուն, աչքառել է կնոջը, նա՝ Կինը, նպատակ է դարձել կատվի համար:

Եվ սա չէր, հաստատ, թռիչքը, սա չէր երջանկությունը, բայց սա է, որ կա, Մենությունը մկնագույն...

Նաբեթ Մուրադյան

25

## Կույս՝ Ժամանակ

Քանի անգամ եմ փորձել մոտենալ քեզ.

քեզ ունենալու, քոնը լինելու,

քո մեջ

մենավոր գիշերս կիսելու և մեկ ամելու նորից:

Քանի անգամ՝ սիրաշահելով,

թավշե խոսքերս իրու աղավնի ու որսանգդ

մտերմության երկինքներն առաքելով,

գիճի, գիշապտույտ սեթնեթանք,-

և քանի անգամ բռնությամբ...

Մատներդ եմ շոյել, համբուրել՝

հատիկ-հատիկ համբույսներով բարձրացել - թմերդ ի վեր,

ուսերիդ վրա ու պարանոցիդ

շարել դրոշմները պիրկ համբույրներիս,

շուրթերովս հասել աչքերիդ,

դիպել բլթակներին ականջներիդ, ներշնչել գոլն ու ջերմությունը կրօիս, -

գրկել,

գրկել կոպիտ ու վայրենի, մեջքդ ճկելով,

մեջքդ փշրելով,-

ինչպես ակամա ժումկալ,

համբույր չիմացող հրեշ. շուրթերիցդ արյուն հանելով,

մազմզոտ կզակս քնքուշ մաշկիդ քսելով...

Ավազակախմբի ննան սրարշավ

դեափ ստորոտներդ եմ սուրացել բարեբեր,

հասել կրծքիդ

ու - իբրև հաղթական տոնախմբության գագաթ -

դրասանգմներն համբույրներիս կախել ստիճնքներիդ շուրջ:

Զիստերդ ու կոնքերդ եմ ճանկել, ինչպես

սովյալը՝ հաց, աղետյալը՝ փրկության ծեղ, արարիչը՝ կավ,-

սեր ու գութ նախ մարմնիդ վրա, ապա և հոգումդ աճեցնելու հույսով...

Իսկ երբ չի ջերմացել գետինը, չի կայացել փթթունն համատարած,

ճառագայթ ու ջանք մնացել են ցրտի մեջ ու անպատասխան,

անանոթ ու լիրը լացել - ոռնացել եմ,-

վերջին միջոցն աղետաբեր խորշակներից փոխ առած...

Ժամանակ՝ աննվաճ կույս,

կրքիս վարարմունքին մեկ անգամ չէ, որ քեզ

կին եմ համարել –

դիմադրելդ՝ լոկ խաղ,

ու հանձնվելդ անխուսափելի կարծելով,-

ու մնացել ցրտի մեջ՝ անապատան -

ուռած ունգերով, ցիրուցան մարմնով,

շաղված տեսողությամբ, արնակալած աչքերով կիսախուփ:

Լույսն ու առավոտն հայիսնելով՝

Ճանապարհ եմ գցել քեզ,

և հասկացել ի վերջո,

որ չպիտի մնամ քո մեջ,

երբ սերդ ծփա ափեափ, երբ սերդ գտնի անարժանին:

Օ՛, ինձ հայտնի է իմ բաժինն այսուհետ՝

26

սև ու գեղ մղջավանջ իբրու,  
իբրև չար գուշակության ի կատար,-  
խենք, անհարիր, իհնարության չափ անկարող -  
քնծիծաղ քթանցքներից թռած,  
բայց և մնայուն ու կոկծալի,  
թե մինչև այժմ կույս էիր, ժամանակ:

## Տանյա Յովհաննիսյանի չգրած բանաստեղծությունը

Աշխարհում չի թառամում և ոչ մի ծաղիկ.  
ինձ զսպաշապիկ հազրեցին,  
որպեսզի չսգամ  
զլխատված ծաղիկների,  
վիճեցրած սերերի,  
գործերի համար ազնիվ, կիսատ ու անկատար...  
Ածում է խոտը,  
երկինքը մթնում է, անձրևում,  
ապա պարզում է...

Դուք, կարգուկանոնով պատմեշվածներ,  
որպեների մեջ ծրարված-բարուրվածներ,  
յոթն անգամ յոթ չափած ու միայն մեկ կտրածներ,  
ի՞նչ պիտի լսեիք -  
ծլելու պատրաստ մարզագետնի փսխոցից...

Աշխարհում չի քարանում և ոչ մի սեր.  
չար խոսքերը սիրում՝ ինչ -  
խուսուտ կտան,  
կամաչեցնեն,  
կծիծաղնեն ընդամենը...

Տարեք հեռու այդ լծակն ու այդ նժարները,-  
ի ծնե հավասարակշռվածներ,  
մի բարդվեցեք կողքիս,  
մի մրցեք հետս.  
Ես - կինս  
լոկ մի տղամարդ ու մի տիրակալ ունեմ՝  
ծոծրակիս ծառացած սարսափը,  
որ հենց լրություն է լրության մեջ,  
և մոլթ է մթան մեջ...

Ու որքան էլ սիրեմ,  
միևնույն է, չեմ հավատալու  
կակդացրած արցունքներին կեղծավոր մոմերի,  
որովհետև  
արդար է սիրտը միայն,  
որ կծկվում է  
անորսալի մի պահի՝  
հետո թաղվելու,  
հետո զլխովին տրվելու համար  
տարուբերումին

ինքնամոռաց:

ապրիլ, 88

(Սեծագույն սիրով ու փայփայանքով պահում եմ այս բանաստեղծության՝ Տանյայի ծեռքով մեքենագրած առաջին օրինակը...)\*

\* Գրող Տանյա Յովհաննիսյանը զոհվել է Գյումրիում 07.12.88 թ. (խմբ.):

## Ո Տ Ն Զ Գ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

27

Եներմակ թուղթ՝ կույս ու չկոխոտված ճանապարհ,-  
ահա քայլ եմ գցելու, և բարձրանալու է փոշին,  
անեղծ երեսդ մի ակնթարթում լցվելու է խզբանքով,  
ինչ-ինչ որոճումներով՝ ոչ քեզ, ոչ ուրիշներին պիտանի...

Իմ ճերմակ, ինչ չապրված ապառնի,  
Ես ոտ եմ ելել երեսդ տրորելու  
և այնքան պիտի երջանիկ լինեմ,  
որքան շատ ցավ պատճառեն քեզ,  
որքան խորը դրոշնվեն հետքերս ճակատիդ.  
և ինչն եմ թողնելու,  
տե՛ս, թե ինչով եմ ուզում խաթարել փայլատ անդորրդ -  
ինչ հավակնությամբ.  
«Իմացե՛ք, ճանաչեցե՛ք,  
այստեղով անցել եմ ես...  
Ես,  
Ես,  
Ես...»,  
ու էլի հազար անգամ...  
հազարապատկվող պարձանքով. -

Ամբողջ մի աշխարհ՝  
խոտերից, քարերից ու աստղերից կազմված,  
անտրտունջ իր մոռացումն է հյուսում,  
մինչդեռ մեկն, ահա, չփիտես որ ցավից,  
ինչ մղումնով,  
անբացատրելի ինչ սիրազեղմանը  
բացարձակ մաքրության վիա է թողնելու հուտն իր քրտինքի  
ու կոշիկների ցեխը,  
օրվա իր մաղձն է թափելու,  
և ոթելու է հայինյանքը կրծքավանդակում կրած,  
իր տափակ ուղեղի արգասիքներն է ցնկնելու  
ցողաթաթախ քո անարատության վրա...

Թուղթ,  
իմ ճերմակ, սրափուն, իմ մանկության անկողին,  
բոլորիցս մեղքն էլի դու ես.  
քեզ պիտի սգալով փառարանել,  
որ այս չանգրտոցն էլ կրեցիր, ու  
դեմքդ տողատակում էլի ճերմակ մնաց: -  
Անմեղ կալանավորի ննան՝ ճաղաշարի ետևից  
հանիրավի մրոտված անունդ ես ի ցույց դնում աշխարհին,  
ինեղծ մաքրություն,  
քո մեջ լուծվելով մի ժամանակ կարգավորվել է  
Սիեզերքն անգամ,  
իսկ իիմա - հարբած բաժակաճառելուն են փորձուն  
արցունքներդ սրբել,  
և տխմար մի խոստովանություն  
դարձյալ սեր է ներբողում քեզ՝  
անտեղի մի ցավով դաջվելով մաշկիդ -  
նորեն...

#### Արշիլ Գորկու նամակները՝ Dr. F. G.-ի հավաքածուից

Սիրելի Վարդուշ,  
ավելի ու ավելի ակնհայտ է դաշնում Եղիպուսի բարդույթի կենտրոնական դերը՝ սեռական հասունացման շրջանում: Դետագայում այն զոհվում է կամ, ինչպես մենք ենք ասում, ենթարկվում ճնշման: Վերլուծությունը կարծես թե սովորեցնում է՝ Եղիպի կոմալեքսը կործանվում է հիվանդագին հիասքափության հետևանքով: Փոքրիկ աղջիկը, որն իրեն համարում էր հոր կողմից սիրված և ընտրված, պետք է մի անգամ վերապիր խիստ պատիժ հոր կողմից և իրեն զգա երկնքից ներքև շարտված: Փոքրիկ տղան, որն իր մորը համարում էր իր սեփականությունը, մի օր իմանում է, որ նայրը իր բաժին սերը տալիս է նոր եկվորին:

Մտորումները խորացնում են այս դրվագների արժեքը՝ ընդգծելով, որ նման տանջալից բացահայտումները, որքան էլ հակադրվեն կոմալեքսին, այնուամենայնիվ, անխուսափելի են: Նույնիսկ այն դեպքում երբ թվում է, թե առանձնահատուկ ոչինչ տեղի չի ունեցել:

Սպասված բավարարության բացակայությունը, ցանկալի տևական մերժումը վերջիվերջո հասցնում են նրան, որ փոքրիկ սիրահարը հրաժարվում է իր անհույս հակածությունից: Այսպիսով, Եղիպի կոմալեքսը զոհվում է իր ներքին անհնարինության պատճառով:

Արշիլ Գորկի

Սիրելի Վարդուշ,  
Եղիպի կոմալեքսը առաջին էտապն է, որը մենք հեշտությամբ հայտնաբերում ենք տղա երեխաների մոտ: Դա հեշտ հասկանալի է, որովհետև տղա երեխան պահպանում է կապվածությունը այն նույն օրենտին, որին ավելի վաղ, կուրծք ուտելու շրջանում, արդեն կապված էր: Այն փաստը, որ տղա երեխան հորը համարում է մրցակից և ցանկանում է գրավել նրա տեղը, նույնպես ենում է բնական հարաբերակցությունից: Մենք այլ տեղ ես արդեն ասել էի, որ տղայի Եղիպյան դիրքորոշումը համընկնում է ֆալոսյան էտապին և ոչնչանում է ամորձատման վախի շնորհիվ: Այս իրավիճակը հասկանալու դժվարությունն այն է, որ տղա երեխայի Եղիպյան կոմալեքսն ունի երկակի դիրքորոշում՝ ակտիվ և պասիվ (բիսեքսուալ էությանը համապատասխան):

Այլ դրվագներ այդ նախնական շրջանից, որ իմ կարծիքով ոչ մի դեպքում անտեսել հնարավոր չէ, սեռական օրգանների հետ կատարվող մասսուրբացիոն մանիպուլացիաներն են: Վաղ մանկության շրջանի օնանիզմը, ավելի կամ պակաս խստությամբ, արգելվում է

դաստիարակների կողմից՝ ակտիվացնելով ամորձատման կոմպլեքսը: Մենք ենթադրում ենք, որ օնանիզմը կապված է Եղիպի կոմպլեքսի հետ: Յավանական է թվում, որ սկզբից այն հայտնվում է ինքնարերաբար: Յարդեր են առաջանում նաև կապված գիշերային միջարողության հետ: Մենք գերադասում ենք պարզ սինթեզը, ըստ որի՝ գիշերային միջարողությունը օնանիզմի հետևանք է, իսկ նրա արգելումը տղա երեխայի կողմից գնահատվում է որպես ամորձատման սպառնալիք:

Արշիլ Գորկի

Սիրելի Վարդուշ,  
փոքրիկ աղջկա Եղիպյան կոմպլեքսն ավելի խորը պրոբլեմ է իրենից ներկայացնում, քան՝ տղաներինը: Սկզբնական շրջանում մայրը երկուսի համար էլ հանդիսանում է առաջին օրյեկտը: Մենք չպետք է զարմանանք, որ տղան պահպանում է այդ օրյեկտը նաև Եղիպի կոմպլեքսի ժամանակ: Բայց ի՞նչ կերպ է աղջիկը հրաժարվում մորից և իբրև օրյեկտ ընտրում հորը: Այս հարցը լուծելու ժամանակ են հնարավորություն ունեցած պարզաբանելու որոշակի դրույթներ, որոնք կարող են լույս սփռել աղջիկների մեջ ընթացող Եղիպյան հարաբերության նախապատմական շրջանի վրա:

Յուրաքանչյուր վերլուծաբան հնարավորություն է ունեցել ուսումնասիրել կանանց, որոնք հասուլ կիստենսիվությամբ և համառությամբ պահպանում էին իրենց կապվածությունը հոր հետ և ցանկանում երեխա ունենալ նրանից: Ցանկություն, որի մեջ այդ կապվածությունը ծեռք էր բերում իր բարձրագույն դրսևորումը: Կարելի է ամենայն հիմնավորությամբ ենթադրել, որ այդ ֆանտաստիկ ցանկությունը հանդիսանում է նաև նրանց մանկական օնանիզմի շարժիչ ուժը: Մանրամասն վերլուծությունը ցուցադրում է, որ աղջիկների Եղիպյան կոմպլեքսն ունի բավական երկարատև նախապատմական շրջան և հանդիսանում է ինչ-որ իմաստով երկրորդական կառույց:

Աղջիկ երեխան ինչ-որ պահից սկսած հայտնաբերում է իր սեռական օրգանը. մենք հիմքեր չունենք այդ առաջին ծեռնաշարժությունը դիտարկել իբրև հոգեբանական բովանդակություն ունեցող գործողություն: Սակայն փոքրիկ աղջկա ֆալոսյան շրջանի սկիզբը կապված չէ սկզբնական օրյեկտի հետ: Նա պատահականորեն հայտնաբերում է հեշտ նկատելի պեճիսը իր հասկակցի կամ եղբոր մարմնին, համեմատում է այն իր փոքր և թաքնված սեռական օրգանի հետ և ունենում նախանձի գգացում պեճիսի հանդեա:

Դետաքրիդ է այն հակադիր պահվածքը, որ ունենում են տարբեր սեռի երեխաները նման իրավիճակում: Երբ փոքրիկ տղան առաջին անգամ տեսնում է աղջկա սեռական օրգանները, իրեն պահում է անվստահ, նախ և առաջ նա քիչ հետաքրքրություն է ցուցաբերում, նա

ոչինչ չի տեսնում կամ մերժում է, թե ինչ-որ բան տեսել է: Տպավորությունն այնքան թույլ է, որ նա ապացույցներ է փնտրում, որոնք իր տեսածը իր ակնկալիքի հետ կոնյունացնեն: Միայն ավելի ուշ, երբ նրա վրա սկսում է ազդել ամորթատնան վտանգը, այդ ուսումնասիրությունները դառնում են բազմանշանակ: Դիշողությունը կամ նոր ուսումնասիրությունը նրա մեջ առաջացնում են ահարենկող ազդեցություն և ստիպում հավատալ վտանգի իրական լինելուն, որին մինչ այդ նա վերաբերվում էր ծաղրանքով: Այս հարաբերություններից հնարավոր է երկու ռեակցիա կամ միաժամանակ երկուսն է՝ խառնված այլ պահերի և տպավորությունների հետ, որոնք երկար ժամանակ կանխորշում են նրա վերաբերնունքը կանաց հանդեպ: Առաջանում է վախ այլանդակված էակի հանդեպ կամ արհամարհական վերաբերնունք՝ առաջացած լիարժեքության գգացողությունից: Սակայն այս զարգացումները կատարվում են ապագայում, թեպետև՝ ոչ շատ հեռու ապագայում: Լրիվ այլ ձև է իրեն պահում աղջիկ երեխան: Նրա մեջ ակնթարթային արագությամբ ծնվում են դատողությունը և որոշումը, նա տեսնում է պենիսը, հասկանում է, որ ինքն այն չունի և ուզում է ունենալ: Այսուել ճյուղավորվում է կանաց հատուկ արական կոնալեքսը, որը հաճախ մեծ խնդիրներ է առաջացնում կանացիության դաստիարակության առումով: Դույսը՝ երբեմն ծեռք բերել պենիս և հավասարվել տղամարդկանց, պահպանվում է շատ երկար տարիների ընթացքում՝ պատճառ հանդիսանալով տարօրինակ, հաճախ անհասկանալի արաքների համար: Կամ սկսվում է մի գործընթաց, որը ես անվանում եմ «Ժխտում». այս գործընթացը մանկական հոգու մեջ հանդիպում է ոչ շատ հազվադեպ և, ամենայն հավանականությամբ, իրենից մեծ վտանգ չի ներկայացնում, բայց մեծահասակի դեպքում այն կնշանակեր փսխիտողի սկիզբը: Աղջիկ երեխան հրաժարվում է ընդունել իր ամորթատված լինելու «փաստը», պահպանում է այն համոզունքը, որ ինքն ունի պենիս, և սկսում է իրեն դրսկորել այնպես, կարծես ինքը տղա է: Պենիսի նկատմամբ նախանձի հոգեբանական հետևանքները, եթե չեն տարածվում արական կոնալեքսի ռեակտիվ գոյացումների մեջ, շատ բազմազան են և բազմանշանակ: Կիմք, ընդունելով իր նարգիզական վերքի գոյությունը որպես սպի, զգում է իրեն թերարժեք այն բանից հետո, երբ հաղթահարում է «պենիսի բացակայությունը» իր անձնական պատիժը համարելու» համոզունքը, որովհետև հայտնաբերում է, որ դա համընդիանուր երևույթ է կանաց շրջանում, սկսում է կիսել տղամարդկանց արհամարդանքը կանաց նկատմամբ, որոնք այդքան կարևոր տեղում արատ ունեն, և շարունակում է հավասարվել տղամարդկանց՝ թեկուզ այդպիսի արժեքավորման միջոցով: Եթե անգամ նա ինքն իր հանդեպ չունի «պենիսի նկատմամբ նախանձի» զգացում, միևնույն է, այդ նա-

խանձը չի անհետանում և արտահայտվում է մի փոքր տեղաշարժված ձևով՝ խանդրության տեսքով: Անկասկած խանդր միայն կանաց չէ, որ հատուկ է, բայց ես համոզված եմ, որ կանաց հոգեկան աշխարհում ավելի մեծ դեր է խառում, քանի որ ստանում է շատ ավելի մեծ ամրություն՝ սնվելով պենիսի նկատմամբ նախանձի կոնալեքսի՝ արդեն ճնշված աղբյուրից: Դեռ ավելի վաղ, երբ ես կարող էի եգրակացություններ անել խանդրի կապակցությամբ, ես առանձնացրել էի աղջիկների շրջանում շատ հաճախ հանդիպող օնանիստական ֆանտազիայի առաջին էտապին վերաբերող փաստեր, որոնք անվանել էի՝ «Երեխային ծեծում են»: Այս ֆանտազիայի իմաստը հանգում է նրան, որ ծեծում են ուրիշ երեխայի, ում աղջիկը համարում է մրցակից և ում հանդեպ խանդրությունը ունի: Ամենայն հավանականությամբ սա հանդիսանում է ֆալոյան շրջանի նստվածք, յուրօրինակ կամակորություն: Երեխային ծեծում են, դա երեխան է, որին սիրում են, ըստ էության դա ոչ այլ ինչ է, քան՝ աղջկա սեռական օրգանը: Սա իր խորքային ընկալման մեջ մաստուրբացիայի փաստի ընդունումն է, որն սկսվում է ֆալոյան շրջանում և տևում է մինչև ավելի ուշ ժամանակաշրջաններ: Պենիսի նկատմամբ նախանձի երրորդ հետևանքը, ամենայն հավանականությամբ, լինում է այն, որ բուլանում է մոր հանդեպ նուրբ վերաբերնունքը: Կարելի է համոզվել, որ պենիսի բացակայության մեղավորը վերջիվերջո միշտ համարվում է մայրը, որը ծնել է երեխային՝ անհրաժեշտ պիտույքներից գուրկի: Մտքի պատմական ընթացքը հետևյալն է: արատը հայտնաբերելուց հետո առաջանում է խանդ ուրիշ երեխայի հանդեպ, որն էլ արիթ է հանդիսանում կապվածությունից ազատվելու համար: Սա համապատասխանում է այն ֆանտազիային, երբ ծեծվող երեխան հանդիսանում է մոր կողմից ավելի սիրված երեխան: Դա է պատճառը, որ կանայք ավելի ծանր են տանում մաստուրբացիան և ավելի հաճախ են պայքարում դրա դեմ, քան՝ տղամարդիկ:

**Արշիլ Գորկի**

### Սիրելի Վարդուշ,

ֆալոյան շրջանի վերլուծությունը ցույց է տալիս, որ պենիսի նկատմամբ նախանձի հայտնվելուց անմիջապես հետո աղջիկների մեջ սկսվում է հզոր դիմադրություն օնանիզմի դեմ, որը հնարավոր չէ բացատրել ընդամենը դաստիարակության աղդեցությամբ: Այդ մղումը ակնհայտորեն հանդիսանում է նախանշանը այն ճնշման, որը ժամանակի ընթացքում արական սեռականության մեջ նաև կոչնչացնի՝ տեղ բացելով կանացիության զարգացման համար: Դնարավոր է, որ այդ առաջին ընդիմությունը ավտորությամբ վերջնականացնեն չի հասնում իր նպատակին: Իմ կողմից վերլուծված դեպքում այդպես էր: Կոնֆլիկտը հետագայում շարունակվուն

30

է: Եվ այդ ժամանակ, և հետագայում աղջիկն անում է ամեն ինչ, որպեսզի ազատվի օնանիզմից: Կանանց սեռականության ուշ շրջանի որոշ արտահայտություններ անհասկանալի կմնան, եթե հաշվի չառնենք այս ծանրակշիռ դրդապատճառը: Ես չեմ կարող բացատրել փոքրիկ աղջկա այդօրինակ դիմադրությունը ֆալոսյան շրջանի օնանիզմին՝ առանց ենթադրելու, որ հաճույք պատճառող գործողությունը տառապեցնում է հետապնդող դրվագով: Կարիք չկա երկար վիճութել, դա հիասթափությունն է՝ առաջացած պենիսի հանդեպ նախանձից, հիշեցումը, որ այդ հարցում հնարավոր չէ համեմատվել տղամերի հետ և ավելի լավ կլիմի հրաժարվել նրանց հետ մրցակցության մեջ մտնելուց: Այսպիսով սեռի միջև անատոմիական տարբերությունը հայտնաբերելուց հետո փոքրիկ աղջիկը հրաժարվում է արականությունից ու արական օնանիզմից և ընտրում է նոր ճանապարհներ, որոնք նրան պետք է հասցնեն իգականության զարգացմանը:

Մինչև այժմ եղիայի կոմպլեքսի մասին չէինք խոսում, որովհետև մինչև այս պահը այն ոչ մի դեր չէր կատարում, սակայն այժմ աղջկա լիբիդոն նոր դիրք է գրավում: Նա հրաժարվում է պենիս ունենալու ցանկությունից, որպեսզի այն փոխարինի երեխա ունենալու ցանկությամբ, և այդ նպատակին հասնելու համար իրեն օրինակ ընտրում է հորը: Մայրը վերածվում է խանդի օրինակ, փոքրիկ աղջիկը վերածվում է կնոջ:

Սիա այն կարևոր բաները, որ անհրաժեշտ էր ասել, այժմ կանգ են առնում, որպեսզի մի ընդհանրական հայացք նետեմ արդյունքների վրա, որին մենք հասանք: Մենք ծանոթացանք աղջիկների եղիայան կոմպլեքսը նախապատճական շրջանին: Այն երկրորդային գոյություն է: Եղիայի կոմպլեքսի և ամործատնան կոմպլեքսի հարաբերության մեջ տղամերի և աղջիկների միջև գոյություն ունի արմատական տարբերություն: Այն դեպքում, եթե տղամերի եղիայան կոմպլեքսը ոչնչանում է ամործատնան կոմպլեքսի հետևանքով, աղջիկներինը հնարավոր է դառնում և հայտնվում է ամործատնան կոմպլեքսի շնորհիվ: Այս հակասությունը գտնում է իր բացատրությունը, եթե հաշվի ենք առնում, որ ամործատնան կոմպլեքսը բոլոր դեպքում իր ազդեցությունն իրականացնում է՝ սահմանափակելով արականությունը, նպատում է իգականության զարգացմանը: Սեռական օրգանների անատոմիական տարբերության և դրա հետ կապված հոգեբանական վիճակների շնորհիվ՝ թե՝ տղամարդկանց, թե՝ կանանց սեռական զարգացման այդ էտապի տարբերությունները դառնում են հասկանալի: Դա համապատասխանում է այն տարբերությանը, որը կա «իրականացված» ամործատնան և ամործատնան վտանգի միջև: Այսպիսով, մեր արդյունքը իր իիմնական մասում շատ սպասելի էր և ինքնըստինքյան հասկանալի: Սակայն եղիայի կոմպլեքսը այնքան լուրջ

նշանակություն ունի, որ բոլորովին անկարևոր չէ ինձնանալ, թե ինչպես են հայտնվում այդ իրավիճակի մեջ և ինչպես դուրս գալիս դրանից: Ինչպես են ասացի, եղիայի կոմպլեքսը տղամերի մեջ ոչ թե ընդամենը ճնշվում է, այլ բառացիորեն կործանվում՝ ամործատնան կոմպլեքսի առաջացրած ցնցակաթվածի շնորհիվ: Տղան հրաժարվում է իր լիբիդիոզ կապվածությունից, որը սեռականությունից գրկվում է և մասամբ վեհացվում: Կոմպլեքսի օրինակ է ԵՍ-ի մաս կազմելով՝ ստեղծում է ԳԵՐԵՍ-ի միջուկը՝ հաղորդելով այդ նոր գոյացությանը յուրահատուկ բնափորության գծերը: Նորմալ, ավելի ճիշտ կլիմի ասել, իդեալական դեպքում եղիայի կոմպլեքսը ընդհանրապես վերանում է, իսկ անգիտակցության մեջ «ԳԵՐԵՍ»-ը դառնում է նրա ժառանգորդը:

Աղջիկների եղիայան կոմպլեքսի դրդապատճառը բացակայում է: Ամործատնան կոմպլեքսը ավելի վաղ թողել է իր ազդեցությունը և մղել է երեխային եղիայան վիճակի: Այդ պատճառով վերջինս (եղիայան կոմպլեքսը) խուսափում է այն ճակատագրից, ինչին արժանանում է տղա երեխաների դեպքում: Աղջիկը եղիայի կոմպլեքսը հաղթահարում է շատ երկար ժամանակվա ընթացքում: Ճնշման միջոցով նրա ազդեցությունը տարածվում է շատ ավելի հեռու՝ նույնիսկ հոգեկան նորմալ աշխարհ ունեցող կնոջ դեպքում: Ես չեմ կարողանում ազատվել այն մտքից, որ կանանց բարոյական մակարդակը ուրիշ է: Նրանց ԳԵՐԵՍ-ը երբեք չի լինի այնքան ամեն, այնքան անկաշառ և այնքան անկախ իր ստեղծման աղբյուրից, որքան մենք պահանջում ենք տղամարդու «ԳԵՐԵՍ»-ից: Բնափորության այն գծերը, որոնց համար շատ վաղուցվանից կանայք մեղադրվել են, թե պակաս չափով են ընդունակ վերապերել արդարության զգացությունը, պակաս ընդունակ են ենթարկվել կենսական անհրաժեշտության պայմաններին, թե իրենց որոշումներում ավելի շատ են առաջնորդվում թշնամական և բարեկամանական զգացմունքներով, գտնում են իրենց իմնավորումները ԳԵՐԵՍ-ի՝ վերը ներկայացված շարադրանքում: Ֆեմինիստների առարկությունները, որ ցանկանում են մեր վզին փաթաթել լիարժեք հավասարության գաղափարը և միևնույն գնահատականները՝ երկու տարբեր սեռերին, չպետք է մեզ գցեն քյուրիմացության մեջ: Թեպես անհրաժեշտ է ընդունել այն փաստը, որ շատ տղամարդիկ նույնպես հեռու են տղամարդու իդեալից, և որ բոլոր մարդիկ իրենց մեջ միացնում են ինչպես արական, այնպես էլ իգական բնափորության գծեր՝ իրենց երկսեռային նախադրյալների և խաչասերվող ժառանգականության շնորհիվ: Այսպես որ, տղամարդկանությունը և կանացիությունը իրենց մաքուր դրսեւորնան մեջ մնում են ընդամենը իբրև տեսական համակարգեր՝ անորոշ բովանդակությամբ:

Արշիլ Գորկի

Լիդա Ասատրյան

31

## Sketch Դանտոնի և ֆանտոմի մոտիվներով

Գործողության վայրը՝ Բաղրամյան պողոտա  
Ժամանակը՝ ապրիլի 12–լույս 13

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Գործիք: Կացին:

Սուր կամ բութ՝ նշանակություն չունի:

Գործիք: Տապար: Գործիք:

Գործիք: Մահակ: Գործիք:

Վերցրու հրացանն ու կրակիր ընկերոջդ վրա,-

այդպիսին է հրամանն ու ապրելու այլընտրանքը:

Թո՛ւի, այլընտրանք իրոք որ չկա, բայց պետք է, չէ<sup>o</sup>,

կրակելուց առաջ ձեռքդ գոնե մի քիչ դողա:

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

Այնպես արա, որ բանը մի հարվածով ավարտվի:

Արվեստով, արվեստով հարվածիր, դիպուկահարի նշանառությամբ:

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

Լավ դահիճ՝ դահճության գծով դրկտոր պրոֆեսոր:

Վատ դահիճ՝ մինչև վերջին պահն իր աշխատանքն անելու համար կաշառքի սպասող:

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

«Իջեցրու գիլյոտինը, դահիճ,- գոռում է կինոյի Դանտոնը,- իջեցրու կառափիս, բայց միայն իմ հրահանգով»:

Դահիճ: Գործիք: Կացին:

Մահակ: Տապար: Գործիք:

Փողն այդպես էլ չտվեցին, և գործիքը բարեխսղորեն չնախապատրաստեց աշխատանքի համար. չիայլեցրեց սայրը, չորացած հին արյունը լաթով չնարբեց, թոկը լավ չօճառեց, մի խոսքով՝ ալարեց ... պատահում է, չէ<sup>o</sup> ....

Փողը վերջին պահին, այնուամենայնիվ, բերեցին, և ողբացյալ մորն ասաց, որ չանհանգստանա, որ ամեն ինչ կարգին կլինի, այսինքն՝ կացինն ածելու պես կսրի, արյան չոր թերը կմաքրի, նույնիսկ տնից լրացուցիչ օճառ կրերի՝ թոկը լավ օճառելու համար.

Խարեց,

Խարեւմ էր,

Խարեւմ է տականքը...

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

Դահճության գծով՝ բարձրակարգ մասնագետ: Այդ գծով՝

երկրի պատվավոր քարաքացի:

Այդ գծով՝ արվեստի վաստակավոր գործիք:

Այդ գծով՝ պետական մրցանակի դափնեկիր:

«Ներու տար ավետարանը, տերտե՛ր», - Դանտոնն էր՝

չափավոր հեղափոխական,

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

Նով-նոր վերնաշապիկ է հազինը՝ վրան լավ նստող,  
Արյան հոտից թեթև ալերգիա, սրտխառնուք ունի,

32

ախորժակի ժամանակավոր բացակայություն.

ոչինչ, կզնա բ-ի՝ կմոռան: Զօգնեց՝ հայրենասիրական թեմայով երգեր կերպի (Վատ լսողություն չունի).

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

Մի քանի կաթիլ արյուն ցայտեց նով-նոր վերնաշապկին.

այն մաքրելու գիտական ձևն անգիր գիտի (նախ՝ ցայել սառը ջրով, հետո՝ տրորել քացախով կամ լիմոնի աղով):

Գործիք: Մահակ: Գործիք:

Տապար: Կացին: Գործիք:

Վատի վատրարը, դահճի դահճագույնը,-

սաղրել է մահը, վավերացրել դատավճիռը,

մահվան գործիքը սրել, գլուխ կտրելուն պատրաստել,

բայց դրանով չի բավարարվում. ուզում է վերջին պահին նայել զոհապարտի սարսափի աչքերի մեջ ...

Դահիճ: Մահակ: Գործիք:

Գործիք: Գործիք: Գործիք...

## Իմանուիլ Կանտ տնուսույց փիլիսոփա

ճշմարիտ, ճշմարիտ է ասում. միայն ոմն մեկի անչափ սիրելով և կամ առնվազն հիմարի պես սիրահարված լինելով կարելի էր դիմանալ այն վիթխարածավալ հետույքի մամլիչին, ինչը կոչվում էր կյանք:

Միայն այդպես կարելի էր հաշտ ապրել բանականության խժող այն վիրուսի հետ, թե ապիկարներն անընդհատ, գրեթե օրինաչափորեն պետք է իշխեն ու բարգավաճեն,

իսկ դու՝ կյանքը փիլիսոփայորեն քննելով, սպասես, մինչև նրանց ջրկած արյունը կլցվի խոհի ավիշով ու իրենց զավակներով հղության տասներորդ, հիսուներորդ տարում նրանց հայացքը կծանրանա քեզ վրա, իմանուիլ Կանտ:

Ահա այնժամ, Կանտ իմանուիլ, նրանք քեզ էժան գնով տնային ուսուցիչ կվարձեն իրենց զավակների համար և քո կենսագրությունը կիսանեն իրենց զավակների կենսագրությանը:

ճշմարիտ, ճշմարիտ է ասում. միայն ոմն մեկի անչափ սիրելով և կամ առնվազն հիմարի պես սիրահարված լինելով կարելի էր ժպտալ, եթե դանակի սրությունը ստուգելու համար շեղբը սեղմում են պարանոցիդ ու վրան բարալի՛կ, նախշուն գիծ քաշում:

Միայն այդ գնով կարելի էր սիզիփոս աշխատել, ամեն առավոտ տեղից վեր թռչել արտույտաբար ու զիլ դողանջել. ողջո՞ւն, իմ շատ սիրելի վիժվածքներ, ողջույն, իմ շատ սիրելի քսուներ, կավատներ, լլկողներ, պոռնոնարկո-պոլիտ բարոններ.

իրեր՝ ըստ իմանուիլ Կանտի, ինքներդ ծեր մեջ և իրեր՝ ծեզնից դուրս նաև...

ճշմարիտ, ճշմարիտ է ասում. միայն այդպես կարելի էր, բայց պարզվեց, որ սիրո հետ ևս լուրջ հույսեր չի կարելի կապել, որովհետև սա մի օր հանդես եկավ գրեթե քաղաքական հայտարարությամբ և ասաց, որ չի ուզում բանաստեղծների ու փիլիսոփամերի եսասիրության օրյեկտը լինել և գնում է՝ նրանց թողնելով վիթխարածավալ կյանք-հետույքի հետ:

...Ահա և փակվեց շրջանակը, Կանտ իմանուիլ,

Եվ հերիք, հերիք է կասկածելի աշխարհներ հորինես :

## ԲԼԻՆԴԱԾ

Կտրված-վիրթված է կապը ներկայի ու ապագայի միջև, և կա միայն քրտնաքոր, չարքաշ գինվորիկի նման ժամը բեռը ցեխուձյունի միջով քաշ տվող առօյքա.

Մի՛ փնտրիր այն գետը հակամաստասիրական, որը հնարավոր է կրկին մտնել,

մի՛ փնտրիր այն շողի քառակուսին, որն ընկել էր անտառում քո ռոմանտիկ իշության վրա, ու դրա միակ վկան թումանյանի քառյակներն ականջ դնող որոճացող կովն էր.

Մի փմտրիր պատուհանիդ տակ հանիրավի ցցված, կարծես քեզ անընդհատ գահավիժել հուշող բարդու գաղտնիքը,

(որա սոսափը մեխվեց հիշողությանդ մեջ ու մի երկու պուտ արյուն-տող դարձավ).

Մանկությանդ ծվենները թրթռում են ամռանագեղ օրվա մեջ, ու դրանում ձեռաց սարքվող և ձեռաց էլ քանդվող կոնֆետաքուղը պիոններական ճանքարներ կային (քեզ պետք էր հասանելիքդ ամառվա մեջ արագ-արագ ամել և հետո անցնել բուն գործիդ՝ երազելուց).

Մի բեռնատար ավտո եկավ սրընթաց ու ներկայիդ երեսին ծուխ ու մուր թքելով՝ ահագին անհարկավոր բաներ քաշ տվեց ապագա՝

Կին, կտոր, կուսություն, կտոր, կեսուր, կրուփ...

դու՝ ակամա հարսնացու, նստեցիր ուրիշի խառնակ զգեստապահարանի առաջ ու քրքրեցիր այդ ամբողջ հնոտին՝ բազմաքանակ ձեռնոցների գոնե մեկ գույզն ամբողջացնելու հույսով.

չկա՞ր, չկա՞ր այդ գույզը (ձեռնոցներն ախր կորչելու հատկություն ունեն)

«հավասարակշռություն չկա կեսի մեջ», - ասա՛, որդի՛ս, եղբա՛յրս, հա՛յրս, սե՛րս, ամուսի՛նս, սիրա՛ծս, հալիկո՛րս, որդի՛ս, զավա՛կս, մե՛րս, խե՛լքս, խելաթափությունս, լքվա՛ծս, պարտվա՛ծս, չպարտվա՛ծս, ստորագրությանս թիթիգ թիթեռնի՝ կը ... ,

փրեված է կապը անցյալի, ներկայի ու ապագայի միջև, և գույներ կան,

որոնք այլևս չեն հագնելու պատկերին,

փրեված է կապը օրվա և վաղվա միջև, որովհետև հենց նոր մեկն այնտեղից եկավ՝ բոլորիս տոտալ գինաթափման մասին ակտով ծածով ստորագրած.

վայ ինձ, վայ որդիներիս, նրանք դեռ նավու՞մ են դեպ պարտության այդ ափը, թե՞ վաղուց արդեն հասել են, բայց չեն ուզում ինձ ասել, ինչ է թե՝ վերջնաճամփա ելած սիրտս ավելորդ տեղը չցավի.

Դե, ի՞նչ կա որ: Այդ բանը պատահում է հազարի, միլիոնի, տրիլիոնի, ծիծիլիոնի՝ հետ, և քեզ էլ պատահեց.

բոլոր մարդիկ՝ այնպես ննան ու չննան իրար, ամեն մեկն իր մատնահետքը ունի.

սուս թաղումներ մի արա, զահլա չունեմ.

ոգու անմահության մասին կրոնի ու գիտության սուրոգատ մի՛ հորինիր, դիմացի՛ր,

դեռ կա մի լքված կայարան, կիսակայարան, մի փակուդի, կիսափակուդի, որտեղ մոլագարի մեկը կալանել է որդիներիդ ու դեռևս չծնված, լույս աշխարհի չեկած դստրիկդ քիչ է մնում վախից խելագարվի. «մամ, որ էն բոյով տղան ինձ գրկեց, օդ բարձրացրեց, ես հղիացա՞»:

Դեռ կա, շնչում է այն կայարանը, կիսակայարանը, որտեղ ճիվաղի մեկը լափել է ուզում որդիներիդ, որպեսզի նրանց խռովարա սերմը վերանա աշխարհի երեսից, իսկ նրանք՝ միամի՛տ, հպա՛րտ...

«Մամ, ինչի՞ եկար, անհարմար է, մարդիկ ի՞նչ կասեն, մենք ի՞նչ է, չե՞նք կարող մի չծնված քրոջ պատիվ պաշտպանել».

Վեր կաց և գնա.

մի՛ թույլ տուր,

որ աբսուրդից խելագար կաֆկան ձեռագրերն այրի:

## Յամընթաց շարժում ճիվաղի հետ

Ուր գնում էիր, նա հետևում էր կոնկակոնի.

կանգնում էիր, թեքվում, շարժվում, հանգստանում՝ նույնաես,

միով բանիվ՝ նա քո երթի մասնակիցն էր,

և վերջիվերջո երթիդ ինաստը փոխվեց ճիվաղ վերադաստիարակելու անպտուդ գործողության.

միամիտ մարդ, այդ ինչպե՞ս էիր նրան վերադաստիարակելու, երբ իր գոյության փաստն ինաստ ունի սոսկ որպես այդպիսին,

և այդ ինչքա՞ն ժամանակ ծախսեցիր նրան լրջորեն, գիտականորե՞ն հանոգելու, որ քեզ չխժոի միամտաբար քնածդ պահին,

երբ ինքն առանձնապես սոված էլ չէ,

որ դեմքդ չխոշտանգի մի անասնական կրքով ու հեշտասիրությամբ՝ մեկ անգամ ևս համոզվելու, որ արյունդ

34

ալ կարմիր է՝ հանգույն ուրիշների ...

Որ մեկընդմիշտ հասկանա, ականջին օղ անի, որ չի կարելի ուտել ուղեկցին, երբ երկուսով եք անապատում, և մեկիդ չգոյությունը չգոյությունն է նաև մյուսիդ ...

ինքնանպատակ զբաղմո՞ւնք,

ծախողված հույսե՞ր,

«Ինքնազլոր անի՞վ», Նիցշե ախապեր,

ապաճիվաղացման անհնարինությո՞ւն,

թռ պատասխանը մորութավոր Մարքսին,

որի կարծիքով՝ անշղթա մարդը մարդ է ավելի.

... Բայց ի՞նչ աղերս ունի այս ամենը օրվա քոնի հետ, երբ

օգոստոս ամսով երկինքն ամպել է, և միզուցե անձուն մաղի.

ունի այնքանով, որ այս մի օրն էլ ծնվեց տարաբախտ գեղեցկուհու պես,

որպեսզի մատաղ արվի ճիվաղին,

և ճիշտ այս պահին, երբ դու գրում ես,

մեկն արդեն թիկունքից մոտեցել, պատրաստվում է զարկել...

Եթ, ոչ մի նորություն կամ արտառոց քան չկա սրանում,

բայց թռ հավատը՝ միամիտ, անտեր,

թե գործնականում դժվար չէ, ասենք,

աշխարհը ամբողջ ճիվաղաբափել,

մի այլ թախիծ է տալիս անձրևին.

## Վասն սիրո վարդակուկոնի ու գեշության

Եվ ահա նեղ մասնագետի հետ կարճատև խորհրդակցելուց հետո

ես վճռաբար դուրս եկա ու գնացի հակածգնաժամային նպատակներով քեզ

դավաճանելու.

ամեն դեպքում ինձ համար դա ծիսական գործողություն էր,

ինչը ես նույն ձևով էլ կատարեցի.

դարակից հանեցի քեզ նվիրած իմ բանաստեղծությունը, որը թե՛ այդ պահին, և՝ թե՛ հավերժաբար ինձ տափակ թվաց, հետո վերցրի Մանուշակ զարմուհուս՝ որպես

բախտավորության նշանակ ինձ նվիրած օձի չորացած-տափակած կաշին,

տեղավորեցի չորստակ ծալվող բանաստեղծության արանքը ու

հանդիսավոր քայլերով գնացի դեպի դուռը...

Նրանք խռնվել էին դրանս առաջ ու ցիվիլ հասարակություն երևալու համար

միմյանց հետ գրույց սկսել Կամասուտրայի թեմաներով.

այդ գրույցը նրանցից մեկի համար ակնհայտորեն հեշտալի էր, և նա

ծերքը գրպանն էր տաճում արագորեն.

նրանց մեջ կար մի բանաստեղծ, որը տեղին-անտեղի «պստիկս» էր ասում,

բայց բավարարվածության բարձրակետին հասնում միմիայն գռեհկաբարո անելիրոտներից.

կար մի պարտիական, որն այլոց և իր գողանալու տարբերության մասին

մի ամբողջ տրակտատ էր հորինել և պատրաստվում էր այդ թեմայով քեկնածուական թեզ պաշտպանել.

և մի այլ պարտիական, որը բաղնիք-հանդերձարանի ներկուտած պատուհանիկին

մանրիկ անցը էր քերել և երանելի թմբիրի մեջ հիանում էր իր պարտիայի

պահած լիստիկ բանվորուհիներով, երբ նրանք ջանասիրաբար պրտում էին

իրենց խիստ որոշակի տեղը.

կար մի ոստիկան, որի որովայնի ներքո, այնուամենայնիվ, բանական

ինչ-որ բան հայտնաբերվեց, ինչի գորաշարժը խոստանում էր բավականին

ավանգարդային լինել իր տեսակի մեջ.

մի զինվորական, չեմ հիշում՝ գեներալիսիմն՝ և, թե՞ Եֆեյտոր,  
և մի բարեխիղճ գիտնական-մենագրող, որն այնքան էր խորացել «ազգային  
պանրի» առանձնահատկությունների մեջ, որ պատրաստվում էր ձեռքը  
վերցնել հովանավորի «թեժ կետերից» ռեպորտաժներ հաղորդելու  
եկամտաքեր գործը.

կար մի դատավոր՝ սեռական անհագուրդ կապի մեջ մտած  
իր պաշտպանյալ օրենքի հետ,  
և մի խագանա-երկրապահ, որի կրծքավաճակին գնդակի  
խոցելատեղ կար պատկերված,  
(նա բացարիկ հեշտապիրությամբ ասաց,

թե թշնամական մանկահասակ աղջկա է բռնաբարել՝ ի պատիվ Յայոց Մեծ Եղեռնի).

կային նաև այլք ու այլազանք, ոմանք՝ կրծքին փակցված այցեքարտերով,  
ոմանք՝ առանց դրա,  
մինչևսկ մի զառամ պարետ, որը տարաշխարիկ վայելքի դիմաց բանվոր-  
ծառայողներին առաջարկում էր բնամթերային ոսպ ու վերմիշել...  
ես նայեցի դրանս առաջ խոնվածների հո՛ բազմությանը և զարհուրեցի,  
տեր Աստված, ինչքա՞ն շատ են, և բոլորն էլ հակածնաժամայինից  
տեղեկանք-անկետա ունեն.

կարծ ասած՝ ես նրանց հետ քեզ մանրակրկիտ դավաճանեցի, որից  
հետո նրանց մաքրագործը շտապով ուղարկեցի դեպ իրենց հայեցի լնտանիքները,  
իսկ սևագրերը խրձեցի, հավաքեցի ճապաղորեն անհասկանալի մի հրովարտակի մեջ  
ու շամպային դատարկ շշի մեջ փակելով՝ նետեցի քաղաքային աղբի  
օվկիանոսը...

...Ուշ երեկոյան, երբ տուն եկա (ամեն դեպօւմ՝ քիչ զինովցած),  
մի քանի տարեկան թուլաս ասաց.- Յարբածի մեկը,  
իսկ ինքը՝ հարգամեծա-ր,- Փչացա՛ծ...  
-Ահա և լուրջ աշխատանք ճարեցի վերջապես ինձ համար,- ճռվողեցի ես,  
վաղը, տղերք, չմոռանաք արթնացնել, նույն ժամին գործի եմ գնալու:

## 36 վահան իշխանյան իռենը

արդեն մի չորս ժամ կլինի, որ նստած են: որ Եկան լուս էր, հիմա արդեն մուքն ընկել ա, դիմացը լծի մեջ արտացոլվում են գիշերային լուսերը: անձրևի կաթիլները լծի հայելին ծակծկում են, ու իռենը՝ կողքը: անձրևը, լիճը, լուսերը լծի հայելուն, օդին, ջազը ֆոն իռենի գծագրությանը: քո համար մի հատ ընենց պուց եմ բերելու, որ ուշք կերա: ո՞ր մեկին: իմ այրեցեն-տացիային որ յանդ տարավ, իռենը, ինքն էլ քեզ ա հավանել, ասում ա՝ ընկերդ դղող դեմք ա: էրեկ ընկերը հեռախոսով ասում էր: մալարեց: մենակ թե դու արի, կնատենք, կծամենք, ջազ կլսենք: արժեր: արդեն սեղանի տակից իռենի ծեռքն է ափի մեջ: իռեն շատ սեքսուալ անուն է: իռենը ժապտում է, ժպիտը ասում է՝ ես սեքսուալ եմ, ճայի, տար ինձ, լիքը գաղտնիքներ ունեմ, բացահայտի, մագերից քաշի, օցի անկողնին, արա՝ ինչ ուզում ես: ինքը գիտի ժպիտի տեսակները, իռենինը տանող-կորցնողը: երրորդ թե չորրորդ օդու շիշն են բերում: սկզբում չորսով էին, հիմա սեղանի շուրջը մի տասը հոգի արդեն կլինեն՝ հարրած: ընկերը մյուս դժի հետ ա խորացել: էն էլ վատը չի, բայց իռենը ուրիշ ա՝ կանաչ աչքերը ու աչքերին ընկնող մուգ մագերը՝ շագանակագույն, կարիե, որ ծեռով հետ ա տանում՝ նայի աչքերիս, տես ինչ խորքեր ունեմ, կսուզվես ու հետդարձ չկա:

ջազի տակ գլուխմերը շարժում են ու արադը հուա տալիս, վրից գեյթուն: ինքը խնում ու ուշբնումիտքը իռենը: ոչ ոք չի նկատել, որ իռենն արդեն իրանն ա, մենակ ժամանակն ա դեռ բաժանում իռենի ու իր մարմինները: էս գիշեր իռենի հետ. իռենը մերկ, իռենը անկողնում, իռենը հեռացնում է ոտքերը, իռենի վրա, իռենի պուցը, արդեն իռենի մեջ, իռենը վրից, իռենը վերուվար, իռենի ծծերը ափերում, իռենին շրջում, ինքը հետևից իռենի ոռը ափերի մեջ, իռենի մեջքը, իռենի ողնաշարի գիծը, թիակների ցցվածությունը, իռենը տնքում, իռենը կայֆից մղկտում: մի քիչ էլ նստեն ու կզնան: վրագելու կարիք չկա: իռենը արդեն իրանն ա, փախնելու տեղ չկա: ու սեղմում ա իռենի բարակ մատները, մատանու կոշտությունը սաքսի նվազակցությամբ: իռեն, էս թենան հավանու՞ն ես: ի՞նչ թենա, էս քոլթուկի պարտիանի համընկնանը, այդտեղ խորը իմաստ կա՝ կարմայի օրենք: իռեն, դու շատ հետաքրքիր մտքեր ես արտահայտում: երկի ճիշտը դու ես: որ եսօր ես ու դու իրար գտել ենք՝ պատահակություն չի, չէ՝, սիրելիս: իռենի պատահանը ժպիտի մեջ՝ հմայիչ ու խենթացնողը: դու շատ հմայիչ ես, ուղղակի ինձ խենթացնում ես: ինչպիսի խոսքեր:

Աերկած եղունգների արանքը ու կլորացրած կարմիր շուրթերից ծուխը համաշափ փչում ա. պատկեր, իսկ հետո կլինի ուրիշ պատկեր, երբ շուրթերից տնքոցներ կգան, կարմիր եղունգները կքերծեն իր կոնքերը, ջինսը հատակին, մերկացած ճերմակ բդի կլորություններով ափը կսահի, հայացքը հաճույքից կսուզվի կոպերի տակ:

ուզո՞ւմ ես ծանոթացնեմ սաքսաֆոնիատին, մեր լավ ընկերն ա: իռենը հայացքը շրջում ա, իռենը ժպտում ա ու իռենը մագերը մատներով հետ ա տանում: ծանոթացրողու: իմա վերջացնեն կանչեն: դու որտեղի՞ց ես ճանաչում: ես ում չեմ ճանաչում ու իռենի բարակ մատները էլի ամուր սեղմում ա: իռենը գլուխը տարութերում ա, այսինքն այայա: դու տիպն ես: ու իռենը բարակ մատներով սեղմում ա ափը: երաժշտությունը վերջացավ: ծեռքով ա անում արկեստրի կողմը, սաքսաֆոնիստին: հեսա: սաքսաֆոնիստը սաքսը հենում ա բեմին ու գալիս ա: արի, ծեռք սեղմում, պրիվետ ու կողքի սեղանից արոռ քաշում, նստի: սաքսաֆոնիստը նստում ա: ոնց ես: նորմալ, ոնց պիտի լինեմ, տեսնում ես էլի: իռեն ծանոթացի: իռենը ծեռքը պարզում ա: շատ հաճելի է, իռեն: ինձ էլ, սեղմում ա իռենի ծեռքը: իռեն, ասեմ քեզ, սադ աշխարիք ֆռուացել եմ, ամերիկա, ֆրանսիա, հոլանդիա, սաքսունցի նման սաքսաֆոնիստ չեմ տեսել, լսեցիր չէ ինչ խաղեր ա տալի, ոչ մի սևական եղբան չի ծգի: մերսի: իսկապես, շատ լավ էիք նվագում, վաղու՞ց եք նվագում: ինձ տարեկանից: մի բաժակ խմես, սաքսունց ջան: չէ, մերսի, ես գնամ, արդեն սկսում ենք: գնա ցավի տանեմ: սաքսունցը գնաց: լավ ընկերներ ունես: տաղանդավոր տղա ա սաքսունցը: անունը ինչո՞ւ է սաքսունց, սաքսաֆոն նվագելու հետ կապ ունի՞: չէ համընկել ա, գորիսեցի տղա ա: ես չեմ հավատում պատահական համընկնանը, այդտեղ խորը իմաստ կա՝ կարմայի օրենք: իռեն, դու շատ հետաքրքիր մտքեր ես արտահայտում: երկի ճիշտը դու ես: որ եսօր ես ու դու իրար գտել ենք՝ պատահակություն չի, չէ՝, սիրելիս: իռենի պատահանը ժպիտի մեջ՝ հմայիչ ու խենթացնողը: դու շատ հմայիչ ես, ուղղակի ինձ խենթացնում ես: ինչպիսի խոսքեր:

էլ իմաստ չունի լրվել, արդեն վախտն ա, որ հրավիր՝ իռեն, արի գնանք մոտս: լավ վիսկի ունեն ու ջազի ընտիր սիրիներ, փախսած գործեր են: իսկ դուշ ունե՞ս, խորամանկ ժպտում ա իռենը ու մագերի փունջը աչքերից մատներով հետ տանում: անպայման, տաք ու սաքս մշտական: իռենը էլի ժպտում ա. տանող-կորցնող ժպիտ: ինչ վիսկի ունե՞ս: բլու լեյրլ: չէ մի, իռենը շուրթերը վեր ա տանում՝ բարձր գնահատական: դու տիպն ես: բա չէ զայլա կա: գնացի՞նք: դէ լավ, որ ասում ես գնացինք,-

ծույլ-ծույլ ասում ա իշենք ու վեր կենում: դե լավ մենք գնանք արդեն ուշ ա: ուշադրություն դարձնող չեղավ, ջազի ուդապանիկի ծենք ընենց ուժեղ էր, որ չլսվեց: լավ մենակ ընկերոջը, գնացի ես, ծեռքով ուսին, ընկերը հայացը վեր տարավ: գնու՞ն ես, գնա ցավդ տանեմ, աչքով ա անում, քեզ հաճելի ժամանց: ու էի դժի կողմը: երկուսով դուրս եկան, իշենի մատները ափի մեջ: կաֆեի հետևում ստայամկան: հսկիչը մոտեցավ, ծերի մեջ հազարանց (էսօր լավ օր ա: շնորհակալություն ուրախ ասեց հսկիչը, լավ օր ա, բա ինչ, մեկը հազարանց, մեկը իինգ հազարանց, մեկի դուշը մյուսից լավը, մեկի մաշնեն թագա նիվա, մյուսինը քենավե, իրա ստայամկեն մյուսից հաջող, ֆիրմա մաշնեքը շատ, օրվա փողը մյուսից իրեք անգամ ավել, անձրևի տակ թրջում ա, բայց գիտի, որ էրեխեն սոված չի մնա, մի բան էլ կարատեի կեթա: շեֆը կարգին տղա տրոմբի փողը խոստացել ա: թե՞ չի տա):

սկզբում աջ դուշը բացեց իշենը նստի, հետո ինքը ռուլին: գագ տվեց ու ձեռքը տարավ իշենի ջինսին ու նայեց աչքերին, իշենը ծպտաց. իշենը դեմ չի, իշենը ուզում ա, իշենը ասում ա, ծեռդ տար, մինչև որտեղ կուգես: քիչ մնաց, ու իշենի մազերը հետ ընկած, իշենի աչքերը փակ, կայֆից, իշենը տակը, իշենը ոտքերով մեջքը գրկած տնքում ա, ավելի բարձր, համարյա գոռում, ինքը իշենի մեջը, իշենի թաց պուցը, սղալով կոխում-հանում, կոխում- հանում, կոխում-հանում, խրխր խր-խր: երկա՞ր ենք գնալու: չէ հես ա հասանք, մասկովսկիյով մտավ, կարմիր լուս, կայնեց: էս ռեկլամի շիթը մենք ենք սարքել: մատը խամերուկի աջ մայթի դիմացի պատին՝ դեմը՝ առեքսիմ բանկ, հուսալի գործընկեր՝ արարատ լեռը՝ փեշին ծովի ջրեր, ալիքներին՝ լողացող շիշ՝ վրան պիտակ՝ լերմոնտովի դիմանկարը ու մակագրություն՝ արժաքյա մաքրություն: էս բանկի ռեկլամը: շատ գեղեցիկ է, ապրեք: իսկ շիշը: դվա վարնոմ՝ ծերի հետ օղու ռեկլամ, ցնցող ա չէ: լրիվ: լերմոնտովի նկարը ինչու ես դրել, կապ ունի՞ օղու հետ: մենք չենք դրել, օղու յառիկն ա, պեշալիյ դեմոն, դուխ իզգնանիյա, բլուժմալ պադ սվորոն գալուրիմ: անգիր գիտե՞ս, պատասխան չկա, պատասխանը շարունակությունը՝ օն ժիլ, նեվերյա նիշենու, ի նիշեվո նե պրիզնավայա: հրաշք, էտ տողերը ինչի չես դրել ռեկլամում: չի մտածել: ու նայում ա իշենի աչքերի մեջ: կգա՞ն մոտս աշխատես: իշենը ուսերն ա թրջում: իսկապես սազում ա՝ բանկը լերմոնտովը մասիս ու ծովի համայնապատկերը: էս ինչ ա, մասկվայում մի շիթ ենք դրել, տենաս ծռվես: դեղին լուս ու ճռօքեց: հեսա մաշնես փոխում եմ, պոնտյակ, ինչ ես կարծում, արժի՞ն: երևի, ես մենակ քենավե գիտեմ: ի՞նչ: BMW: ուրիշ չգիտե՞ս: իշենը ծիծաղում ա, գիտեմ, բայց BMW-ն սիրում եմ: պոնտյակն

էլ կսիրես սիրելիս: բաղրամյան խաչմերուկը անցավ մտավ դալան ու կայնեց:

ինքը արագ մաշնից պոկվեց, հասանք: պայոյեզդ իշենի մատները ափում, սեղմած: երրորդ հարկ: բանալին մտցրեց անցքը, հեսա քիչ մնաց, կայնած մնացել ա, էլ չի դիմանում: դուռը ծանր, բացեց, ձեռը տարավ լուսին, չրիս վարեց: իշենի ձեռքից քաշեց ներս ու դուրը չրիս, իշենը ծիծաղելով՝ կամաց այ գիտ: ականջի մեջ իշենի ձայնը՝ գիտ, սահում ա ուղեղ ու ներք սիրտը թքքում ա, տարածվում մարմինը փշաքաղակում, ներքը կլիյ տրամաչափերը ավելի մեծանում՝ գիտ: միանգամից քշեց ննջասենյակ: բա վիսկին չենք խմում, իշենը քմծիծաղով ծույլ-ծույլ: հետո կխմենք ու շրջունք-ներով լրեցնում ա: լեզուները խառնվել են ու մի ձեռքը իշենի մեջքին, ափի տակ կորությունը, մյուսով վերնաշապիկը քաշում վեր, իշենի, վերնաշապիկի տակից ձեռը տանում ծծին: ընկնում են անկողին: սպասի, դանդաղ, շապիկս կպատռես: չեմ դիմանում, ու հանում ա շորերը, կծին արա, չեմ ծին: լիքը չի արձակվում, սպասի ես կիանեն, ու իշենը լիքի պլեշիկներից ձեռքերը հանում ա, լիքը ֆռուացնում, կոճակի կողմը դեմը ու արձակում, իշենը իր ձեռքով արձակում ա, տալիս ա: ծծերը դուրս են պրծնում, կլոր, ձիգ, ափի մեջ, սեղմում ա ու մատների արանքներց դուրս են պրծնում, պտուկները վեր ցցված, իսկական իր սիրած վարիանտը, ու երեսը միարծում ծծերի մեջ:

ջինսի ցեմին ա իջացնում մյուս ձեռով ջինսը քաշում հազից: մինչև իշենը ջինսի մի ոտք հաներ, ինքը արդեն արագ հանվել էր, կլորը ձիգ, պինդ, քար տնկված իշենի ծծերին: բուղը իշենի քթին, ես ինչ ես ցանել: դիփ: ի՞նչ: ծեօք: դուրդ էկա՞վ, անուշ հոտ ա, քաղցը: գժվելու: տրուսկիը իշենը տակից հանեց ու զցեց հատակին, ու ինքը արդեն իշենի վրան, իշենի ոտքերը բացվեցին, ու ինքը դրել իշենի ոտքերի արանքը սեղմում:

բայց էս ինչ ա, չի մտնում: իշենի մեջ չի մտնում, երևի ներ ա: դու մտցրու, ինչ մտցնեմ, մտցրու մեջդ, էլ ուրիշ ուր պիտի մտցնես, մեջս ոնց մտցնեմ, ոնց՝ սովորական, գժվել ես, ստեղ չեմ մտցնում, ինչ ա խոսում, ու ինքը կլիյ ծերը տանում բերում ա իշենի արանքներում, որ ճեղքը գտնի, այցի ճեղքը: բայց չի գտնում, էս ուր ա պուցդ: ի՞նչ պուց, կարգին խոսա: իյա, իջավ վրից, վեր կացավ լույսը վառեց, ու՞՞ն է պուցդ. հո չես գժվել արա ինչ պուց: էկավ անկողին, իշենի ոտքերը իրարից ավելի հեռացրեց, իշենի այցի տեղը հարթ մաշկը, սպիտակ-սպիտակ, մարմար, մազի հետք չկա, հո դու ուրոդ չես, ու՞՞ն ա պուցդ: պուց չկա, ուրողն էլ դու ես, այ շիզոֆրենիկ, մարմնիս վրա անցքեր ա ման գալիս: այ ախչի, դու պուց չունե՞ս: իսկ ով ունի: ոնց թե ով ունի,

38

ղշերը պուց են ունենում: յանդ տարել ա, ոչ մի պուց: այ չնո, էստեղ պուց պիտի լինի ու բռունքը վ տվեց իրենի ոտների արանքը լերկ մաշկին: արա, իո դու սադիստ չես, տենց կխփե՞ն կնոջը: էսքան սիրուն ու պուց չունի: այ քեզ բան: տեղը լավ մաքրած խաչի տոտիկի մաշկ: կինը պիտի պուց ունենա, բռնը ուր ա: իո դու լակոտ չես, ինչ պուց: այ ստեղ պիտի անցը լինի ու մատով ուժեղ բգեց մաշկին: գծվել ես ոչ մի անցը էլ չպիտի լինի, ծևը սենց ա, ու իրենը բարակ մատները տարավ բերեց հարք ու ողորկ մաշկով: մատանիները փայլեցին այնտեղ, ուր պուց պիտի լիներ: Էդ մատնիքները դրել ա՝ առանց պուց: որ պուց չունի թե իսի ա դրել, չի ջոկում:

բայց ոնց թե չունի, այսինքն ինչ՝ չունի, իրենը պուց չունի, յանձ ինչ: ինչ անեմ արա սրա հետ, ինչ անեմ, կզգվեն որ վրեղ պուցը զգտնեմ: էս աննորմալը որտուց հայտնվեց, ոչ մի պուց, կինոմինո են նայում, գալի ջաններիս են ընկնում: հըլը դու ինձ ասա, ուրիշ տղամարդու հետ չես եղել: Եղել եմ, քո նման աննորմալը առաջին անգամ ա ռաստ գալի: իրենը վեր կացավ, մարմինը բարակիրան, մրսում են, ոտքերն ուղիղ իրանը կորվեց՝ մազերը բափկեցին՝ ռեկլամին շիք՝ կատարելություն ամեն ինչում, ու պուց չունենա, չունենա՝ ու գետնից վերցրեց տրուսիկը, որ հագնի: ուր ես հագնվում, այ դախիք: մինչև վրեղ պուց չգտնեմ, չես հագնվելու ջոկի՞ր: ու իրեց մահճակալին ու գնաց խոհանց: իրենի աչքերը լցվեցին, դեմքը բարձի մեջ հեկեկում է, մամա ջան, էս սադիստը ուզում ա ինձ սպամի: չեմ սպամի մի լացի, մենակ պցիդ տեղը բացեմ ու վերօ: խոհանցոցի բարձր գոռում ա: չէ դանակով չի լինի: մտավ գուգարան, հայելու դեմք սրիչ, վերցրեց, սրիչով լավ կրացվի: էկավ, իրենը հագնվել թռնում էր արդեն դուս: ուր ես փախսնում այ չարլաշկա: դուն մոտից մազերից բռնած քաշ տվեց ննջարան ու գցեց մահճակալին: շորերը վրայից պատառուտելով համեց: ինձ մի սպամի, խնդրում եմ, ինչ ասես կանեմ: չեմ սպանում, հանգիստ, պուցդ բացեմ ու վսյո, մենակ համոզվեմ որ պուց ունես, թե չէ կգժվեմ: իրենը ոտքերը պինդ սեղմել է իրար, չէ մի արա, էտեղ ոչ մի բան էլ չի լինում, քեզ խարել են ու լացում ա: ինչ խարել, ինձ հարիֆի տեղ ա դրել դախապեն, սպասի, ու մի հատ չափալախեց, իրենը ղժժաց՝ սպանում ա, մի հատ էլ չափալախեց ու բերանը ափով փակեց, որ ղժժաս հաստատ կսպանեմ, ու ոտները ուժով իրարից հեռացրեց, ծունկը դրեց արանքը ու սրիչը խրեց, իրենը ղժժաց: սրիչը քաշեց ոտքերի արանքի ողորկ սպիտակ մաշկով, արանքը բացվեց: աչքերը բացվածին մնացին, չհասցրեց տեսմի ինչ կար ներսը: սարսափ: պցի մեջ աչք, կանաչ: իրենի կանաչ աչքե՞՞ր՝ պցից: նայու՞մ ա,

կանաչ աչքը իրան ա նայու՞մ: բուկը բռնեց: կանաչ ա՞չքը: կանաչ դաշտեր, ինքը ծիու վրա, հայրը սանձից բռնած՝ մանկության հուշ, գեղարվեստաթատերական, սա երևանն է, այստեղ ես տանն եմ, դիզայն սերվիզ, առեքսին բանկ՝ կատարելություն ամեն ինչում ու ջագ: չէ: չհասցրեց ջոկի: կանաչ երախ, աչքերի գույնի, վայրկենական դուրս պրծավ արանքից ու բուկը բռնեց: էլ չհասցրեց գոռալ, մենակ խառոց դուրս եկավ, արյունը կոկորդից դուրս թռավ պատերին: երախը կանաչ, ժամիքները՝ սպիտակ՝ երկու վերից երկու վարից, խրված մնացին կոկորդի մեջ: ընկավ հատակին, արյունը շարունակում էր հոսել: երախը բացվեց, ժամիքները դուրս եկան կոկորդից: ու երախը նույն արագությամբ հետ մտավ մաշկի տակ: մաշկը ճշմի-ճշմիոցով փակվեց ու նախկին տեսքը ընդունեց՝ ողորկ, սպիտակ, կարծես երբեք չի էլ բացված եղել: մենակ իրենի կուրօքն ու ոտքերը արյունոտվել էին: իրենը լաց լինելով վեր կացավ, դեմք հատակին արյունի մեջ կորած մարմինը՝ աչքերը հետ գնացած՝ կոպերի տակ, վրայից ցատկեց, գնաց լողարան, դուշի տակ արյունը լվաց, եկավ ննջարան, ցատկեց, պատառոտված շորերը վրան գցեց, ցատկեց, հետ նայեց հատակին, անկենդան մարմինը՝ կոկորդը բգկտված, ու լացելով տնից դուրս թռավ: աստիճաններով արագ իջնում էր ու լացում իսի իմ կյանքը սենց դասավորվեց:

## ուսապարկ

Էս ա մոտիս փողը: 10 դրամ: ծեռ ե՞ս առնում: գնագնա: մոտս մի 20 դոլար կար, ի՞նչ էղավ: մերսի, վարպետ ջան: վարպետը քշեց, չքողեց էլ դուռը չխկացնեմ: երևի արագությունից ճամփին չխկում ա: լավ ա ծեռս դրան տակ չմնաց: սպասի: ուսապարկը մեջքիս ա, բան չեն մոռացել: բայց եսօր աչքիս շատ ծանր ա: երևի շատ ես խմած: բայց խմած ժամանակ ուսապարկը պիտի ավելի թեթև լիներ: ոե լավ զահիլա չկա նայեմ: աչքերս փակած էլ սեղայի տունը կգտնեմ, ինչքան էլ խմած լինեմ: մենակ՝ այ քեզ բան, մութ ա, դեմս չի էրևում ուսու ուղիղ ջրափոսի մեջ: ինչքան էլ խմած ընենք, որ ուսու ջրափոսն ա ընկնում մեկ ա անտանելի անդուր ա: թխկ թխկ: ո՞վ ա: բացեք: ո՞վ ա: բացեք սեղային եմ ուզում: սեղա էստեղ չի ապրում, մի հարկ ներքև: իսի էս ո՞ր հարկն ա: ծեռ չկա: իսի էս իհնգերորդ հարկը չի՞: գոնե դուռը բացեր, տեսնեի ով ա: ծեռը լացն էր: մեկ էլ տեսար ասեց համեցեք ու թագա դուշ: սեղայից էղակն կարծնեմ: որ խմած լինեմ՝ բարև թագա դուշ: բայց ուսապարկս սենց ծանր չէր էղել: աստիճաններով իջնում չի լնում: քիչ ա մնում տակը

ճգուեմ: թկ թկ: ծեն չկա: թիվկ թիվկ: ծեն չկա: թրիվկ թրիվկ: դուռը ջարդեցիր այ տղա: սեղան մերիցս բռնում ներս ա տանում: մութ: ինչի՞ լուսը չես վառում: որ պապին չարթնանա: պապիդ չմեռա՞վ: ի՞նչ ասեց: մեռավ, թե՞ չմեռավ: էս ինչ էր, ոտս: սուս, պապիկի կարի մեքենան: պապիկը կարում ա: չէ տատիկը: բան չի ջոկվում: ինչ լավ ա, որ էկար վաչո ջան, քեզ շատ էի կարոտել: սպասի ուսապարկը դմեմ: բեր: ինչ ծանր ա իսկապես: էրկուսով հազիվ ենք դմում:

դե արի: հավես ա, որ ոտիցդ թաց գուլպան հանում են ու ոտդ հովանում ա: էս շորերս արդեն վրաս չեն: դե թեր մտցնեմ, բեր: քունի ինձ: սպասի: ընը: վաչո էդ բանը չանես: էս ի՞նչ ծեն էր: ականջիս լսվե՞ց: չէ ես էլ լսեցի: դու ո՞նց լսեցիր, ես եմ խմածը: դավայ դավայ: վաչո խմդրում եմ մի արա: սա արդեն ճչոց ա: էս որտեղի՞ց ճչոց: մի արա վաչո: սպասի ինչ-որ մեկը կա տանը:

սեղան վեր կացավ: պապիկը չի տատիկը չի: պապիկը մեռել ա: տատիկը չի մեռել: թե՞ հակառակը: լավ ծեն չկա արի: չէ չէ: սեղան չկա: ու՞ր ես: տեսնեմ ի՞նչ ծեն ա: արա դե արի էլի: սեղայի ծեռը մեջ ոնց էլ բռնում եմ: արի: ու էրկու ծեռներով էրկու ծծերից՝ արի վրես: այ նորից կանգնում ա: նորից ճչոց՝ վաչո ջան, մի արա ես կմեռնեմ: իյա, էս լորիկի ծենն ա: լորիկս, էս որտե՞ղ ես: վաչո ջան մի արա, խնդրում եմ: սեղա մի հատ լուսը վառի: չի վառում: վառի, թե չէ վատանում եմ: մի վատանա, հիմա-հիմա: լորիկ ջան, սպասի հիմա քեզ գտնեմ: ստեղ եմ: դե վառի: լուսը աչքերս ծակում ա: լորիկ, ու՞ր ես: էստեղ եմ հիմար: վայ: ուսապարկից գլուխը հանել ա լորիկը աչքերին՝ արցունք: պառշների անկյունները կախ: հոնքերը իրար հավաքած: լորիկ ջան էս դու էի՞ր ուսապարկում: ծեն չի հանում: լաց ա լինում: մենակ թեթև լացի հեկեկոցն ա լսվում: հեսա-հեսա, լորիկս: քաք եմ կերել, սպասի: հես ա հազմվեմ:

սեղա էս ու՞ր ա լորիկը: ի՞նչ լորիկ, գժվե՞լ ես: սպասի: ի՞նչ ա անում: անդամս բերանում ա: կանգնում ա, տես: մեկ ա, լորիկը ու՞ր ա: լսի ինչ լորիկ, ու ծծում ա: իմ լորիկը: քո լորիկը ստեղ ի՞նչ գործ ունի: ոնց թե, լուսը վառեցիր պատի տակ՝ մահճակալի դեմք լորիկն էր՝ ուսապարկի մեջ: վաչո ջան հարբած ես, աչքիդ տեսիլք-ներ են գալիս: իյա, ե՞ս, տեսի՞լք: գժվե՞լ եմ:

հեսա իսկականից կօժվեմ մինչև չստուգեմ: պառկի վաչո ջան: չէ, էն կոմ: սեղան բռնել ա ինձ: ի՞նչ արի լորիկիս, բեր ես կօժվեմ, ուզու՞մ ես օժվեմ, թող ինձ:

դու՞՞ր որ որտեղ էր սրանց: հեսա կգտնեմ: հեսա: արի լուսը վառի: չկա էս սեղան: լավ հես ա ես կգտնեմ: ընը, չիսկ: էս միջանցքն ա՝ պապի կարի մեքենան: հա, իմա-

ցա: գնամ ննջարան: սեղա՞։ սեղան անկողնում պարկած լաց ա լինում: սեղա՞։ ծեն չի հանում: սեղա խոսի թե չէ սաղ շենքը ոտիդ կիհանեմ: ի՞նչ ա: ուսապարկս ու՞ր ա: քեզ եմ հարցնում՝ ախչի, ուսապարկս ու՞ր ես պահել: ծեն չի հանում: արագ շորերս հագնեմ: գորում եմ ամբողջ կոկորդով՝ ու՞ր ա ուսապարկս: ախս սիրտս: վաչո ջան ինչ էղավ: բժիշկ կանչի, սիրտս ա, գեղ սկսեց ցավալ: հես ա վաչո ջան, արի գնանք ուսապարկտ տամ: ծեռիցս քաշում գետնից բարձրացնում ա: ինքը առաջից՝ ես հետևից պատերին քսվելով, ծեռիցս քաշում ա:

լավ ստացվեց: սրտով վախցրի, լորիկի տեղը տարավ ցուց տա: այ տենց կվախնաս: արի, վաչո ջան, արի: խոհանցում տատը նստած ա թախտին, քնած չի: տատը չէ՞ր մեռել: պապս: ու՞ր ա ուսապարկս: հեն ա: ուսապարկս պապի կողքը, ոտքերի մոտ թախտին հենած էր: վրան ինչ-որ փալաս փռած, շղթան քաշած, բերանը սկոչով փաթաթած: սկոչը պոկեցի, շղթան հենց քաշեցի, լավ էր, լորիկը գլուխը դուրս հանեց ու սկսեց վրա-վրա շնչել: խեղդվում էի հա: շուրթերը կապուտ: լորիկս, որ խեղդվես ես ոնց եմ ապրելու: ու լաց: էս ոնց եմ հեկեկում, ոնց, վերջը չի էրևում: ուսապարկը ուզեցի բարձրացնեմ, որ մեջքիս գցեմ, ուժս չհերիքեց: սեղա օգնի: սեղան ուսապարկի տակից հրեց: ընը, լավ ա, մերսի: գնացինք: ուժս կպավ տատի ոտին: վայ ես քու, լավ ա դենը պատ էր բռնվեցի, թե չէ լորիկի հետ գյարռամիշ էի լինում: դուռը բաց: սեղան լուր դուռը բացում ա: էլի կգա՞ս: ինչ գալ էի: ճամփին լորիկը ծեն չի հանում: ուսապարկից գլուխը հանել ու ծեն չի հանում: լորիկ մի բար ասա՝ կգժվեմ: լորիկ, լավ էր փոքր ուսապարկի մեջ ոնց տեղավորվեցիր: քո ծեռից ինչի մեջ ասես չեմ տեղավորվի: զարմանալու ա, բայց արդեն իրեք թաղամաս քայլում եմ ու չեմ հոգնում, մեջքիս ուսապարկը, ծանր՝ մեջք լորիկը, ու չեմ հոգնում, հակառակը, մի հիսուն կիլոմետր էլ սենց կրայլեմ, մենակ թե լորիկս խոսի: լորիկ ինձ էլ չես սիրու՞մ: չի խոսում: երկի էլ չի սիրում: երկի էլ չես սիրում: դու որ ինձ թողնես ես էլի ալկաշ բռոժ կդառնամ, անկառավարելի, կընզնեմ փողոցները գլխիս մի փորձանք կգա: չի սիրում: փորձանք գա՞:

լուսը բացվում ա: լորիկ դու իմ միակ ապաստանն ես, որ ինձ լրես ես անապաստան կդառնամ: արդեն տուն հասանք: լորիկ օյալացել եմ: էշ եմ եթ էշ: անասուց: մտնում եմ մուտք: արդեն դրան մոռա՝ վայ, լորիկ, ոնց եմ քեզ սիրում, մինչև կյանքիս վերջ առանց քեզ էլ իսկականից չեմ կարա: լորիկը հետևից գրկել ա վիզս ու այտը սեղմել այտիս:

40

Կարեն Ղարսյան

## Սեր ամեն հայացքից

Բոլոր ճարդիկ բացի Պոետներից  
Աննորմալ են

Մարդկության գերակշիռ մեծամասնությունն աննորմալ է  
Յետևաբար նորմալ է այդ աննորմալությունը

Իսկ երբ ես ըմբռատանում եմ այդ համատարած աննորմալության դեմ  
Ինձ համարում են աննորմալ

Բոլոր Պոետները  
Աննորմալ են

Յրաշք կա  
Չի կարող չլինել  
Եվ դրանում ես համոզված եմ նույնքան  
Ինչքան նրանում որ  
Եթե քիթ մի քիչ ավելի ծուռ լիներ  
Աշխարհի պատկերն այլ կլիներ  
Դու տոն ես

Առաջին Պոեզիան  
Ես գրել եմ քայլերովս  
Երբ իմ առաջին ուսանողական գիֆ սիրահարության ժամանակ  
Չափչփում էի քաղաքի փողոցներն ու նրբանցքները  
Քայլերիս հետագծերով գրելով իմ սիրելի աղջկա երկար անունը  
Թաղամասեր էի կտրում մտապահելով հսկայական տառերի հերթականությունը

Է Վ Ե Լ Ի Ն Ա

Մի քանի շաբաթվա ընթացքում հասցրել էի գրոտել  
Յսկայական մեզապոլիսի հատակագիծը  
Այնպիսի ձեռագրով  
Ավելի շուտ ոտագրով  
Որն ինձ կիասեագրեր ուղիղ հոգեբուժարան  
Աննախաղեա դիագնոզով – Լ Ի Ն Ա

Ես երազում էի դոիկ տալ նրա ամբողջ ջանը  
Ես երազում էի բռնաբարել նրա մարմնի բոլոր ծակոտիները  
Ես երազում էի կանգնել նրան դեմ դիմաց  
Ու քարկապել նրա երկար մազերն իմ երկար մազերին  
Մազաչափ արանքներից ներս ընկնող արևի ծառագայթների տակ վայելել լռությունը  
Ես երազում էի ցույց տալ նրան աշխարհն իմ աչքերում  
Ես երազում էի գոնե մեկ անգամ տեսնել նրան ուշ գիշերով  
Ու լուսնի փուլերի փոխարեն տեսնում էի  
Երկնքում թռչող նրա կտրած եղունգների բեկորները

Ես երազում էի մազերս սանրել նրա մատներով  
Նրա ներկոտ ծեռնահետքերով ներկել ավտոս  
Ես երազում էի պոկրտել նրա երկար մազերն ու  
Քաշել էլեկտրական կիթառիս վրա  
Ես երազում էի լինել նրա սիրած եռաչափ երկրաչափական մարմինը  
Ես երազում էի ատամներովս դակել նրա ծիծիկն  
Ու վիրուսնի պես հևալով քաշ գալ նրա ծծերից կախված մետաղի ջարդոնների հետ  
Ես երազում էի լինել նրա տաճը  
Ես երազում էի տեսնել նրան յուրաքանչյուր բացածս դռան հետևում  
Ես երազում էի տրուսիկի փոխարեն հագնել նրա հեշտոցը  
Ես երազում էի լինել նրա password-ները  
Ես երազում էի աշխարհին նայել նրա բլթակների ծակերի միջով  
Ես երազում էի դառնալ նրա կյանքի հասանելի բայց անմար երազանքը  
Ես երազում էի ծծենել նրան կայծակնային արագությամբ մեքենավարելիս  
Ես երազում էի խաչվել նրա մարմնին  
Ու այդ կերպ հավետ միախառնել մեր արյունները  
Ես երազում էի հետևել  
Թե ինչպես է նա իր երկար թարթիներով խոզանակում ատամներս  
Ու դառնում էի պոետ

Գեղեցիկ Արցիկ  
ԱՌ քեզ Գեղեցիկ Տղամարդ Գեղեցկություն Արարող  
Ել հ՞նչ է քեզ պետք  
Թե՞ գեղեցկարար իմ գործումնեությունը  
Վկայում է հենց քո ամենագեղեցկության անբավարության մասին

Նա սիրում էր ուրիշի  
2 x 2  
Շաբլոն պատմություն

Քեզ լքեցին բոլորը՝ քեզնից բացի:

Ինչքա՞ն էի սիրում նրա մարմնաշարժումների հիերոգլիֆները

Խելքը գնում էր լուսնի համար  
19 էլ չկար  
Շատ մի սենտիմենտալ երազկոտ տիպ էլ չէր  
Բայց գիշերները սիրում էր երկա՞ր նայել լուսնին  
Ու ես մտքիս դրել էի դառնալ տիեզերագնաց  
Որ գոնե լուսնի վրա մի լավ կշտանամ «ինձ» ուղղված նրա հայացքից  
Բայց ինձ վիճակված էր բավարարվել  
Քար տրաքի օդային ուղևորի կարգավիճակով  
Ու լուսնի փոխարեն

Ես թռա Ամերիկա  
Կոլումբոսի օդային հետքերով  
Նյու Յորքից տաքսիով սլանալով Նյու Յերսի  
Թռա Զորջիա նահանգ

42

Կյանքում առաջին անգամ փող աշխատելու  
Տքնածան աշխատանք  
Անքուն գիշերներ  
Ղեպեսիաներ  
Քունքիս հրացան  
Քինքիս թեքիլա  
Գերհոգնածություն  
Արտաժամյա ծանր աշխատանքներ  
Թունդ պլան  
Ուներիցս ծուխ  
Գործատուն յուրաքանչյուր դոլարը տալիս էր նույն դժվարությամբ  
Ինչ պրոստատիտով հիվանդ անդամագլուխը շեռի մեկ կաթիլ  
Մերը քունած կապիտալիստներ  
Սի քանի ամիս հետո տղեքով ավտո վարձեցինք  
Լիքը գարեջուր առանք  
Կոխմիք մեր զոթուզիքիլը քրքրված Տոյոտայի տուտուզն ու  
պոկվեցինք Ատլանտյան օվկիանոս  
Ծովի մակարդակը մեր կոփված մարմիններով բարձրացնելու  
Լողափնյա կայֆեր  
Լողափնյա վոլեյբոլներ խաղալ չիմացող գեղեցկուիկինների հետ  
Լողափնյա գրւյնզգույն բիկինիներն աշքներիս արևային ակնոցների տեղ որած  
Իրենց բիկինիները ման եկող ճվճացող աղջիկների հետևներից ընկած  
Լողափնյա կրակոտ քամակներից  
Ուայրուկ ընդունող ամառային արև

Ավազահատիկներով պատված  
Սավաննա քաղաքը լվացող օվկիանոսից թաց-թաց  
Ծանոթ-անձանոթ աղջկեքով տղեքով  
Մակընթացությամբ քցվեցինք գիշերային ակումբներ  
Վրաներիցս թափ էինք տալիս ջրի կաթիլները  
Մեր տոքսիկ կայֆի բացականչական նշանները  
Շարժվում էինք աղավաղելով դա Վինչիի  
«Մարդկային մարմնի համաչափությունների դիագրամը»  
Ղժժացինք պարեցինք խմեցինք տժժացինք կոխվեցինք թայց  
Ես համբուրվում էի այն գիտակցությամբ որ թքում եմ այդ բերանների մեջ  
Mad  
Poseidon  
ակումբում

Ես մի կերպ ծլկեցի խելացնոր drum&base-ի ռիթմների ու պարերի գժանոցից  
Ես լավ հարել էի ու գիշերվա ժամը երեքին  
Լուռ ու մենակ կանգնած էի մի քանի կիլոմետրանոց  
Իմ պես ճոճվող կախովի կամրջի վրա  
Ու պատկերացնում թե ոնց եմ կարոտից խելագարված Լինայի պատվերով  
amazon.com-ի հոգատարությամբ նավով փոխադրվում նրա ծոցը...  
ՀԵՏԻՌՆԻ ՄՈՒՏՔՆ ԱՐԳԵԼՎՈՒՄ Է  
Քանուն հակառակ քայլերս տանում էին լուսարձակ քաղաքից հեռու դեպի մթություն  
Ես գիտեի որ կամրջի մյուս կողմում Հարավային Կարողինան է

Ես զգում էի ինչպես էր Լինան մյուս կիսագնդում տեղաշարժվում  
Երկրագնդի վրայով որ մի կրկեսային գնդակ է  
Ու պտտվում է նրա քայլվածքի հակառակ ուղղությամբ  
Որոշել էի Կարողինայի մոտակա մութ ափում մենակով լողանալ  
Հատուկենտ հսկայական բեռնատարներ էին մեծ արագությանը անցնում

Մրությունն առջևում իրոք վախենալու էր  
Ու խորհրդավորություն կար այդ անտեսանելիության մեջ  
Խնածությունս մնաց հետևում

Այսպես ոտքով գնում էի ին հարազատ քաղաքի մի ծայրից մյուսը

Դեպի *LoveStreet*

Որտեղ բնակվում էր ին սիրունիկ աղջիկը

Նրա տաճ պատերն ականջներիս սեղմած

Աշխարհին խոլ վնտրում էի նրա ձայնը կենցաղային շըրովի-թըրովիը  
Գոնե հազը գոնե բժիկոց գոնե զկոտոց գոնե աղիքային քամիները

Հիմա քայլում էի մենակ գիշերվա հազարին աշխարհի մյուս ծայրում մի ճոճվող կամրջով

Սիրտս հզոր յաերով վաղուց նոկառու էր արել սառը դատողությանս

Սիրտս լուր թպրտում էր գլխատված սպիտակ աղավնու պես

Նայեք նրա աչքերի մեջ

Դետո գնում էի ընկերներիցս մեկին դիվադադար անելու

Դուռը ջարդում էնքան մինչև բացեին

Դուրս քաշում քնաթաթախին

Ու ձմեռվա սառնամանիքին ոգևորված պատմում հոգեվիճակիս մասին

Բերանիցս դուրս եկող գոլորշու մեջ տեղադրելով ցնորված նտքեր

Շեռվից դառը տեսարանը զվարժալի կոմիքսի էր նման

ճայ անցավ կամրջի տակով

Կողս դեմ տված քայլում էի դեպի *Endless Night*

Հասմելու Հարավային Կարողինա

Ին անկուշտ սիրո Մեքքան

Որ կրում է բաղծալի անունը

Կ Ա Ր Ո Լ Ի Ն Ա

Ին առաջին սիրո Պոեմի վերնագիրը

Բաղկացած ին ու նրա անունների վանկերից

Ու ոտք դրեցի Կարողինայի հողը թե չէ

Պատահեց անսպասելին

Կարողինայում

Ես տեսա աղավաղված պատկերներ ին «Կարողինա» պոեմից.

«Կարբիոլետում նա է ու նա. ճանապարհում է նրանց քնկոտ օձը

... դեպի Գրողի ծոցը»

Աչքերիս առաջ մի տեսարան էր բացվել

Welcome to South Carolina! գրվածքով մեծ ցուցանակի դիմացի մայթին

Վրաերթ արված հաստ ու երկար օձ

Երկարության կեսը սեփական արյան չորացած հունն էր

Քիչ հեռու

Մի քանի տարվա հնության փոշիով պատված կարբիոլետ իջած ակերով

Երկար նայում էի

Սառը քրտնքի միջով

44

Մոլի աթելստի դեֆոկուսացած տեսադաշտում  
Ուրվագծվում էր ԱՍՏՎԱԾ  
Ու դաշնում էի պոետ

Հետղարձի ճանապարհի մի մասն անցա հետևանց  
Տեսարանը փոքրանում էր վառվող թղթի պես  
Իր ստվերի հետ ծանոթացող փոքրիկ փիսիկի պես  
Ես վերստին ծանոթանում էի ինքս ինձ հետ

Ինձ մինչ այդ թվում էր թե ինձ համար  
Պոեզիան ոչ այլ ինչ է քան սերս արտահայտելու մի միջոց  
Բայց իհնա արդեն պարզ գիտակցում էի որ  
Ինձ համար  
Սերը ոչ այլ ինչ է քան  
Պոեզիա արտահայտելու հազարավոր միջոցներից մեկը  
Ու դաշնում պոետ  
Որը ձայնն աշխարհը գցած հայտարարում է

Մարդու մեջ զնահատելի է մենակ Պոեզիան  
Մնացած որակները փուչ բաներ են

Սիրահարությունը մարդասիրության մայրն է

Ես սիրում եմ քեզ

Արևելքն ու արևմուտքը շարունակ վոլեյբոլ էին խաղում  
Արևով մի քանի տասնյակ նետում հասցրին փոխանակել  
Մինչ հոգնած ջարդված կհասնեի Ամերիկայից տուն

Ինչպես օձի խայթոցից դեղ  
Նրա անտարբերությունից Պոեզիա քամելու

Արթուր Սահակյան  
([www.bnagir.am](http://www.bnagir.am/)-ի «Ընթերցողի գործեր» էջից)

## Զինվորի օրագիրը

([http://www.bnagir.am/?go=readers&r\\_work=454](http://www.bnagir.am/?go=readers&r_work=454))

Նրա գլուխս մի փոքր ցափում էր, ինչ-որ բան էր ուզում, բայց ինքն էլ չէր կարողանում հասկանալ, թե՝ ինչ: ճաշարան չէր գնացել, քնելու նպատակով մնացել էր ռադիոկայանում, որը փոքր ննջասենյակի մեջությամբ բավական հարմարավետ մի սենյակ էր: Պառկել էր և ուզում էր քնել, չէր ստացվում, գուցե սարքավորումների թույլ դգողոցն էր խանգարում, դրանք էլ անջատեց, էլի չօգնեց, միևնույն է, չէր կարողանում քնել, հավանաբար այն պատճառով, որ օրվա մեծ մասը քնած էր անցկացրել, քանի որ կիրակի էր ու հնարավորություն կար քնելու, ծառայությունն անցկացնելու ամենահարմար տարրերակն է դա: Յիշեց օրագիր մասին: Սովորության համաձայն կարդաց վերջին գրառումները, գորեց ամսաթիվն ու սկսեց նկարագրել կրկնվող ու ոչ հիշարժան իրադարձություններից այն մի քանիսը, որ հարմար գտավ այդ պահին: Մի փոքր գորելուց հետո կանգ առավ, ամիսներ առաջ կատարված իրադարձությունները մեկը մյուսի ետևում աներեսաբար իրենց հիշեցնել էին տալիս արդեն որերորդ անգամ, սկսեց թերթել օրագիրն ու վերիիշել ...

Ծառայության մեկնելուց առաջ ծառայությանը վերաբերող ոչ մի բանի մասին լուրջ պատկերացում չուներ, այդ ամենը նրան ընդհանրապես չէր հետաքրքրել: Լրիվ նոր միջավայր ընկավ, որտեղ այլ արժեքներ էին գնահատվում, իր կարծիքով՝ կեղծ, պարզամիտ, բայց ոչինչ անել չէր կարող, միայն մի քանիսն էին ինչ-որ չափով իր նման մտածում, նրանք էլ ավելի հեշտ ու հարմար ապրելու համար դարձել էին ամբոխի լիիրավ ու լիարժեք անդամ, իսկ ինքն իրեն երթեք այդպիսին չէր էլ կարող պատկերացնել, հասկանում էր, որ շրջապատն իրեն հարմարեցնել չէր կարող, ինքն էլ հարմարվել չէր պատրաստվում, միայն թե կարողանար առանձնանալ այդ ամեն ինչից ...

Սկիզբը պարզ էր, վերջը չէր երևում՝ երկու տարի. օրերը տարիներ էին թվում: Շուրջն էր նայում ու փորձում հասկանալ, թե համածառաջողությունն այդպես տենդագին ինչ «կարևոր» պրոբլեմներ են լուծում և առհասարակ ինչոք են զբաղվում: Դետաքրքիր զբաղմունք էր, մանավանդ որ արդեն մի քանի տարի հոգեբանություն էլ էր ուսումնասիրում: Օրեր անց պարզվեց, որ շատերը բավական լուրջ առավելություններ ունեին իր նկատմամբ, ի տարբերություն իրեն, ձեռքները ծալած

չէին նստել: Ու սկսվեց ծառայությունը, ու հասկացավ, որ ծառայությունը շատ հետաքրքր ու կարևոր մի «խաղ» է, որի ժամանակ ստիպված ես միայնակ գտնել քո տեղն ու դերը ամբոխի մեջ, իսկ հայրենիք պաշտպանելու ու բանակին, պետությանը ինչ-որ բանով օգտակար լինելը ոչ թե երկրորդական, այլ երրորդական, չորրորդական նպատակներ են, նույնիսկ նպատակ էլ չեն, համոզվեց, որ սահմանում ոչ մեկն իր ցանկությամբ գիշերն արթուն չի մնա, որ հանգիստ խղճով կը մի՝ անկախ ամեն ինչից, և որ իիմանականում այդպես էլ լինում է: Ստիպված էր մասնակցել խաղին, խաղից դուրս գտնվողներին երթեք չեն ներում: Կամաց-կամաց մտավ հունի մեջ, մյուսների նման իր ամբողջ հնարավորություններով սկսեց պայքարել՝ այդ ամբոխի մեջ իր տեղն ու դերը բարելավելու ու ավելի կարևոր դարձնելու համար: Խաղին մասնակցում էին բոլորը, նույնիսկ սպաները, նրանք էլ պայքարում էին իրենց իշխանությունը գինվորների վրա մեծացնելու, նաև նյութական շահ ստանալու համար ...

Ամիսներ էին անցել, արդեն ռադիոկայանում էր, հաջողվել էր բավական լուրջ տեղ ունենալ այդ ամբոխի մեջ. պարագլուխներից չէր, բայց դրան երթեք չէր էլ զգտել, իր նպատակին հասել էր, առանձին, հարմարավետ անկյուն ուներ, չէր խառնվում գորամասի առօրյաին, նրան ոչ-ոք չէր էլ փորձում նեղացնել: Առավոտյան վերկացն ու մարմնամարզությունը, անձնակազմի ամենօրյա ստուգումներն ու նման՝ որքան պարտադիր, նույնքան էլ տիած արարողությունները մեծամասամբ անցնում էին առանց նրա մասնակցության և առանց սպաների կողմից նրա գոյությունը հիշելու: Ամենակարևորն ու հաճելին մինչև ժամը ինը քնելն էր. նման ճնշություն իրեն նույնիսկ մինչ ծառայությունը թույլ չէր տվել: Սպաների համար կարծես մի քանի ամիս առաջվա նույն գինվորը չլիներ, կապավոր էր, ռադիոկայաններին վերաբերող հարցերում, զինվորների մեջ ամենալավ կապավորը ինքն էր, դժվար չէր իր համար սարքավորումներից գլուխ հանելն ու ինչ-որ նոր բաներ սովորելը, միայն թե ամենօրյա պարտադիր վեճերից հետո տրամադրություն ու ժամանակ մնար իր այդ «հիմնական» զբաղմունքի համար ...

Գիշերը գորեք չէր քնել, միայն ժամը հինգից հետո ինքն էլ չէր զգացել, թե ինչպես աչքերը փակվել էին, արթնացել էր զինվորների վազքի ձայնից՝ առավտոյան մարմնամարզության ժամն էր: Հարված, նյարդային վիճակը բոլորովին չէր թուլացել, երևի դա էր պատճառը, որ խորը չէր քնել, թե չէ այդ ժամին իրեն ոչ մի ձայն չէր արթնացնում: Ամբողջ գիշեր այդ մասին էր մտածել,

46

բայց չէր կարողացել որոշել, թե հետագայում ինչ անի, թե իրադարձությունների ամենահավանական զարգացումն ինչպիսին կլինի: Աչքերը բացելուց անմիջապես հետո էլ սկսեց մտածել այդ նասին. իր կարծիքով սպաների մեջ նաև կգային ռադիոկայան, նորից պիտի սկսեին խոսել ծեծված, զորամասում միշտ կրկնվող ու ծանծրալի թենաներից ... Ականայից սկսեց մտքում թվարկել այն ցածրաստիճան սպաներին, որոնք առիթը բաց չէին թողնի իրենց սիրտը մի փոքր հովացնելու, հաճախ էր լսել, թե երես առած ու լկտիացած կապավորին իր տեղը ցույց տալ է պետք: Մտածում էր, թե ինչպես կպատժեն իրեն, իսկ որ կպատժեն՝ չէր կասկածում: Դեռ ոչ մի լուրջ եզրակացություն չէր արել, երբ լսեց շեփորի ձայնը: Առավոտյան ժամը ինն էր, արդեն միշտ ժամանակն էր, քիչ հետո ներկայացումը կավացեր: Որոշեց, որ հարկավոր է մեկ անգան էլ վերիիշել կատարվածն ու ինքն իր համար կրկնել, թե որ դեպքում ինչ պետք է անել, չնայած վերջնական որոշում կայացնում էր միշտ վերջին պահին: Վերիիշելու այնքան էլ բան չկար, երեկ իր անփության պատճառով շարքից դուրս էր եկել պահեստային ռադիոկայանը, վերանորոգել չէր կարող. սարքավորումներից մեկը պահանջվածից բարձր լարում էր ստացել ու վառվել: Նորից փորձում էր հասկանալ, թե ինչ կմտածեն կատարվածի մասին, երևի մտածեն, որ զլացել է որևէ սպայից հարցնել ու որոշել է ինքնագլուխ միացնել, և ահա արդյունքը. չէ, դժվար թե, չէ որ ինքը չորս – հինգ նման սարքավորում է վերանորոգել, որոնք նույնիսկ մասնագետ սպաները չէին կարողացել վերանորոգել: Յարկավոր էր օգտվել այն հանգամանքից, որ իբրև կապավոր իրեն լրիվ վստահում են, իսկ թե՝ ինչպես, դեռ չէր հասցրել որոշել, երբ մյուս կապավորը ցույց տվեց, թե նախորդ օրվա հերթապահ սպան ինչպես է հրամանատարին ինչ-որ բան բացատրում՝ այդ ընթացքում ծեղորվ ցույց տալով ռադիոկայանը: Յանանատարը կանչեց կապի համար պատասխանատու սպային, հանձնարարեց բարձրանալ ռադիոկայան: Ռադիոկայան բարձրացող սպան, հակառակ իր զբաղեցրած պաշտոնին, մասնագիտությամբ պատճառաբան էր, ռադիոտեխնիկայից ոչինչ չէր հասկանում, հավանաբար մեկն էր այն չկայացած մաս-

նագետներից, որոնք այլ աշխատանք չգտնելով՝ համալրում են մեր բանակի սպայական անձնակազմը: Մի քանի րոպե հետո այդ նույն սպան ջանասիրաբար հրամանատարին բացատրում էր, որ սարքավորման մեջ անսարքություն է եղել ու նույն ջանասիրությամբ պնդում միայն իրեն հատուկ հիմարությամբ արված մի ենթադրություն, թե վերանորոգելը շատ հեշտ է, ինչո՞ւ՝ հավանաբար չի ուզում տիհած պատմության մեջ ընկենել: Իսկ գուցե ռադիոֆիզիկայում նոր դարաշրջա՞ն պիտի սկսվեր՝ հանձնին ոմն չկայացած պատմաբանի, որին չկարողացան գնահատել, նա էլ երեկոները դարդից խնդրմ էր ու հայույն հանդիպածին՝ չդադարելով զարմանալ, որ էտ անտեր զորամասում միայն զինվորների է հանդիպում:

Պահեստային ռադիոկայանը չէր օգտագործվում, բոլորը շատ արագ մոռացան դա, նույնիսկ կապի համար պատասխանատու սպան, միայն ինքը չէր կարողանում մոռանալ. չէ, խիղճը չէր տանջում, որ մեծ վնաս է հասցրել զորամասին, պարզապես չէր կարողանում հասկանալ, թե ինչպես կարելի է այդքան հիմնար լինել ու ննան արադրը անպատիժ թողնել, երբ որոշ մանր ու աննշան խախոռների համար այնքան մեծ կարևորությամբ ու ջանասիրությամբ են պատժում: Նրա կարծիքով դա գալիս էր անտարերությունից ու անհետևողականությունից, որը առկա էր հավանաբար ոչ միայն իրենց զորամասում:

Բանակը ինչ հաջողությունների էլ որ հասել է, հատկապես զինվորների առողջության հաշվին ու նրանց, այսպիս ասած, ֆայմի շնորհիկ է: Ասում են, որ ծառայությունից մնում են միայն ընկերներն ու հիվանդությունները, ինչու չէ, նաև իրական ու ոչ իրական հուշերը:

Մնաց միայն հատուկ շնորհակալություն հայտնել պաշտպանության նախարարին, որ այդքան հիմնար սպայական անձնակազմով կարողանում է բանակը գոնե այս ծեսով պահել, պատկերացրեք, որ դա իսկապես հերոսություն է՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ բանակն էլ նրա համար ոչ թե երկրորդական, այլ երրորդական, չորրորդական խնդիր է. բենգին, ՅՅԿ, հյուրանոցային ցանց ... բանակ, էն Քոչարյանն էլ մի կողմից՝ բա մեղք չի՝ էտ մարդը:

## Կարիճե Գասպարյան

...Օֆ...

Վաղուց լուսնին չեմ նայել,  
Բյուր աստեղոն էլ չեմ համարել,  
Միևնույն է, նրանք իմ կարիքը չունեն:  
Վաղուց լուսնին չեմ նայել,  
Ինչ քաղաքականությամբ եմ զբաղվում,  
Իսկ սիրո հարցում ընտրություն արդեն արել եմ՝  
Կարդալով համապատասխան կուսակցության  
ծրագիրը:  
Ամեն ինչս համապատասխանում է ժամանակին.  
Դամամասնականով ընտրել եմ քեզ,  
Մեծամասնականով՝ քո գաղափարները,  
Միայն, ինչպես և կյանքում, զգիտեմ,  
Արդյոք կկատարե՞ս գոչած՝ գործերը, ծրագրերը,  
Կամ թե ընտրակաշառք տվող թեկնածուի պես  
Կուրանաս խոստումդ և՝ այն,  
Որ ընտրակաշառք ես տվել, ու ես վերցրել եմ:  
Ես կյանքում խարվող չեմ,  
Եթե միայն ինքս չուզեն խարվել,  
Քանի որ ինձ համար միևնույն չէ՝ դու կընտրվես, թե՝ ով,  
Կամ էլ զոնցիկով մի հաստագլուխ կով։  
Ինձ այնքան վատ եմ զգում, ավելի ծիշտ չեմ էլ զգում,  
Կարծես բեռնատարի տակ ընկած լինեն,  
Կարծես անդամալոյժ լինեն, որը զգում է իր  
Անդամի բացակայությունը ու չգիտի՝  
ինչպես հետ ստանա այն։  
Լուսակրի մոտ կանգնած սպասում եմ  
Կարմիր լույսին, բայց հակառակի պես այն կանաչից  
Ու դեղինից բացի ուրիշ գույն չի ծանաչում։  
Բայց ինչո՞ւ եմ փողոցն անցնում, միթե քիչ էր  
Բեռնատարի հարվածն ուղեղիս, գիտակցությանս,  
Բայց կարծես թե ակամայից հասկացել եմ,  
Որ այս փողոցն ամենաին էլ իմ անցնելու բանը չէ,  
Ու լուսակիրն էլ անընհատ իրենն է ամորում։  
Միայն չեմ հասկանում՝ թեկնածուն  
Ինչպես լուսակիր դարձավ։  
Բոլորն ասում են, թե ես խելագար եմ  
Կամ թե՝ տարօրինակ, որովհետև իմ հայացքները  
Կտրուկ են ու երկար ժամանակ անփոփոխ։  
Ինչպես կարող են կտրուկ չլինել,  
Եթե ամեն րոպէ հիշում եմ, թե ինչպես  
Բեռնատարի տակ ընկա:

## Տես էլ չիմացա, թե ով...

Նրանք ծնվում ու մեռնում էին: Կյանքը տևում էր  
Միայն օդից գետին տարածության մեջ: Նա  
հաճուքով էր փչում, թաթախում ու փչում: Սպիտակ,  
Թափանցիկ: Իսկ միգուցե դա՞ է ճիշտը:  
Պղպջակ եմ ես, պղպջակ ես դու  
Պղպջակ է նա  
Պղպջակ ենք մենք  
Պղպջակ եք դուք  
Պղպջակ են նրանք  
Պղպջակ պղպջակի հետևից...  
Իսկ ո՞վ է դրանք փչում.  
Պղպջակ, իսկ միգուցե՝ թիթե՞ո, միգուցե՝ միեղջյո՞ւր,  
Իսկ միգուցե՝ ե՞ս կամ դու՞ք...  
Տևողությունը պատսպարվել էր ավելի  
Ժամացույցի մեջ ու հոսում էր, իսկ ինչո՞ւ՝ էր, այլ ոչ թե՝ է,  
Եթե այն կարողանար  
գգուշացնել  
ուշացնել  
սպասել  
Ժամանակը սպասել չի սիրում,  
ճշտապահ է, չի ուշացնում,  
Նա մեզ խարում է, թվում է՝ խարում է,  
Իրականուն մենք ենք նրան խարում,  
պահածոյացնում ենք, նրան խարում՝  
Վրան եռնան արդիականություն լցնելով,  
Եվ բացում, երբ բացում ենք ֆոտոալբոնը,  
Էկրանը  
հիշողությունը  
Իսկ միգուցե ժամանակը... այո, բաքնված է  
Հիշողության բազմաշերտ պահոցում  
Ֆայլերի տեսքով:  
Ես չեմ ուզում երբեք կորցնել հիշողությունս:

## Ես հո ծեռը կրակը չեմ ընկել...

Հիշում էի ամեն ինչ ու տեսնում  
Թօչունների մարդկանց տեսքով  
Հետաքրքիր է ոնց էին ճախրում  
Ապրում  
Երգում  
Խոսում  
Շայինյում  
Այդքան մեծ ու հենց դրա համար էլ փոքր  
Գիտակցական հիշողությանս գալակտիկայում թռչունները  
մարդիկ  
Ժամանակները

49

Այնքան կարծ ժամանակամիջոցում  
Եթե ցանկանայի էլ ջուն կգար

Էլ անձրև  
Էլ դու  
Էլ նրանք  
և այդպես շարունակ

Չգիտեմ ինչքան տևողություն գլորվեց  
Այն ընթացքում որ խորհում էի: Չհասցրի հաշվել  
Որովհետև ժամանակի մասին չէի մտածում:  
Ես շատ անգամներ չեմ խորհել  
Քենց այնպես բոլորի ու ոչ մեկի մասին  
Ին մեջ շատ ժամանակ է անցել  
Ին մեջ չծախսված ժամանակներ էլ կան  
Որակյալ ու անորակ  
Գույնզգույն ու սևորակ  
Սառնորակ  
Ավելի ճիշտ սառած Գրենլանդի սառուցմերի պես  
կանգուն ու...

Լուսումութին, երբ արդեն անհետանում  
էին բարի փերիներն ու  
Յավերժահարսները լուսանուտի  
Դեղնորակ լույսն օժեց իր ոսկով դեմքին  
Կիսալուսինը  
Այլսս ցերեկ չէր որ զվորնեին  
Անորակ-տեղական երևանցի  
Նաև էջմիածինցի ճանճերը և  
Շարքային բռնժ պապիկը նույնիսկ  
Անռանը իր գլխին մորթե երկլեզվականի  
Գլխարկ դրած չի գա  
Աղբարկից շշեր մաքսագերծելու  
Յանձնազերծելու:  
Ահա մեր ավանդական լուսինն էլ  
Իր լույսերով համբերձ պատրաստվում է  
Պահմտոցի խաղալ աստղերի հետ  
Ու մտնում է տասներկուժամյա թաքստոցի մեջ,  
Խսկ երբ «պատառ» է լինում մեզ մոտ դիտվում է  
Լուսնի խավարում:  
Խսկ քո դեմքը մնաց առաջին տողերիս  
Վրա սիրելիս: Կներես քո մասին մի  
Ուրիշ անգամ կգրեմ:

## ՈՒԶՈՒՄ ԵՒ

Թռչել ու հասնելով երկնքին  
Անձրև տեղալ ծարավ գույզերին  
Սիրո ծարավը հագեցնել նրանց  
Մեղրաջրով սիրատոչոր

Նեղացնել հորիզոնն ու արևի լույսը  
Փոխանցել քո բանկային հաշվի վրա:  
ՈՒԶՈՒՄ ԵՄ...  
Երբեք չզգալ հոգևոր սով ու ծարավս  
Յագեցնել հավերժական համբույրների  
Զրով նրա,  
Ամպերին նկարել քո սրբապատկերը  
պաշտելի

Ու մի կտոր կանաչ դոլարի  
Հոտած խարտուր կուլ տալով  
Վերջ տալ այս խեղդուկ առաջացնող  
Անիմաստ ու անդադրում սպասմանը:

ԿՈՒԶԵՄ...

Նորից լսել առաջին աքլորականը  
«Յարազատ» Թղթի գյուղուն  
Ու խելագարված երջանիկ գույզերին  
Թաքուն հետևել ինչպես այն անցած  
Բայց երբեք էլ անցյալ չդարձած  
Յավերժական մանկությանս օրերին

## Ասք սովետական կարգերի փլուզման մասին

Արագավագ ջոեր ու քաղաքի եռուցեա  
Աշխատանքի շտապող առավոտյան ամբոխ.  
Այս, ճիշտ եք նկատել, այսօր, ինչպես և միշտ,  
Արագության օր է, այսօր, ինչպես և միշտ,  
Աշխարհի՝ այդքան սպասված ու ճիշտ չգուշակված  
վերջին օրն է:

Այսօր հայիհորոննետի տվյալներով  
ճառագայթման օր է, և արևն էլ երևի  
Գլխիս է խփել,  
Սագնիտոֆոնիս ծայներիզն էլ ինչեցնում է  
PINK FLOYD-ի լուսնի մոլթ կողմերից մեկը:  
Իսկ ինձ համար մոլթ, այսինքն չբացահայտված  
մնաց քո պահվածքը մեր վերջին  
համիլաման ժամանակ:  
Երևի դու էլ գիտեիր, որ այսօր հենց այն օրն է  
Դե, աշխարհի այն վերջին օրը, որի մասին վերևում նշեցի.  
Այս ոռը ինձ տանում է անվերադարձ:

\*\*\*

Սև թեյի բաժակի հատակին հանկարծ  
Ինձ տեսա ու հետո ինձ տեսա  
Դրսում, անձրևանոցը ձեռքիս  
Վազում էի անձրևից պատսպարվելու,  
Քիշում եմ, հազ կաշվե  
Ծնկներիս հասնող կիսաշրջազգեստ էր,

Անձրևանցս էլ էր սև կաշվից,  
Ուրեմն, եթե ապահով էի,  
Ու՞ր էի փախչում:  
Մտքովս այդ վայրկյանին անցավ.  
Ճետաքրիդ է, ի՞նչ է մտածում  
Այն մարդն իմ նասին, ով  
Կարդում է իմ՝ բանաստեղծական  
Տողերով գրած արձակը, որի ամեն տողատակից,  
Տողատանիքից ու տողավերջից  
Ստորակետի, բութի, միջակետի,  
Կամ լավագույն դեպքում  
Վերջակետի փոխարեն խոնավության  
Դուռ է գալիս, իսկական,  
Գարնանային խոնավության  
Զգվելի հոտ: Ուր ամեն մի  
Բառափոխին մի նեխած  
Բառի ես հանդիպում ու  
Փոտանեխագորշահոտ  
Բառակապակցության.  
Ես զգվում եմ, զգվում եմ  
Ինձանից, ուղղակի ինձանից  
Խորշում եմ, և իմ կարծիքով  
Այն անձրևային օրը  
Երբեք էլ չի եղել, իսկ եթե  
Լինի էլ, այն կլինի ամենա  
Ամենամաքուր, ամենամաքրողը  
Եվ ամենամաքրողը այս  
Գարշանեխած ու նավածիսի  
Քուլաների վրա կառուցած  
Աշխարհում:

\*\*\*

Այսօր օր է: Տրամադրությունս էլ  
Փարաջանովյան տրամադրություն է:  
Այն ակնոցով, որի մի ապակին  
Երկնագույն է և մյուսը՝ վարդագույն,  
Ուշադիր մանկան հայացքով  
Նայում եմ երկնքին և աչքիս  
Նկատվում են ասեղնագործած

Անմեղ թռչուններ, որոնք  
Քանու շարժման ուղղությամբ  
Պար են գալիս գտված օդում:  
Ճանկարծ մի թռչուն ակնոցիս  
Վարդագույն ապակուն շատ  
Մոտեցավ և ես նրա թևի  
Վրա նկատեցի մի գիր:  
Այն այսպես էր սկսվում.  
Ինքնակենսագրական: Ես այսինչ-  
Այնինչ կարապն եմ, ծնվել եմ  
Քո մտքից 2 րոպե առաջ, երբ  
Դրեցիր երկգույն ակնոցդ,  
Ամուսնացած եմ, ունեմ երկու  
Կարապիկներ: Կինս կես  
Վայրկյան առաջ օդում  
Ինֆարկտից մահացավ և ընկավ  
Ուղիղ լճի մեջ:  
- Բայց, մի րոպե, ի՞նչ լիճ,  
Այստեղ ոչ մի լիճ էլ չի եղել,  
Եվ հետո, դու երկու րոպեում  
Ինչպես հասցրիր ամուսնանալ,  
Ունենալ երկու կարապիկ  
Եվ դեռ օդում կորցնել կոնջ,-  
Յարցնում եմ ես նրան:  
- Սիրելիս, ես ծնվել եմ քո  
Մտքի ջրառատ հեռուներում,  
Իմ տոհմը գտնվում է  
Քո բազմազբաղ մտքի  
Զրամերձ կանաչ հեռաստաններում,  
Եվ վերջապես իմ ճակատագրի  
Ճետագա դասավորությունն էլ  
Քեզանից է կախված,- մեղմ  
Տոնվ բանաստեղծեց կարմրաթուխ  
Սպիտակափետուր կարապը,-  
Խնդրում եմ, բաց թող ինձ, որ  
Շարունակեմ ճախրել դեպի  
Յայրենի ջրերը:  
- Խնդրեմ,- ասացի ես՝ դադարելով երազել ու նայել  
Երկնքին վարդա-երկնագույն  
Ակնոցիս ապակիների միջից:

50

## Առն Զավախյան

### Ապրիլի 12-ի՝ լուս 13-ի գիշերը

- Կրակել ուղիղ նշանառությամբ,- վերուստ հրամանը սիրտ էր քրքրում:

Կատաղի ծայմերը գնալով բորբոքվում էին, առաջ մղվում: Առջև փշալարերի գալարում խրձեր էին, ուղանքյուն վահաններով պատճեշված սաղավարտավոր ոստիկաններ ու հսկա դոդոշի պես ասֆալտին մեկնված ջրցան մեքենա: Մետաղական գորշ զանգվածը սողում էր դեպի ամբոխը: Զրի մոլեզին շիթը բախվում էր հոծ բազմության ու նրանց իր փրփրում երախն առած՝ սելավի պես քշում փողոցն ի վար: Նրանք գալիս էին նոր ուժերով ու նոր կատաղությամբ:

- Բըռնա-պետ-հեռա-ցիր... Բըռնա-պետ-հեռա-ցիր..., - «դոդոշ անձրևսի» տակ սատանի պար էր բռնել զազազած ամբոխը: Եվ որքան ջրերը հորդարուս էին, նույնքան կշռութող էին նրանց ձեռքերի թափահարումը և կայտառ ոտքերի ոստյունը:

- Կրակ, կրակ՝ ուղիղ նշանառությամբ,- ընկալուչի միջից հրանանը ականջ էր ծակում:

Սպան կանգնել էր գունատ, խոլ ու համր և ասես անհաղորդ այդ ամեն ինչին: Մինչդեռ հանրապետության բախտը իր ձեռքի մենմենակ, փոքրիկ մի շարժումից էր կախված: Սաղավարտավոր ոստիկաններից անդին՝ ձախ ու աջ թևերում կարմիր բերետավորների շարայունն էր, որ պատրաստակամ սպասում էր նրա նշանին: Նրանց՝ լեռնեցու արևահար դեմքերն ու դարբաղված կաշին երկաթյա զենքի շփումից ու տաղտկալի սպասումից բեզարած քրտնել ու տեղում դրփող արշավածիու պես կօրու, թքու հոտեր էին արծակում: Ցուցարարներն ու նաև հեղձուկը, զենք ու զրահով ծանրաբեռն, սեղմիրան զինվորներն, անաստո ուսադիրների և կաշեփոկ կոշտ համազգեստների տակ կաշկանդված հոգնախաշ մարմինները մի բան էին ուզում՝ ազատագրում... որքան հնարավոր է չուտ, վայրկյան առաջ ազատություն... Գիշերվա մեկն անց էր երեսունմեկ րոպե: Տասնինգ րոպե առաջ էին մարել մայթեզրի լույսերը: Ամեն ինչ արվում էր մթան քողի տակ:

Սպան հասկանում էր, որ իրավիճակը դուրս էր գալիս հսկողությունից: Տիզակների պես առաջ էին մեկնված դրոշների կոթերը, ող էին միսրճվում մերկ բռունցըները, դեպի իրենց էին թշում քարեր, փայտի կտորներ, ապակյա և պլաստիկե շշեր, ձեռքն ընկած պատահական կենցաղային իրեր... Սակայն իր ձեռքը չէր բարձրանում, լեզուն չէր շարժվում, մարմինը գամվել էր գետնին, խոսքը պապանձվել էր կոկորդում... Սիրտն

ուժգին համազարկով արյունը մղում էր դեպի գլուխը՝ երկփեղկում միտքը: Միտքը, որ վարժված էր միայն հստակ ու արագ գործողությունների հրականացմանը, հիմա կարող էր և երկմտել: Կատարվել էր անկարելին: Սպան մտածում էր: Ժամանակը սուրում էր մտքից արագ: Ականի վրա ժամանակացույցը մարում էր վերջին վայրկյանները: Ի՞նչ անել,- աշխարհում և ոչ մի Շամես չէր կարող սպահել կենաց խմբիրը: Քննության էր դրված անքննելին՝ հրամանը: Պատկերացնել կարելի էր պատասխանատվության աստիճանը: Թիկունքում նա էր՝ հրամայողը, որին հավատարմության երդում էր տվել, առջևում մարդիկ՝ քոյրեր և եղբայրներ, հայրեր և մայրեր ու երեխաներ, երեխաներ, որոնք կարող էին և չլինել, եթե միայն սիրու պաղեր, հոգին մեռներ, ձեռքը բարձրանար, լեզուն խոսեր, և բերանը հրամայեր: Իսկ ինչ՝ դը... Ատամները զարկվեցին իրար: Պատասխանատվության զգացումը թակում էր սիրու: Ի՞նչ անել, ի՞նչ անել... Տեր Աստված, որ քննում ես աշխարհին բարքերը, որ արդար ես և ամենադատ, որ խավարը լույս ես դարձնում և լույս՝ փրկության ուղի... Ու՞ն են կենաց շավիղներո, ու՞ն է հույսի թեկուցս փոքրիկ շողը, որ անելանելից դեպի ելքն է տանելու: Ատամն ատամին էր սեղմփում, կրծտում ու կափկափում՝ արյունոտելու աստիճան խածելով շուրթերը, լեզուն... Սիայն թե զսպեր չարագույժ մղումը, միայն թե կալաներ չարյաց մեծագույնը, միայն թե փակ մնար չարիքի դարպասը...

Մինչդեռ կես ժամ առաջ հարաբերական անդորր էր: Նստած էին ասֆալտին... Ազգովի առաջին անգամ նստացույցի էին ելել ութունութին: Գետնին նստած ասում էին. Ղարաբաղը կտա՞ք՝ վեր կկննանք, չեք տա՞՝, կնստենք: Պատասխանատուն կոմկուսն էր: Ղեմիրճանը եկավ, ասաց՝ Ղարաբաղը ջերու՞նս ա, որ տամ... ժամանակներն էին այդպիսին: Դիմա առաջնորդի գրապանում Ղարաբաղ չէ, Ջայաստան էլ է տեղավորվում: Անկախություն է, ինչ ուզենա՝ կանի. կուզենա՝, գրանում կապահի, չի ուզենա՝, կզցի՝ ոտքով կտրորի: Եղածը մի բուռ հո՞ն չի... Ազգովի էլի մանկացել էին: Նստել էին գետնին: Ասում էին, մեր երկիրը մեզ կտաք՝ վեր կկենանք, չեք տա՞՝, կապրիզ էին անում, կմնանք ասֆալտին: Ո՞վ իր ունեցածը ուրիշին կտար: Սպան հրահանգ ստացավ. դիմել նախազգուշական միջոցների: Լույսերը մարեցին: Մեկն անց էր տասնվեց րոպե: Մռայլ գիշեր էր: Լուսինը ամպերի միջից վախվորած ծիկրակում էր: Մարդկային բազմությունը մակաղած հոտի պես բռնել էր փողոցը: Նրանք հանգիստ պառկած էին զետնին կամ էլ մայթեզրի բարերին նստած խաղաղ գրուցում էին: Առավել առույգները դեռ ոտքի վրա էին: Սպան

բարձրախոսը մոտեցրեց դեմքին:

- Դուք խանգարում եք հասարակական հանգիստը,- բարձրածայնեց,- ձեզ առաջարկվում է ազատել հրապարակը...

Զայնը մութի մեջ հնչեց ասես խորը, անհատակ կաթսայում: Սպայի կոհակվող շնչառությունն անգամ լսելի էր: Առաջինը ելան երեխաները: Ասես դրան սպասելիս լինեին. շոտավ մագլցեցին ծառերը: Երեխաների ցանցար երանը թառել էր ճյուղերին ու այնտեղից անհամբերությամբ հետևում էր իրադարձությունների ծավալմանը:

Գիշերը տիսուր էր, գիշերը՝ մութ, և մարդիկ իսկի չեին էլ լսում սպային: Հանգիստ պառկած էին կամ հանգիստ նստած:

- Դուք խանգարում եք հասարակական հանգիստը,- անդադար կրկնում էր սպան,- ձեզ առաջարկվում է ազատել հրապարակը...

- Ժողովուրդ,- բազմության միջից խռպոտ ձայն լսվեց,- իոգերանական ճնշում են ուզում գործադրել...

Հանդարտ դեպի բազմությունն էր սողում ջրցան մեքենան: Դորոշակերպ մետաղական զանգվածը զգվելի տեսք ուներ ու խավարի մեջ մարդկանց աչքերին ասես գիշերվա տիհած երազ լիներ:

- Առաջարկվում է փողոցն ազատել... Առաջարկվում է փողոցն ազատել... , սպան շարունակում էր եռանդագին հորդորը:

Սոլի ճնշումով պոռքկաց ջրեղեն մտրակը: Մարմին-ները ձաղկվեցին պաղ լոգանքով: Օճից խայթվածի պես մարդիկ վեր թռան: Ոտքից գլուխ ջուր էին: Նրանք կուռ շարքեր կազմեցին:

- Բյունա-պետ-հեռա-ցիր... Բյունա-պետ-հեռա-ցիր...

Զուրը ուժ ու եռանդ էր բերում ալեկոծվող բազմությանը: Մարդիկ ձեռք-ձեռքի թռնած, ուս-ուսի տված, ոտքերը ոթրմով բախում էին գետնին, ու լայն հրապարակի մեջ շարք-շարքի թնդում էր հայկական քոչարին:

- Բյունա-պետ-հեռա-ցիր... Բյունա-պետ-հեռա-ցիր...

Վանկարկում էր ամրոխը: Այս ու այնտեղ, փոթորկու հորձանուտներում կապտակարմիր իրացոլքեր բռնկվեցին: Օդը պատառություն էր կրակու ճարճատյուններից: Ոստիկանները պայթուցիկ փաթեթներ էին նետում:

- Բյունա-պետ-հեռա-ցիր... Բյունա-պետ-հեռա-ցիր... - Բազմության որոտը խլացնում էր պայթուցիկների ճարճատյունը:

Ցուցարարները, ջրեղեն շառաչի, կապտակարմիր իրացոլքերի, մոխրագույն ծիսի ու սպիտակ քուլաների մեջ գունդուկիկ գալով, ամենի բռունցք էին դառնում:

Նրանց առջև՝ աջ ու ահյակ, կանգնած էին կարմիրերեւավորները:

- Նախազգուշական կրակ,- եղավ իրամանը; Սպայի նշանով վեր ուղղվեցին մետաղյա փողերը;

- Կրակ,- իրամայեց սպան:

Օդի մեջ համերաշխ որոտաց համազարկը:

Տեր Աստված... Մի՞թե երազ չեմ... ճյուղերի վրայից, ասես իրեշտակի քնքուշ թևերից, ոյտապաստ աղավնիների պես գետնին էին իջնում երեխաները... Կույր գնդակը մոլորել էր ճամփան: Լռություն տիրեց: Խավար լրություն: Մեղմիկ սոսափում էին կանաչ տերևները: Յանկարծ մի անասելի ոռնոց բարձրացավ: Օդը ցնցվում էր մոլեգին ողբից: Դա հազարավոր սրտերի պայթյունն էր: Մարդկային հեղեղն այլևս անկարելի էր կասեցնել:

- Կրակ, ուղիղ նշանառությամբ, կրակ...- տագնապած ձայնը դոփում էր տեղում:

...Ռոպեներ առաջ կատարվածը հետ տված ժապավենի նման պտտվում էր սպայի մտապատկերում: Մինչդեռ այլևս հապաղելու ժամանակ չկար: Դարանակալ ականը ուր որ է կպայթեր: Մարդիկ, ճղելով փշոտ ցամկապատը, մարմինը դաղող ջրեղեն պատնեշը, ոստիկանական վահանների համաձույլ շարքերը, ռեսինե մահակների անդադրում տեղատարափի տակ, մերկ ձեռքերով ճանկորութելով աներևույթ խավարը, գոռումգոյունով գալիս էին, գալիս...

- Կրակ, կրակ...- իրամանը բութ գնդակի պես միշրճվել էր քունքը:

Աջևկից գալիս էր տարեց տղամարդը: Կլոր աչքերի մեջ լայն թիթերը խամրած էին, դեմքը պաղ էր ու անհաղորդ, այտերին՝ ասես ապակու վրա սառած արցունքի կաթիլներով: Զեռքի պատահին գրված էր. «Ես լալիս եմ հայրենիքի հանար, ինչպես մայրիկն էր լալիս ինձ համար»:

Սպան ատրճանակի փողը դրեց քունքին: Հայենիքը նոտ էր, շատ մոտ, ընդամենը փողից դուրս տանող ճանապարհին: Հրամայված էր կրակել: Ականի վրա ժամանակը կանգ էր առնում: Աշխարհը փակել էր իր դեմքը: Զրո ժամն էր:

Սպան սեղմեց բլթակը:

Գիշեր էր, խավար: Մինչդեռ պատուհանները վառ կարմիր էին: Մարդիկ վառել էին իրենց սրտերը: Սուրի մեջ լույս կար:

### Նարեկ Նիկողոսյան

### Պլանավորված երազ

Երբեմն մեր աչքերը համբուրվում են իրականության հետ,  
Եվ մենք, կորցմելով աստծու հնարած իրականությունը,  
Ծանոթանում ենք ուլտրասև ապակու հետ,  
Որը մեր՝ հետմահու հերոս լեզվով հնչում է՝ «պատուհան-հայելի»:  
Այդ ժամանակ մենք սկսում ենք զգալ այն.  
Զգալ ազատության ուրվական «Մահ»-ի պատմությունները,  
Պատմությունները Ես-ի, մեր մարմնի բնիկ զգացմունքների՝ սիրո շուրջպարի, արևից գժված  
մեր երազների և մեր զարկերակի շքերթի մասին...  
Դեստ մենք արտաշնչելով այդ ամենը՝  
Ստիպում ենք կտրվել համբուրից  
Եվ նորից հայտնվում ենք փոշոտ ու բազում անգամներ օգտագործված  
ԻՐԱԿԱՍՈՒԹՅԱՍ ՄԵԶ:

### Նախավերջին հարցը

### Ե՞, ֆանատներ

Բացիր երազներդ, արդեն սկսվում է.  
Սթափիր անգլուխ ծևերից՝  
Ցնդել են բոլոր անկյունները,  
Ու սկսել են իսկապես մեռնել նրանք...  
Բացիր դաշվածքավոր գանգդ, հասանք.  
Դերիք է խաչես խոսքերդ ու խօխռաս կապույտ լույսից.  
Այստեղ սլաքներն են զրոսնում,  
Ու շատացել են թակարդի հատորները...  
Բացվիր օդից, եռաչափությունից ու անտառից,  
ճաքեցրու՝ արտացոլող հիշողությունդ՝  
Նա՝ այն, փոշոտվել է,  
Նա՝ ինքը, ատամ ու մազ է ուտում՝ համրացել է...  
Բա՛ց, այդ ես եմ...  
Պատուիր կլոր աշխարհի.  
Բա՛ց, մեր հերթն է՝  
ՄԱՐԴ է գալիս...

Դու ինչ-որ բան գիտե՞ս...  
Ուզում եմ, որ ինձ իմ տառերով պատմես՝  
Ինչու է աշխարհը կպչում քեզ. երբ արթնանում,  
Սենք զգայարաններով կապում ենք աշխարհը մեզ  
Ու վաղվա մասին մտքերի սղոցով անընդհատ ուզում  
Ենք պոկվել...  
Ետ ձայնը չի կտրվում,  
Ետ սղոցի ձայնը նման է ժամացույցի ոռնացող կտկտոցին,  
Ու այն անընդհատ նվիրմ է.  
«Ինչ-որ բան եմ ուզում ասել,  
Ինչ-որ բան շշուկով գորում եմ:  
Լսու՞մ ես: Չէ՛, ոչ չի լսում, ոչ ոք չկա, ոչինչ չկա...  
Ինչքան դժվար է ժամերը կյանքով լցնելը,  
Ինչքան դժվար են օրվա հարկերը՝ երազները.  
Իրականություն եմ երազում՝  
Իրականությունը շղթա է մարմնի և հոգու միջև...  
Ես ինձ կորցրել եմ եղ երազների ու իրականության  
սահմանագծին,  
Ես ավազով ժամացույցի ավազով ապագա եմ սարքում,  
Ես նրա աչքերում միայն արտացոլանք եմ գտնում.  
Ամեն առավտու ինձ համոզում է ապրել,  
Իսկ ես, երբ աչքերս բացում եմ,  
Կարոտով եմ հիշում այն ժամանակը, երբ դեռ քնած էի:  
Ես գոռում եմ ու ես լուր եմ,  
Իսկ դու ուզում ես խոսքեր լսել,  
Ու վերջում ես ժպտում եմ»:  
Դու ժպտում ես, որովհետև արդեն գանգ ես դարձել,  
Իմ գանգը, գիտեմ, տիսուր կլինի ու որդերով կարտասվի...

## Սուվանի կյանքի և մահվան մասին

I

Ամեն ինչ սկսվեց երկուշաբթի երեկոյան: Սուվանը նստած էր Երևանի թեյարաններից մեկում, որտեղից հիանալի տեսարան էր բացվում դեպի Երկինք: Դա ննան էր ճանկության այն լուսավոր պատկերներին, որոնք խրվել են հիշողության մեջ, որոնք անընդհատ հիշեցնում են բարու, լավի նասին, որոնք չեն թողնում հեռանալ ճիշտ ճանապարհից: Դրանք, կարծես, արքետիաներ են, պատկերացումներ աստծոն նասին, ուղիներ դեպի դրախտը, մշտական կայքը:

Կողքի սեղանին նստած էին երկու աղջիկներ: Սուվանը տեսնում էր նրանցից միայն մեկին: Երանի աշխարհում տեսներ միայն նրան, բայց միշտ: Պետք չէ ոչ բարին, ոչ լավը, ոչ ուղին, ոչ արխետիաները, ոչ դրախտը, ոչ էլ մշտական կայքը: Նա է, որ խորհրդանշում է և կրում այդ բոլորը: Նա է ուղին դեպի Դրախտ:

Եթե Սուվանը դեռևս ուսանող չէր, ցանկանում էր հասնել շատ ու շատ նպատակների՝ ունենալ մեծ տուն, շքեղ մեքենա և գեղեցիկ կին: Հետագայում նա գիտակցեց, որ իր մտածելակերպը չի համապատասխանում իրական աշխարհին՝ իր շրջապատին, գյուրայուն ունի մի ինչ-որ պատմեց, ճեղքվածը իր և շրջապատի միջև: Այսօր Սուվանի վաղենի նպատակներն արդեն չկային, դրանք իմաստագրկվել են, Սուվանը կորցնում էր իր նախկին ապելակերպի հատկանիշները, փոխվել էր նաև իր շրջապատը: Առաջ նա ձգուում էր ազատ՝ առանց կապերի սեր գտնել, սակայն գիտեր նաև, որ դա դեմ է իր սկզբունքներին, ապրելածին, հարգած իրեալներին: Նա ենթագիտակցորեն զգում էր, որ ազատ սերը բերելու է սովորական, ավանդական սոցիալական կապերի խախտմանը: Այսօր Սուվանը չէր ձգուում ազատ սեր գտնել: Բացի դրանց, Սուվանը չէր զգում նաև ավանդական սոցիալական կապերի բեռը: Մնացել էր միայն անհամապատասխանությունը դրանց միջև, կարելի է ասել՝ ճեղքվածի գագումը:

Այո, հարգելի ընթերցող, զինվելով հոգեվերլուծության նորագույն մշակումներով՝ մենք կարող ենք արձանագրել. Սուվանը կորցրել էր իր հիմքերը, արմատները: Այնուհանդերձ, պետք է նշել, որ Սուվանը շատ շուտ կողմնորոշվեց: Նա իսկույն գտավ այդ վիճակից դուրս գալու ուղին: Սուվանը սկսեց հետաքրքրվել հայոց պատմությամբ: Նա փորձում էր վերագտնել կորցրած հիմքերը:

Սուվանը սիրում էր կանգնել իր ինստիտուտի բակում: Նա կարծում էր, թե այնտեղ իր հետ կանգնած ուսանողները կամ մուրացկան տատիկները կրում են ինչ-որ մետաֆիզիկական իմաստներ: ճշտարիտն ասած, Սուվանը համարում էր, որ աշխարհը կարելի է ճանաչել միայն ամբողջությամբ՝ ինչ-որ սիմվոլի միջոցով: Եվ այսպես, ամեն օր նա դիտում էր շրջապատը՝ փորձելով ինչ-որ խորհրդանշական բան գտնել: Շուտով, սակայն, նա սկսեց հասկանալ, որ արևածաղիկ վաճառող տատիկը ոչ մի մետաֆիզիկական իմաստ էլ չի կրում, այլ պարզապես՝ արևածաղիկ: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ինչ-որ եղանակացությունների, ավելի ճիշտ՝ հարցադրումների Սուվանը հասավ: Չե, նրան չէին հետաքրքրում մահից հետո եկող արհավիրքները, Սուվանը չէր հասկանում, թե որտեղ է ստեղծվում արժեքը: Արդյոք բերթողահայր Մովսեսը նույնախսի արժե՞ք էր ստեղծում, ինչ որ՝ մսավաճառը, որը նույնական բերթում է:

Այդ օրը Սուվանին մոտեցան ցածրկուրսեցի երկու ընկերներ: Նրանցից մեկը ինչ-որ թեմայով կուրսային աշխատանք էր փնտրում, մյուսը՝ փող: Այստեղ Սուվանն առնվազն իմնավորեց իր հարցադրման իրատապությունը, քանի որ նա տեսավ, որ այս երկուսը ոչ մի արժեք չեն ստեղծում, այլ պարզապես վերաբաշխում են արդեն ստեղծվածները: Եվ նրա գլխում անսպասելիորեն կառուցվեց մի տրամաբանական շղթա, որն անառարկելիորեն հանգում էր արժեքի ստեղծման անհնարինությամբ: Զղայնությունից նա թքեց և կպավ իր կողքին կանգնած մի տղայի: Հասարակական միջավայրի ներքին կուռ տրամաբանությունն իրեն սպասել չտվեց:

II

Մի խումբ երիտասարդ տղաների հետ Սուվանը գլխապատառ վագում էր: Մոտակա ջրավագանում այս ժամերին միշտ լոգանք է ընդունում գեղեցկուի Աստղիկը: Ահա նրանք մոտենում են բարե պարիսպներին, իրար

54

օգնելով հաղթահարում են այն: Երևում է Աստղիկը, լսվում են շշուկներ, որ հիմա կսկսի հանվել: Աստղիկը սկսում է ազատվել իր հագուստից: Բայց, սպասեք, ինչ-որ մշուշ է հայտնվում, չի թողնում տեսնել Աստղիկին, մշուշը խտանում է՝ արդեն ոչինչ չի երևում: Ով Աստված, ինչու՞ չես թողնում Քեզ տեսնել միանգամից, անբողջությանք, ինչպես որ կաս: Երբ մենք անմեղ ենք, Դու մեզնից թաքնվում ես, երբ մեղավոր ենք՝ մենք ենք թաքնվում: Սուվանը ցանկանում էր գրել այդ դարավոր մշուշն իր և Աստծո միջև:

Շուտով Սուվանին հիվանդանոցից դուրս գրեցին: Սուվանը, իր սովորության համաձայն, մետաֆիզիկական իմաստ էր փնտրում իր հետ կատարվածի մեջ: Նա փնտրում էր Նոր կտակարանում: Իր որոնումների արդյունքում Սուվանը եկավ այն եզրակացության, որ ամեն ինչ կախված է Վերին գաղափարից: Միայն հոգին է ազատ: Դա էլ շատ քաղաքավարի կերպով առաջարկվում էր նույնպես նվիրաբերել Աստծուն: Իրերի նման դասավորությունը Սուվանի համար անընդունելի էր: Պետք է նշել, որ Կտակարանի հետ մեկտեղ Սուվանը կարդում էր նաև Նիշշեի ստեղծագործություններից: Եվ նա զայթակղվեց: Սուվանը ցանկացավ ինքը լինել Վերին գաղափար, ինքը ստեղծել արժեք: Ինչպես ասում են, «ա» ասելուց հետո պարտադրված ես ասելու «բ», հետո էլ՝ «գ», և ինչն ամենատհաճն է՝ «դ»: Գուցե Սուվանը հույս ուներ, որ կգա մի պահ, երբ Աստված իր հետ պայքարի դուրս կգա, ինչպես՝ Հակոբի դեպքում, բայց ոչ մի դիմադրություն չկար: Սուվանը ուզում էր, իր հոգու ազատությունն օգտագործելով, հասնել մնացածի ազատության: Ելքը մեկն էր. անհրաժեշտ էր հեռանալ այն աշխարհից, որտեղ կառավարիչ էր Վերին գաղափարը:

Սուվանը ուներ և՛ պարան, և՛ աթոռ, և՛ օճառ: Այո, նա կախեց իրեն: Եվ ի՞նչ: Նա համոզվեց, որ Աստված մահացել է, նաև կրահեց, որ ինքը՝ նույնպես: Չկար ո՞չ Աստված, ո՞չ Սուվանը, մնացել էր միայն նրանց միջի մշուշը:

## Տեսդ

Քավ լիցի...

Մի փորձեք դիմադրել իրականությանը.

Կեղծիքին պատշաճ դեղատոնս չի գրվում.

Կացքնի ճոճողոցի ու բախյունի գուգահեռը

Աներևույթ մսաղացն է,

Որ ճզմում է ուղեղիս մնացած «կարգինները»:

Կարծես չեմ կարող շուրջս ողողել նայվածքով...

Սու՞զ է այսօր, թե՞ պարզապես բարձունքի անչափ ցածրություն.

Պատ, որը այն չէ. ձայն, որը ձայն չէ. նա, որ ինքը չէ,

Գուցե ես եմ, որ չեմ...

Մի պարզ ճշմարտություն կար,

Բայց հիմա դա էլ չկա:

Մի ճնշող վանդակ կա,

Որի սյուներն անգամ չկան:

Դիմակներ... դիմակներ... գայթակղիչ դիմակներ,

Շատերի համար՝ անփոխարինելի...

Զանազան, թեև միօրինակ: Անտարբեր, միապաղադ:

Գուցե յուրաքանչյուրս մի դիմակ ենք,

Որին օգտագործում է աշխարհը:

Տիեզերքն անգու՞յն է.

Բնավ...

Կապարզվի այնժամ, երբ ես գորշանամ:

Խելագարներ... խելագարներ...

Պատի վրայի ստվերը...

Պատի վրայի ստվերը...

Պատի ստվերը...

Ստվերը...

Երը...

\*\*\*\*

Մայր.

Ների՞ր, որ ինչպես դու սիրեցիր ինձ՝

Չկարողացա բնավ այդպես սիրել քեզ:

Մայր.

Ների՞ր, որ կիթառիս լարերի թարմ մեղեղու պես

Չկարողացա ամբողջական, լիքը ներուժս

Շռայլորեն վատնել հանուն քեզ:

Մայր.

Ների՞ր, որ գրած գործերն իմ՝ պոեզիան,

Զարմացրեց տաղանդի, ետ քաշվեց մուսան

Քո հրաշալի, մի քիչ հերթական, հնամենի,

Մի քիչ էլ կորած, չկայացած երազներդ երանելի:

Մայր.

56

Ների՞ր, որ քո կոշտ գեների պես,  
Ես ժառանգեցի ցեխոտ բարքերդ նույնպես,  
Չկոտրվեցի, իբրև ամուր, հպարտ արարած  
Վիրավորված չասացի, որ միշտ սիրել եմ ես քեզ:  
Ու մենք իմ ու քո կյանքն ապրեցինք այնպես,  
Ինչպես սպասված խոսքի կարոտած  
Ու անտանելի լրության դատապարտված  
Քարեր  
Կամ  
Իսկական քարեր:

Մայր.  
Ների՞ր, որ ես էլ, ինչպես դու, Աստված չեմ:  
Բայց հողմ էլ չեմ վայրի: Ես մարդ եմ,  
Մարդ..

## Մեր քաղաքի «ճիշտը»

Արարական քարավանի անվերջակետ ուղտերի պես  
Խաղաթղթերը բացելուն պես  
Թքելու ենք ուղիղ այնտեղ, ուր չեն սպասել:  
Քահանաներից ոնանք ճաղատ, առատ մորուքավոր  
Մի պատրանքի, հաղթանակի ու պայքարի ֆինալի պես  
Յորինելու են ապաշխարության նոր սկիզբ, իբրև մազակալման վերնագիր ինքնատիպ:  
Աստվածները զայրացած ցնցելու են նրանց՝ աստված դառնալու մոլուցի համար:  
Չեն ներելու ...  
Չեն ներելու ...  
Խրտնած ծիերի թափից ցնցվող բաշի թափահարմամբ,  
Խաղաթղթերը բացելուն պես  
Սափրած գլխով տականքները  
«Էլ չեն հանդգնելու»,  
Բռունցք չեն կիրառելու,  
Այլ՝  
ճաղերի արանքից,  
Փուած խցերից,  
Նողկավայրից  
Իրենց մեծատառով Աստված ախաեր՝  
Տիգրան Կարապետիչից  
Սիգարեթ են մուրալու:

Ցայտնոտների գոլորշացած տեղատարափ անձրևի պես,  
Խաղաթղթերը բացելուն պես  
Թեթև ժեստով կարմիրները ներկելու ենք՝ սևացնելով,  
Ու մեկ դարին համարժեք անզգայացած ազգը  
Շարտելու է ինչակալներ, իբրև ամկարող տորեադրոներ:  
Պարտվելու են երանգների աճպարար հմտությունից:  
Դահիճները տառապելու են արյան ծարավից, ժամանցի պակասից:  
27-ը էլ չի շարունակվելու...  
27-ը պլօնելու է...  
Թե խաղաթղթերը բացելու լինենք,

Ապա

Այս քաղաքի արտիստները  
Խստրականությամբ  
Քաղցած են,  
Բայց մերկացած չեն:  
Մրսած են,  
Բայց ծախված չեն:  
Մեր քաղաքի արտիստները  
Ուրիշ քաղաքի հանգուվանը չեն:  
Արտիստները քահանաներ չեն:  
Դահիճները արտիստներ չեն:  
Մենք ենք ...  
Մենք ենք ...

## Երգ Երգոց

Օ՝, Օ՝...

Այսպես սկսվեց մի երգահանի սրտածնլիկ երաժշտաճառ:

Այնքան հուզախառն ու խռպոտական բիրտ տոներով,

Որ մի օրորոց ու մի վարագույր հայտնվեցին,

Ուր մարդիկ օ-երի ներքո ննջում,

Ապա

Փակվում են վարագույրի տակ

Կամ սուրճ են խմում, որ մեռնելիս չճնջեն:

Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝...

Այսպես պատահեց, որ անթիվ հանդիսական

Այս հոգենես օ-երի ներքո սիրահարվեց

Չգիտես ում ու չգիտես՝ ով-ում:

Ու տիսրեցին...

Ու տիսրեցին...

Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝, Օ՝...

Այս երրորդ քայլակը շատ դաժան է,

Օ-երի ներքո դժբախտացան ու հղիացան չգիտեմ ինչերով, ումով:

Օ-երի ներքո պատուեցին կոկորդներ, հագուստներ, պաստառներ, մարմիններ ...

Ու էլի բաներ...

Ես օ-երը ամեն անգամ հայտնվում են ու մաշում են, հնացնում են, ազդում են, բարկացնում են, հիվանդացնում են, հյուծում են, սպանում են, այրում են, կարոտում են, կոտրում են, տկարացնում են, ծաղորում են, ծվատում են, պլոկում են...

Ու էլի բաներ...

Տրտմություն, կրկնություն...

Միայնակ մենություն,

Սիտքս,

Սիրտս,

Աչքերս,

Օրերս,

Դուշերս,

Բանականությունս,

Բոլորս դոփում ենք...

58

## Ամերիկանիզմին ծախված հոգի

Յոգին թառել է գարշահոտ, գողական, փառաբանյալ վերջնահարկում

Յոգին խժում է տաղտուկը որկրամոլ

Ու չի տրտնջում...

Զոմբիացած տիեզերքի ողնաշարն այնպես է փշրել,

Որ էլ ոչինչ,

Բացարձակ ոչնչացած ոչինչ

Ել չի սպառնալու վերջնահարկի «ճշմարիտ» մոլորյալներին:

Յոգին

Արագության հզորություն է այրում

Ու կարդում է մեր Բաղրամյան փողոցի բացահայտ գաղտնիքները՝

Լուսի բռների և խավարասեր թիթեռնիկների անհույս relax-ը,

Յոգին բնավ չի ցավում...

Յոգին գնացած եկած ու չեկած տղերքի,

Իրենց նման տզրուկներին պաշտպանած

Յայրենիքների, հերոսների ցավը զգում է՝

Չի ցավում:

Յոգին, ինչպես Ադամն առաջնեկ,

Սիրում է մեկ ուրիշ Ադամի:

Յոգին եվայական խարկանքով

Սիրում է մեկ ուրիշ Եվայի.

Յոգին վկան է Եհովայի,

Յոգին ծախվածն է գլորալիզմին,

Յոգին արարն է կլոնի,

Յոգին այն գառն է, որ կրծոտում է տիրոջ ոտքերը,

Յոգին մասոն է ու խեղդակապ է անում հավատամքի դավաճաններին,

Յոգին ախտերն է Յօնմի պապի,

Լիքը «Պապերի»,

Ելքոն Ջոնի,

Յայր ու աղջիկ ամուսինների.

Յոգին հաճախ աղոթք է անում Սատանային,

Յոգին հայկական է, բայց ծախվել է ամերիկանիզմին:

Խիստ հայավարի ոստիկան շարքային Կիրակոսը

Երեկ դիտել է շերիֆ Ջոնիի բաւական ֆիլմը,

Յագել է կովրոյի սապոգները,

Կոհվ է սարքել գարեջրատանը:

Շերիֆ Ջոնիից ներշնչված շարքային Կիրակոսը

Չի նստել police-ի թագավորական ջիալը,

Վարում է իր պայթած անտիլուպը,

Վարորդներն էլ խոճում են,

Թե ինչու այսպես դասավորվեց միլիցեքի բախտը:

Այսպես պատահեց, որ հայ միլիցեքը

Միլիցա բառից խրտնել սկսեցին,

Ընկճախտով տառապեցին

Ու բոլորից վլեծ լուծեցին:

Դեռ լուծում են

Ու այսի լուծեն:

## Սասալ

[http://www.bnagir.am/?go=readers&r\\_work=409](http://www.bnagir.am/?go=readers&r_work=409)

- Ախատերս, կարո՞ղ ա ծխելու ըլնի:

- Չէ, ընգեր ջան:

Կախ մորս արև, էս ինչ քաքն ընգա, մի հատ սիզարետ էս եքա Յայաստանում չկա՞ , արա: Լավ ոնց էլ չըլնի մինչև տուն հասնելը մեկից կմուֆթեն: Դավայ, հլը էթամ կասկադ, ոնց էլ ըլնի տղեքը ընդեղ կըլնեն, մեկից կվեկալեն: Զան, Յանանտոն, հաստատ կունենա ինքը: Բարև, ազիզ, բա դու Ամերիկա չէիր գնացե՞լ, էկա՞ ես արդեն, բարով մաշես հագած-կապածդ, ազիզ, մի հատ սիզարետ տու... Արա, բա Ամերիկա գնացած-էկած տղա ես, մի հատ սիզարետ չունե՞ս: Ասում ես՝ Սաքոյենց մոտ կա՞ , դե լավ, ազիզ, դավայ, հելնեմ սիզարետի տասովկեքի:

- Սաք ջան, բարի օր...

- Սիզարետ չունեմ:

- Բա Յանանտոն ասեց՝ ունես:

- Յեսա, էս մի հատն ա...

- Յա գիտեմ էտ էլ թքի մեջ ա, չէ՞ , ընկել: Արա, լավ գիտեմ, որ ունես, հոգիդ խորն ա, մի հատ տու... Վորշեն հաջող: Լավ, մորս արև, կարող ա հիմա մեռնեմ: Լավ, հլը մի հատ ֆուամ ստեռվ: Արա, լավ ո՞ւր են տղեքքը չկան: Լավ, մի հատ աստիճաններով հելնեն, մեկ ա լիքը մարդ կա վերև, մեկին կգտնեն երևի: Արա, էս համերգը ինչ համերգ ա, մոռքած պահեց, էս սաքսաֆոնիստների մոտ չի ըլնի՞... Լավ, է, նվագում են, սիրուն չի ուզեն: Զկան-չկան, լավ հելնեմ փուչիկ: Մինչև փուչիկ մտնելը մի հատ ջինսնոց մտնեն, Վասյայից կվեկալեն: Թու, Վասյան էլ ստե չի, մենակ էս տղեն ա, բայց սրանից ինչ ուզեն, կմտածի՝ մտել են մենակ սիզարետ ուզելու համար, բայց Vogue ա, է, ծխում: Լավ-լավ, հելա: Փուչիկում էլ մարդ չկա, լավ էս ինչ օր ա, արա: Լավ, հելնեմ տուն, ճանփին մեկից կմուֆթեն: Յայաստանը Մուֆթլանդիան ա, ես՝ Յայմուֆթ բանկի նախագահը, մի հատ սիզարետը ինչ ա, որ չկարանամ մուֆթել: Յլը սրանից հարցնեմ, չէ, արա սրանց հագած-կապածը նայի, սրանից որ ուզեն, կարող ա կրակեն վլես, ես էլ տենց սասալ-սասալ մեռնեմ: Յետաքրքիր ա, սրանք իրանց ոռը վերսաչի կոստո՞վ են մաքրում: Սրանից ուզե՞ն, չէ, է, էս էլ իրա ընկերուին հետ ա, սիրուն չի: Էս մեկից հաստատ կուզեի, բայց ձեռինը ախտամար ա, սրանից չեմ կարում ծխեն: Էս մեկն էլ տարիքով ա, ուզեն՝ կարող ա քֆրտի: Էս ի՞նչ ռեկլամ ա, սիզարետը թողած բիլիարդ ա խաղում, տակն էլ գրած ա՝ ՅՅ առողջապահության նախարարությունը գգուշացնում է... Տո իսի մենակ դո՞ւք եք գգուշացնում, սադ լոմկես էն բիծեն էր, որ պարապմունքից հելա, բիչուս կացրի, էկավ էնքան գգուշացրեց, որ չկարեցա հանգիստ ծխեն: Լավ, է, չկա-չկա, գնամ առնեն, սադ Յայաստանը, որ իմ նման մուֆթի վրա նստի, ոչ մեկը չի ծխի: Ի՞նչ առնեմ, Winston lights, թե՞ L&M lights...

#### Պապիե-մաշե

Չորս տարի անց, երբ վերակենդանացնան բաժնում ինձ առաջարկեցին կտակ կազմել, ակամայից հիշեցի այն երեկոն, երբ առաջին անգամ տեսա նրան: Ո՞վ ծանոթացրեց մեզ: Եական չէ: Եական այն է, որ շուտ մտերմացանք և իհանալի ընկերներ դարձանք: Սկսնակ դերասաններ էինք: Ես արդեն հասցրել էի մեկ-երկու դեր խաղալ, նա նոր էր թատերական ինստիտուտն ավարտել և շնորհաշատ արտիստի համարում ուներ: Շնորհաշատ... չէ մի: Մինչև դերասանը բենում մի քանի լուրջ դեր չխաղա՝ ի՞նչ շնորհաշատ, ի՞նչ քան... Լավ ընկերներ էինք: Միասին գնում էինք անառակ կանանց մոտ, ուտում-խոնում-հարբում, ծեծկուուր էինք սարքում, երբ մի քանի տականքներ՝ ինձ անառակ կանանց մոտ, ուտում-խոնում-հարբում, ծեծկուուր էինք սարքում, երբ մի քանի տականքներ՝ ինձ անառակ կանանց մոտ, ուտում-խոնում-հարբում, ծեծկուուր էինք սարքում, երբ մի քանի տականքներ՝ ինձ անառակ կանանց մոտ, ուտում-խոնում-հարբում, ծեծկուուր էինք սարքում, երբ մի քանի տականքներ՝ ինձ անառակ կանանց մոտ:

Որոշ ժամանակ անց, իմ միջնորդությամբ, նա ընդունվեց մեր թատրոն: Ընկերոջ օգնելու համար ջանք չէի խնայում: Մասնագիտական մանրութերից զատ՝ ծանոթացնում էի նաև թատրոնի ներքին, անդրկուլիսային կյանքին: Լավ օրեր էին, ամառ էր՝ տաք, բլթբլթացող տոթ: Քաղաքը կյանքով, ուրախությամբ, հաճույքներով էր շնչում: Մենք սիրում էինք կյանքը, արվեստը, մեր քաղաքը...

Պարզվեց՝ իրոք շնորհաշատ դերասան է: Թատրոնում նրա ընդունակությունները շշմեցրել էին բոլորին: Գովարանելուց զատ՝ սկսեցին բամբասել, ինչը վկայում էր այն մասին, որ իրենից ինչ-որ քան իրոք ներկայացնում էր: Անցավ մի տարի: Նորից ամառ էր, տաք, ծիրանագույն տոթ: Բենում փորձ էր: Ավագ դերասաններից մեկի հետ տեսարան ունեի, որը ոչ մի կերպ չէր ստացվում: Դրանից ավելի էի լարվում: Բենադրիչը երկու-երեք անգամ ցոյց տվեց անելիքս, ու երբ կրկին անհաջող փորձեցի՝ սիրտը բռնած դուրս եկավ դահլիճից: Լավ հիշում եմ նրա՝ շոգի՞ց, թե՝ բարկությունից շիկացած գործողությունը: Յինգ րոպէ չանցած՝ ասիստենտն ընկերոջ վերև կանչեց: Ընկերու արագ-արագ, աստիճանների մարմարե այսերն ապտակելով, բախեց բենադրիչի առանձնասենյակի դուռը, ներս մտավ, ու կասկածի կծու կաթիներ լցվեցին սրտին մեջ:

Դերս տվեցին նրան: Լավ չէր խաղում, թեև միանգամից կատարում էր բենադրիչի առաջադրանքները: Կամակատար... Եվ ինչու՝ էր թատրոնի ողջ աշխատակազմը գալիս տեսնելու, թե նա ինչպես է փորձում: Նույնիսկ հրճվում էին:

- Յասկանում ես, չէ՞ որ ես մեղք չունեմ...

Առաջին անգամ զգացի, որ ընկերոջ ձայնը ճղճան է, գրեթե՝ կանացի: Այդպիսի ձայնով տղաներին ես մանուկ հասակում «ղղիկ» էի անվանում:

Պրեմիերան խաղաց նա...

- Դուրս չգնա՞նք՝ նշենք,- քաշեց թևիցս, - դե, ի՞նչ ես սառել, թե՝ ուրախ չես...

Չե, ընկերս նույնն է մնացել, բայց ինչու՝ է ձայնն այդքան տարօրինակ կերպով դժոխան թվում: Ուրա՞խ եմ ընկերոջս հաջողության համար, իհարկե, ուրախ եմ... Իսկ ե՞ս... Քանի տարի է արդեն մեզը եմ ծովում այս թատրոնում, բայց մի կարգին, կենսագրություն կազմող դեր չխաղացի... Ումի՞ց եմ պակաս, ո՞վ է ինձնից շնորհքով, ընկե՞րս, թե՝ ուրիշ մեկը... Բեմի Վրա քայլել չգիտեն, իրենց ձայնին չեն տիրապետում, ոչ արտաքին ունեն, ոչ՝ բեմական խոսք...

Դուրս եկանք փողոց: Երկինքը մթնած չէր, քաղաքն էր մթնած: Ստվերոտ, կեղտոտ, անհրապույր փողոցները նորկանքի լենի կաթիլներ լցողեցին սրտին մեջ: Մենք էլ կասենք՝ ապրում ենք, այն էլ՝ մայրաքաղաքում... Գավառ... Գավառ... Բա մարդի՞կ. անկիրթ, սև, մրոտ... Ես արևն ինչու՝ լույս չի տալիս կամ տված լույսն ինչի՞ համար է... Ժամտախտի համաճարակ ընկներ, վերանար էս քաղաքը... Ես էլ վերանայի, ընկե՞րս...

Անցավ մի ամիս: Այդ ընթացքում ընկերոջ հետ ոչ պոռնիկների ետևից քարշ եկանք, ոչ կերուխում սարքեցինք, ոչ էլ՝ մի կարգին նատեցինք-գրուցեցինք:

Նրա հասցեին գովեստի խոսքերը ավելի ու ավելի հաճախակի էին հնչում: Նույնիսկ արտերկրից ժամանած բեմադրիչը, ներկայացումը դիտելուց հետո, չզլացավ, ինձ անտեսելով, ամուր սեղմել ընկերոջ ձեռքն ու հավատիացնել, որ կերպարի այսպիսի հետաքրքիր մեկնաբանության դեռ չէր հանդիպել: Բանականություն... Ես ուրախ եմ ընկերոջս համար, արժանի տղա: Բայց վերջերս փոխվել-ուրիշ է դարձել: Մեծամտացե՞լ է... Ինձ սկսել է անտեսել: Երախտամոռ... Չի հիշում, թե ում շնորհիվ այսպիսի հաջողություն ունեցավ:

- Չե՞ք ուզում ձեր պապիե-մաշեները հանեմ,- նկարիչը կեղտից տեղ-տեղ փայլող բազմոցների վրա է պառկեցնում սկզբում ընկերոջս, ապա՝ ինձ,- չփիտե՞մ գիտե՞ք, որ նոր ներկայացման մակետն արդեն արտադրության են ուղարկել... Ըստ իմ մտահղացման՝ ամբողջ բեմի մակերեսը արձաններով ու կիսանդրիներով է ծածկված լինելու: Ի դեպ, մտահղացման բեմադրիչին շատ դուր եկավ... Նույնիսկ այսպիսի մի տեսարան հորինեց... Որպես գաղտնիք են ասում, հա... Ետևաբենում պետք է կոնվեյեր սարքեն, որի վիայով, ներկայացման ընթացքում, անընդիմա գլուխներ են գնալու-ընկերու... Լավ տիպաժ են,- ասաց ընկերոջս,- քո պապիե-մաշեն երևի օգտագործեն Կեսարի արձանը սարքելիս... Օ, Շռոմ, Շռոմ... Շռոմեական կայսրությունը կուռքերի կայսրություն էր, որա համար էլ ամբողջ բեմը կանգուն, տապալված, նոր, ին ու ջարդված արձաններով են լցնելու...

Դեմքիս վրա գաղջ, լարձուն զանգվածի հոսքը, ստիպողաբար փակվող աչքերս ու այտերս սեղմող կաղապարի ճնշող նեղարտվածությունը տիպեցրին իմձ: Ավելի քան երկու ժամ ասես փշերի վրա լինեի:

- Վերջ, կարող ես վեր կենալ...

- Իսկ իմ պապիե-մաշենով ու՞ն արձանն ես սարքելու...

Նկարիչը կարմրեց.

- Գիտե՞ս, երևի քոնը չօգտագործեն... Ինձ պետք էր ընկերոջի պապիե-մաշեն, որ Կեսարի արձանը կարողանայի սկսել... Կարծում էի՝ չի համաձայնի, որա համար... Մի խոսքով, անհեթեթություններ են դուրս տալիս... Ներին...

- Դրա համար երկու ժամ ինձ չարչարեցի՞ր...

Շուտով նա երկու նոր դեր ստացավ, ես՝ ոչ մի... Մի օր էլ մոտեցավ ու.

- Գիտե՞ս, քո դերը խաղալու համար դիմում եմ գրել...

- Ո՞ր դերս...

Ասաց...

- Այսր դա իմ միակ մեծ, նորմալ դերն է... Իսկ քո տե՞ղը, ո՞վ է բազմամարդ տեսարաններում մտնելու...

- Բեմադրիչն ասաց, որ դու...

Դուրս եկա փողոց... Աստիճանների վրա ոտքս ինչ-որ բանի դեմ առավ: Սատկած առնետ էր: Փշաքաղվեցի ու քայլերս արագացրեցի: Կոչիկներիս վրա տեսմեն արյան հետքեր կա՞ն: Նայեցի ու կրկին փշաքաղվեցի: Ոտքերիս առաջ մեկ ուրիշ առնետ էր ընկած: Տեսմեն ո՞վ է այսօր առնետորսի դուրս եկել: Ահա մի առնետ ևս: Կարծես դեռ կենդանի է: Երկու քայլի վրա մի ուրիշն է շունչը փշում: Ժանգագույն աղբով ու կանաչավուն, տարօրինակ լորձով լեցուն փողոցներմ ամայի էին: Խաչմերուկին չէի հասել, երբ երկու՝ խամածիկների նման օրորվող անցորդների հանդիպեցի: Նրանցից մեկը կոկորդ պատռելու չափ գոռում էր: Սկզբում թվաց, թե հարբած է, բայց ... Տղամարդը սաստիկ ցավից էր գոռում: Պարանոցի վրա արնածոր խոց կար: Մյուս անցորդը հազիվ էր ընկերոջը քաշ տալիս: Շանկարծ երկուսն էլ ընկան ու նույն ակնթարթում հոգիներն ավանդեցին: Փախա... Բայց փախչել կլինե՞ր... Փողոցները մի վայրկյանում մարդկանցով լցվեցին: Նրանք բոլորն էլ գոռում, գանգատվում էին պարանոցի, անուրների և աճուկների շրջանում ունեցած անտանելի ցավերից: Շագում էին, փսխում լորձով լեցուն մայթերին: Նրանց մարմինները թարախսարշտիկներով էին պատված, զառանցում, դողում և արև էին ուզում, արև... արև...

Լեհապատօք ներխուժեցի թատրոն: Այստեղ ամեն ինչ խաղաղ էր: Խաղա՞ն էր: Դահլիճը լեփ-լեցուն էր: Ընկերս այսօր առաջին անգամ խաղում է իմ դերը: Լավ չի խաղում, և ինչո՞ւ է հանդիսատեսն ամեն տեսարանից հետո ծափահարում: Ես որ խաղում էի, ոչ որ չէր ծափահարում: Ծափահարում են, որովհետև քժնում է հանդիսատեսին: Գնում է դեպի հանդիսատեսը, այնինչ իսկական արտիստը հանդիսատեսին պետք է տանի իր ետևից:

- Չե՞ս ուզում ինձ շնորհավորել,- ընկերս է...

Շնորհավորեցի... Տուր թե կտաս դրա դեմքին:

- Ի՞նչ է եղել,- բեմադրիչը քննական հայացքով սկզբում զննեց նախկին ընկերոջս, ապա՝ ինձ,- ո՞վ է քեզ այսպես նախշել... Շա, դերի հիմնական դերակատար են քեզ նշանակում ...

- Բա ե՞ս,- թռավ իմ թերանից...

- Դու էլ միշտ կխաղաս նրա դերը... Բազմամարդ տեսարաններում...

Ես ասում եմ նրան, ասում եմ ու... Շաջողակ ասսողի տակ է ծնվել... Գեղեցիկ արտաքին, բախս՝ ուրիշ ոչինչ... Ես նրանից շատ ավելի տաղանդավոր եմ... Ինչո՞ւ պետք է նա ավելի հաջողակ լինի.. Ինչո՞ւ նրան բերեցի մեր թատրոն: Կամ սկզբից պետք է իզութողը վերացնեի, որ հաջողություն չունենար... Նույնիսկ ինձ մորցակից չի հաշվում... Այս, ճակատագիր, որ հովանապիրում ես ամենաանարժաններին...

Մեր հարաբերությունները վերջնականապես փչացան: Արհամարհում էր ինձ: Նրա հասցեին գովեստները շարունակվում էին: Մարդիկ, ինչպե՞ս եք կարողանում այս խառնակ ժամանակաշրջանում, երբ քաղաքը կործան-

62

վում է, բնակիչները մեռնում են, նրան գովաբանելու համար ժամանակ ու բառեր գտնել:

Դուրս եկա տնից: Մութ էր... Արև, արև, դու մահամե՞ր ես, թե՞ երես ես թեքել մեզնից: Փողոցները լեցուն էին դիակներով: Ասում են՝ ժանտախտի համաճարակ է տարածված: Մարդիկ մեռնում են հարյուրներով: Ըստ պաշտոնական տվյալների՝ գրիփի սովորական վիրուս է, որը մարդկային կյանք չի խլել:

Թատրոնում ոչ ոք չկար: Իջա թեմ: Նոր ներկայացման դեկորն արդեն հավաքված էր: Կենտրոնում կանգնեցրել էին կեսարի արձանը... Նրա արձանը: Բեմը լցված էր անթիվ-անհամար արձաններով ու կիսանդրիներով: Լավագույն արձաններն ու կիսանդրիները նրա դիմագծերն էին կրում: Իսկ ու՞՞ է իմ արձանը: Ահա, ընկած է ետնաբեմում, դեմքը կիսով այլանդակված, փոշուն հավասար...

Հանդիսատեսը օրեցօր քչանում էր, բայց մենք շարունակում էինք խաղալ: Նա խաղում էր գլխավոր, ես՝ լավագույն դեպքում, երրորդական դերեր: Նախանձում էի նրան... Այս, չեմ ամաչում խոստովանել: Նախանձում էի նրա հաջողությանը, ծայնի եւսէջներին, որոնք սկզբում ինձ դղջան էին թվում, քայլվածքին, հագուկապին, նույնիսկ հիվանդություններին: Նախանձում էի՝ տեսնելով, թե նրան ինչպես են սիրում, թե ինչպես է մեքենա վարում, հյուրեր ընդունում, գիշերում գեղեցիկ կանաց մոտ, կարճատեսության պատճառով ակնոց կրում, մեկնում արտերկիր՝ նկարահանվելու, ինչպիսի հեղինակություն ու ծափեր է վայելում:

Ես որոշեցի նրան սպանել: Մտահացման իրագործումը մեծ ջանքեր չեր պահանջի: Ջրեական պատասխանատվության չի ենթարկվի այն պարզ պատճառով, որ քաղաքում ամեն օր ժանտախտի համաճարակից առնվազն տասը հազար մարդ էր նախանում: Մեռելներին չին հասցնում թաղել, էլ ուր մնաց պարզեին, թե հանգույցալներից յուրաքանչյուրն ինչպիսի մահով է մահացել: Վկաներ ևս չին լինի: Թատրոնի ամրող անձնակազմից մնացել էինք ես և նա:

Եեր նոր ներկայացման պրեմիերային ընդամենը մեկ հանդիսական էր եկել: Նա խաղում էր գլխավոր, ես խաղում էի նրա ծառայի փոքր, աննշան դերը: Բայց լավ էի խաղում: Մի էպիզոդ էր, բայց այնպես էի խաղում, որ նրա կերպարը ստվերում էր մնում: Այնպես են անելու, որ ներկայացումը չավարտված մեռնի: Չեմ ուզում, որ արժանանա այդ՝ թեկուզ մեկ հանդիսատեսի ծափին: Կրունավորեմ կամ կիսեղինմ...

- Ժանտախտող լափի ծեր երկու տեմերն էլ,- հանկարծ բոլորովին ուրիշ պիեսից, ուրիշ կերպարի տեքստն ասաց: Այնպես ասաց, որ միակ հանդիսատեսը ծափահարեց: Ասաց ու ընկավ: Սոտ վագեցի: Մահամերձ էր, չհասցրեցի նրան մարդավարի սպանել: Ի՞նչ անեմ... Յիշանդանոց հասցնե՞մ: Իսկ ներկայացու՞մը, ո՞վ կխաղա... Գուցե արձաններին ինդիք՞մ...

- Խաղացեք, դուք խաղացեք, մինչև ընկերոջս հիվանդանոց տանեմ...

Արձանները լսեցին ինձ, շարժվեցին ու սկսեցին խաղալ: Տեր Աստված, նրա արձանը խաղում էր գլխավոր, իսկ իմ արձանը՝ ծառայի դերը:

Արդեն ավանդում էր հոգին: Յոգեվարքի մեջ էլ անասելի հմայիչ էր: Ես նախանձում էի՝ տեսնելով, թե նա ինչպես է մահանում:

Վերակենդանացման բաժնի միակ կենդանի մնացած բժիշկն առաջարկեց կտակ կազմել:

- Գոնե նրա ունեցվածքը օրինավոր ժանապարհով ինչ-որ մեկին հասնի...

- Ուզում ես ինչ-որ մեկին ինչ-որ բան թողնել...

- Ուզում եմ,- ընկերս հազիվ էր շնչում,- ամեն ինչ թողնում եմ քեզ...

Ասաց ու մեռավ... Վերջ...

Վերադառնամ թատրոն, շարունակեմ ներկայացումը: Յիմա արդեն գլխավոր դերերը ես կխաղամ: Վերջապես...

Դասա թատրոն, մտա թեմ: Գլխավոր հերոսի տեքստից երկու բառ չի արտասանել, երբ շվկոց լսեցի: Միակ հանդիսականն էր շվվացնում: Չեր ուզում, որ այդ դերը ես խաղալ: Իսկ ո՞վ պետք է խաղա... Նրա արձանը կրկին շարժվեց, իջավ պատվանդանից ու սկսեց խաղալ... Բարկացա... Ես կսպանեմ այդ միակ հանդիսատեսին, արձանն էլ կայրեմ... Կրա՞կ, կրա՞կ եմ ուզում այնպես, ինչպես ժանտախտով հիվանդները արև էին ուզում: Արև չկար, բայց կրակ կլինի: Վառեցի լուցկին ու հրդեհեցի թատրոնը: Արձանները կրակի բոցերի մեջ շարունակում էին խաղալ, խաղալ ու այրվել: Միակ հանդիսականը դահլիճից չեր հեռանում և այրվում էր արձանների հետ: Այրելը քիչ էր, պայրեցի շեմքը... Վերջ, հիմա ոչինչ չկա, ոչ ոք չկա...

Առավոտ կանուխ արթնացա, դուրս եկա փողոց: Քաղաքը կյանքով, ուրախությամբ, հաճույքներով էր շնչում: Գնացի թատրոն ու ազատման դիմում գրեցի... Այլևս դերասան չեմ... Չեմ ափսոսում, որ դերասան չեմ...

Անահիտ Հայրապետյան

## Պատմվածք

Գրիչն ուտում է ինձ,

Դադարում եմ պարզապես լինել,

Փոխանջատում՝ ժամանակ ցույց տվող սարքը:

Չայն չկա,

Միայն սառնարանն է խլացնում,

Այն էլ շուտով կդադարի,

Միայն հիմա եմ զորեղ,

Միայն՝ ես,

Միայն՝ այստեղ,

Ամեն ինչ

Ու ամենքին

Ու համառորեն փոխակերպում եմ,

Այլափոխում,

Մտմտում,

Մտնտում,

Մտնտում...

Դամարձակություն է պետք

Այդպես անելու

Եվ չանելու համար:

Քաղցրություն...

Կպչել քայլերից,

Դեմքս խառնել մատներիս,

Աչքերս՝ մեջքիս,

Դառնալ գունդ,

Քառակուսի,

Կոն,

Գլորվել,

Մազմիսանալ,

Արագանալ,

Մինչեւ կորցնեն

Անուն,

Քաշ...

Ես սա չեմ ուզում,

Ես սա չեմ ուզում,

Ես սա չեմ ուզում...

Աղաղակում եմ,

Մազիլերս խրում պատերին,

Կախվում առաստաղից,

Թևերս բացվում եմ,

Դրանից ցավ եմ զգում,

Տաքությունս խեղդում է,

Պայթում է գլուխս,

Աչքերս են հոգմել:

Սեծացա

Ակնթարթում,

Սիամգանից:

Ես սա չեմ ուզում,

Ես սա չեմ ուզում...

Սեղանը բարկացնում է,

Շարունակ ճանճեր են քայլում

Պատուհանի հակառակ կողմում,

Ուզում ներս անցնել,

Փորձում ներս անցնել:

Իմ ումեցածը մեծ բան չէ,

Բայց...

Սա չեմ ուզում...

Ես կարող եմ քայլել,

Դամարձակ չեմ,

Քիթս խոթում եմ՝ ուր պատահի,

Սպիտակ թուղթն ատում եմ,

Բայց այն իմ աչքի առջև է,

Ու ես ինձ վատ եմ զգում,

Գոռում եմ՝

Շուտ ինձ գրիչ տվեք,

Դասարակ,

Քսանիհնգ դրամանոց գրիչ,

Արագ...

Սոված եմ,

Նայում եմ ուտելիքին,

Որոշեցի սոված գրել պատմությունս,

Խանգարում են հարևանները,

Որոնք ծնունդ են նշում,

Շուտով իմը կլինի,

Այդ առավոտն էլ կրացվի,

Կփորձեմ թեթևանալ,

Չի ստացվի,

Չեմ կարող ուրախանալ,

Իրավունք չունեմ:

Արտաքուստ ամեն ինչ նորմալ է,

Դանդարտ,

Երբեմն ուրախ ժպտում եմ,

Միայն՝ թվացյալ,

Այստեղ շատ աստղեր կան,

## 64

Սոված չեմ մնա...

Երթուղային տաքսիները լցոնել են առօրյաս,  
Չեմ ուզում,  
Որ հենց դրանք լցնեն,  
Բայց...

Ամիանգստություն,  
Արհամարհանք,  
Դետո կողքից են նայում:  
Սարնարանն ազդում է նյարդերիս վրա,  
Ու ես այն չեմ անջատում:

Գլուխս լիքն է գաղափարներով,  
Երազներով,  
Որոնք իրենց ցինիկ աչքերն են հառել վրաս,  
Ասես ես եմ,  
Որ մարմնավորում են  
Իրենց սպասումներն ու վախը,  
Քժնանք,  
Ցինիկ քժնանք:

Սպասում է,  
Դաստատ գիտի,  
Որ բացել եմ պատուհանը,  
Ուրեմն հաց են փշոելու,  
Բարկացած նրան են նայում՝  
Զրիակե՛ր,  
Ես գոնե երթեմն գրում եմ,  
Դու ի՞նչ ես անում,  
Օ, թռչում ես,  
Ների՛,  
Պարտված եմ...

Ծովորեն,  
Մարմինս մի կերպ պահելով  
Ոտքերիս հետ նույն առանցքի վրա՝  
Քարշ եմ տալիս այն մի երկու մետր,  
Դասնում սեղանին...

Արևը սկսել է այրել,  
Սևացնել ասֆալտը,  
Դաստատ հիշում եմ,  
Որ ասֆալտը ֆ-ով է գրվում,  
Արևը մոխրացնում է  
Բառը,  
Տառը,  
Դնչումը...

Զայնալարերս խզվել են  
Աչքերիս պես,  
Որոնցում անընդմեջ շարժվող խազերը  
Ստիպում են ամեն ինչ տեսնել այնպես,  
Ինչպես որ կա,  
Դետո գիծ քաշել վրայով,  
Ասես թե այն սիսալ է,  
Չկա...

Քաղաքը մարում է լուսերը,  
Դրանք արդեն չեն լուսավորում...  
Գիշերն անցավ...

Լսարանում տոթ է,  
Դեղձուցիչ,  
Զգիտեմ որտեղ պահեմ գլուխս,  
Որ...

Ուղեղիս տատանումները  
հանկարծ չհամընկնեն  
դասախոսիս ճղճան  
ձայնի տատանումներին,  
Որը համառորեն շարունակում է դասախոսել  
Այլմոլորակայինների մասին,  
Որոնք իջան երկիր.  
Այ քեզ ծիծաղելի մարդ,  
Նրանք ամեն օր իմ սենյակում են:  
Չհաջողվեց,  
Դամընկան,  
Ուեզնանս,  
Խըրթ...

Անջատվեցի,  
Դերիք չէին աչքերիս ժխտող խազերը,  
Դիմա էլ ամեն ինչ  
Անձայն,  
Դանդաղեցված,  
Տիսուր,  
Դանգած...

Ո՞վ է կարդալու սա...

Ամենքը համոզվեցին,  
Որ այլմոլորակային ծամոն գոյություն ունի,  
Ես էլ եմ ծամում,  
Փուչիկ փչում,  
Մեծ,

Դեղին-դեղին,  
ճիշտ արևի պես,  
Բըլք...  
Զարմացած աչքեր,  
Լավ է,  
Որ գոնե ժխտվում են...

Երբ մի անգամ բարձրացա Սահունասար,  
Քիչ մնաց ցած ընկնեի,  
Կառչեցի ժայռից,  
Չգիտեի,  
Որ վեր բարձրացողը,  
Չպետք է ցած նայի,  
Նայեցի,  
Ու...  
Հասա գագաթ,  
Երկրորդն էի,  
Այնտեղ անուշ հոտով ծաղիկներ կային,  
Որոնց նայելն անգամ մեղք էր,  
Յետո ձի նստեցի,  
Որը սահթով իջավ.  
Արագություն,  
Բայց ձիուց էլ հոտ է գալիս,  
Որն ավելի տհաճ է,  
Քան` կովինը...

Երբ լսարանից դուրս եկա,  
Գրատախտակին շատ մեծ սխեմա կար գծած,  
Սիրում եմ տրանզիստորները՝  
Տարբեր տեսակի իրենց բնութագրերով,  
Արտաքին տեսքով,  
Ամենաշատը տրանզիստոր եմ սիրում,  
Տարբեր տեսակի գրքեր են կարդում,  
Բայց փնտրում են մեկը:  
Զախօսիսվեցին էլեկտրոնային լամպերը,  
Տրանզիստորն եկավ ու մնաց,  
Արհամարիում եմ ին գիտելիքները,  
Խոսում այնպես,  
Որ ֆ տառով գրվող ասֆալտը հասկանա.  
Չի հասկանա...

Նրանք ճակատագիր են ջարդում,  
Քանում ամեն ինչ,  
Իրենց անգույն մտապատկերներով  
Խցկում տողարանք,  
Ուզում և անում են...  
Դուրս են գալիս ին եջից,  
Ակսում թափառել,

Երբ աստված համակարգիչն անջատի,  
Ինձ կիհշի իր կոշտ հիշողությունուն,  
Բազմազանության համար,  
Իսկ իմ արագ թափառումներին՝  
Վե՛՛Զ...

Մասնագիտական տերմիններով  
Աշխատեցի համկարծ չխոսել,  
Իզուր,  
Ամենքն էլ անում են,  
Ու վատ էլ չի ստացվում...

Ֆուտբոլի դաշտում լինեի,  
Յո չէի վազի,  
Չէի վազի,  
Կտշեի գնդակն ու  
Գոլ կիսկեի,  
Սուրեն Բաղդասարյանն էլ  
Յուզված գո՞՞՞՞՞՞ լ կկանչեր,  
Բայց դաշտում...  
Յիերո,  
Զիդան,  
Սալգադո,  
Մաքելե...

Իրոք,  
Շատ հետաքրքիր հանդիպում է սպասվում...

Փիլիսոփայել պետք չէ,  
Ես էլ չէի ուզում,  
Օպերացիոն համակարգը  
Ինձ սխալ խնդրի տեղ է դնում,  
Փորձում դուրս շպրտել իր հիշողությունից,  
Ընդհատում...

Ղե արի ու բացատրի,  
Որ ուրցերն էլ տարբեր գույնի են լինում,  
Սպիտակավուն,  
Մանուշակագույն...  
Ղե արի ու ասա,  
Որ տատս

Ու իր ննան շատ-շատերը  
Իր ու իր հարևան մի երկու գյուղից բացի  
Ուրիշ ոչինչ չեն տեսել...  
Որ խորհուրդն ամենուր է,  
Ուր՝ դատարկությունը...

Աչքերումն շարժվող ընդհատումները

# www.բնագիր.am

66

Սկսեցին բրոունյան շարժում կատարել...

Մի՛ թողեք պատմեմ Կրետե կղզում գտնվող  
Ինստիտուտների ցանցի մասին,  
Շուտ կսպառվեմ,  
Սարսափում եմ,  
Երբ ասելիք չեմ ունենում...

Գոնե ծանոնս դեռ չի փչացել  
Ու փշվում է առաջվա պես մեծ  
Ու վառ դեղին՝  
ճիշտ արևի պես,  
Որը սևացնում է ֆով գրվող ասֆալտը...

Մի օր արթնացա և ուզեցի գրել,  
Մի օր կարթնանա՞մ, որ չուզեմ գրել...

Դժգոհում եմ համակարգի դեմ,  
Ամեն տեսակի համակարգի,  
Կոռորդինատային համակարգ,  
Տնտեսական համակարգ,  
Իրավական համակարգ,  
Գնահատման համակարգ,  
Յարկային համակարգ,  
Խնդիրների համակարգ...  
Բալզակյան...  
Անկանոնության եմ ձգտում...  
Ամեն ինչ կանոնիկ է...

Սկսել եմ հաճախ ժպտալ,  
Գրեթե միշտ ժպտում եմ...

Ցած իջա՝  
Մի քիչ վազելու,  
Մարզվելու,  
Մարդ չկա,  
Ասֆալտը դեռ չի սևացել,  
Իր գույնն է ուտում...  
Դանդաղ քայլ,  
Արագ քայլ,  
Դանդաղ վազք,  
Արագ վազք...  
Սառն է օդը,  
Գայթակղիչ.  
Ոչ ոք,  
Առավոտյան ձայն,

Ղեգերումից հոգնած շներ,  
Որոնք ամենուր են,  
Որոնք հարմարվեցին մեր ներկայությանը,  
Տանելի դարձրին մեր ներկայությունը...

Ի՞նչ ես ուզում դառնալ...

Արի ու տես,  
Որ բախտ կոչվածին էլ պիտի հիշեմ...

Նստում եմ երթուղային տաքսի,  
Չեմ ուզում,  
Որ դրանք իմ օրը լցնեն...

Կակաչների դաշտերը պարում են՝  
Շոգնած,  
Փոշոտ,  
Ճիմա ուրիշ դեղին ծաղիկներ են,  
Կամաց-կամաց չքանում է ասֆալտը,  
Միայն հող ու փոշի...

Ծխախոտի հոտը տանել չեմ կարողանում,  
Գովազդ չէի սիրում,  
Ճիմա շատ եմ սիրում,  
Փողոցով քայլելիս հայացքս վեր է նայում,  
Աստված է դարձել գովազդը...

Ճիմա կանաչ ծամոն եմ ծամում,  
Փշում մեծ,  
Վառ կանաչ,  
ճիշտ՝ նման արևի,  
Որը հանդգնորեն փայլեցնում է ասֆալտը,  
Ֆով գրվող ասֆալտը...

Բարին ամենուր է,  
Գոնե ինձ այն միշտ ուղեկից է,  
Սովորություն էի ծեռք բերել՝  
Միայն համակարգչի առջև գրելու...  
Մի կերպ հրաժարվեցի,  
Թուղթն ու գրիչը  
Ինձ հետ քարշ տալ կարող եմ...

Ճիմա կարմիր գրիչով գրում եմ,  
Ու վառ կանաչ փուչիկներ փչում...  
Բըլթ...

## Յարություն Յարությունյան

([www.bnagir.am](http://www.bnagir.am)-ի «Ընթերցողի գործեր» էջից)

### Ապտակի գինը

Սեղրակի ուրախությանը չափ չկար: Առավոտ կանուխ աչքերը բացել ու հորն էր տեսել՝ կողքին պառկած: Չեր հավատացել, քնատ աչքերը տրորել էր, որ ավելի լայն բացվի երևի, որ իրոք համոզվի: Յա՞յրն է... Յա էլի, ինքն է... Ամբարված կարուտը հրեց նրան ու Սերոն հոր կրծքին ընկավ՝ ամուլ-ամուլ գրկեց: Այդ պահին Սերոն ամենաերջանիկ մարդն էր, ամենաուրախ երեխան: Յոր բացակայությունն ընկճել ու խեղճացրել էր նրան, ու իման առավոտ կանուխ հոր հայտնվելը նրա համար վերջ էր դնելու ընկճառածությանն ու խեղճությանը: Գյուղամեջ կիշին առույգ ու ինքնավստահ, քանի որ հայրը վերադարձել է. ի՞նչ փույթ, թե դատարկածեն է վերադարձել խոպան ասածից: Սերոյի համար խոպանը մի ուրիշ բան էր, քաղաք՝ էր, աշխարհանա՞ս էր, երկի՞ր էր, ի՞նչ էր, չէր հասկանում, միայն գիտեր, որ երբ այդտեղից վերադառնում էին գյուղացիները, սկսում էին հազար ու մի պատմություններ՝ ճշշտն ու սուտը իրար խառնած, ու պատմում էին, պատմում... մինչև մյուս տարի գարունը, երբ էլի նոյն մարդիկ, նոյն կերպ կրօնեին խոպանի ճանապարհը: Մի բան էր Սերոյին մշտիքարում. ինչքան էլ հայրը ձեռնունայն վերադարձած լիներ, գոնե սեպտեմբերի 1-ին նոր պայուսակով, նոր կոշիկներով դպրոց կզնար:

Այդ օրը Սերոն գյուղամեջ իջավ տաքուկ երազ-ներից ոգևորված, առույգ, ինքնավստահ: Գյուղամեջ ասածը՝ գյուղի կենտրոնն էր՝ խանութի շրջակայքով, ուր հավաքվում էին գյուղի մեծերը և առավոտից մինչև ուշ իրիկուն քննում աշխարհի գործերը:

Սերոն տեղավորվեց խանութի մոտ, ամֆիթատրոն հիշեցնող քարե նստարաններից մեկին, իսկ քիչ այն կողմ տաճա խաղացողները արդեն սկսել էին իրենց խաղն ու չին նկատել Սերոյին:

Զորքա Յրաչի աչքից չվրիպեց Սերոյի ինքնավստահ կեցվածքը, ու նա, երեխային խայթելու համար, իեզնական հարցրեց.

- Խե՞ր ըլմի, առավոտ գիշերով եկել նստել ես քարին: Զլիմի՞ մորդ հետ քաղաք ես գնում՝ շոր-մոր, կոշիկ-մոշիկ, զքուրգիրի առնելու:

Յազիկ առիթը կայացել էր, ու Սերոն, Զորքա Յրաչի հեզնախան հարցումը բամի տեղ չդնելով՝ ուրախ-ուրախ պատասխանեց.

- Չէ, հերս ա եկել, ես տարի քաղաք չենք գնալու, ինչ պետք ա, հերս խոպանից բերել ա:

Սերոյի ինքնավստահ տոնը Զորքա Յրաչին դուր չեկավ ու նա ասես փորձեց վրեժինդիր լինել ու իրեն

հատուկ լկտի տոնով շպրտեց.

- Պա՞հ, պա՞հ, պա՞հ, հերդ հազիկ իրեն բերեր տուն հասցներ, քեզ շոր որտեղից ա բերել: Շոր բերող լիներ, մեկ-մեկ էն գյողալ մորդ փող կուղարկեր, որ սրա-նրա համար քոջություն չամի:

- Ներս խոպանից ինձ համար սուրբիթ լաքից կոչիկ ա բերել... Բենոյի կոշիկներից էլ լավը:

- Բարով մաշես... մորդ համար ի՞նչ ա բերել, երևի շոլկովի տռուսիկ, հա՞-, -ու քահ-քահ հրհռաց:

Աշխարհը կարծես շուր եկավ: Երկինքը աչքին սևացավ, արյունը խփեց գլխին.

- Շոլկովի տռուսիկ կնիկդ էր հագել ու թողել Յայրոյնց գոնում, երբ դու խոպանում էիր: Յրեն, հիմա էր տռուսիկը երևի Յայրոյի կնիկն ա հագնում: Էս ականջներովս եմ լսել, թե աղբի գլխին կանգնած ոնց էր Յայրոյի Յայկուշը կնանիքին պատմում տռուսիկ գտնելու պատմություննը, - ինքնագոհ միամիտ մանկան հայացքը ուղղվեց Յրաչի կողմը:

Յայրոն, որ տաճա խաղացողներից մեկն էր, քարացավ, բայց և միանգամից ելքը գտավ. պարձեցավ, թե նման բան եղել է, բայց՝ կողքի գյուղից, ուրիշի կնկա հետ, և որ էլ լակոսի լեզուն պետք ա կտրել, որ էլ սուտ չխոսսի:

Ասես Սերոյի մեջ վիրավորանքից ժայթքած իրաբուխը միանգամից մարեց, պաղեց ու... մի տեսակ փոշմանց, որ Յայրոյի անունը տվեց: Մինչ Սերոն կվայելեր Զորքա Յրաչից վրեժինդիր լինելու հաճույքը, Զորքա Յրաչի ծանր ապտակը նրան գետին տապալեց: Ապտակի շառաչից աչքերի առաջ սևացավ: Ականջում ապտակի շառաչը չէր թողնում այլս լսել մյուսների ասածները: Միայն լսում էր խոսքի տակն ու գլուխը խարնած կատաղած Յրաչի հայհոյանքները անբաշար, անհաջողակ հոր հասցեին ու հավաքվածների թունդ քրքիջը:

Տաճ ծավալված խոսակցությունից Սեղրակը հասկացավ, որ ոչ մի սուր քիթ կոշիկ էլ չի լինելու: Յայրը պարտքով ինքնաթիրի տոնս էր գնել ու մի կերպ եկել հասել էր գյուղ: Իսկ տաճը կուտակված պարտքերն այնքան շատ էին, որ ինչ-որ բան գնելու մասին խոսելն ավելորդ էր: Սեղրակը հիշեց տատի սիրած ասացվածքը. «Եղունգ ունես, գլուխտ քորի»: Սակայն ինքն իր գլուխը քրելու համար էլ դեռ շատ փոքր էր: Ո՞վ Սեղրակին գործ կտար կամ ի՞նչ կարող էր անել խեղճը, որ կարողանար դպրոցի համար նոր հագուստ գնել: «Պայուսակ էլ չընեմ, որ այս տարի մի կերպ յուլա գնամ», - մտածում էր Սեղրակն ու ելքը չէր գտնում:

Սեպտեմբերի 1-ին հաշված օրեր էին մնում: Ամեն առավոտ Սեղրակը խանութի քարին նստած բախծոտ հայացք համադասարանցիներին ծնողների հետ ճանապարհում էր քաղաք՝ շոր առնելու, իսկ իրիկնամու-

տին հետ վերադարձներից լսում էր շատ մեծ քաղաքի ու մեծ խանութերի մասին պատմություններ, որոնք կարծես հեքիաթ լինեին: Ամեն անգամ այս պատմությունները լսելիս Սեղրակն ավելի ջղագրգիր էր դառնում, բայց ամեն կերա աշխատում էր քողարկել իր անհանգստությունը: Գիշերները քունը չէր տանում, հոլի պես պտտվում էր անկողնում: Անընդհատ հիշում էր խանութի միջադեպը, ու անզորությունից լացը զալիս էր: Վիրավորականն այն չէր, որ Յրաջը ապտակել ու հայինել էր, այլ՝ այն, որ սեպտեմբերի 1-ին բոլորը տեսնելու էին Սեղրակին առանց նոր շորերի ու հերթական անգամ ինքն անաչելու էր հոր փոխարեն:

Սերոն սուտ խոսել չէր սիրում, բայց այդ օրը իր կամքից անկախ ստեղ ու ականա դարձավ հորինած ստի գերին: Ամեն ժամ, ամեն վայրկյան մտածում էր, մտածում ու ելքը ոչ մի կերպ չէր գտնում: Այսպես մտամոլոր, հանդում թիկն տված խոտի դեզին, հերթական անգամ ընկել էր երազների գիրկը, երբ ականցին հասած խոսակցությունը սթափեցրեց և պարտադրեց լարել լսողությունը:

- Թո՛ղ, Յայրո, թո՛ղ: Եսօր՝ չէ, մարդիկ կտեսնեն, խայտառակ կլիմենք: Տե՞ղ ես գտել սիրելու: Օրը ցերեկով, բաց դաշտում... քեզ հաշիկ տալի՞ս ես, թե ինչ ես անում,- դիմադրում էր կնոջ ձայնը:

- Չե՞ն թողնելու, Սանամ ջան, քանի օր է չոր ու ցամաք քարշ են զալիս, չե՞ն թողնի... մինչև են ֆրանսիական սեքսից չանես, չե՞ն թողնի,- տնքոցով շշնջում էր Յայրոն:

- Յայրո, թո՛ղ, Աստծո սիրուն, ինձ խայտառակ մի արա,- աղերսում էր Սանամը,- գիտես, ես չեմ ուզու՞մ... տեղը չի, չէ՞։ Վաղը, Յայրո ջան, Յրաջը երեխուն տանելու է քաղաք շոր առնելու, վաղը արի, թոնրատան կողքի ամբարում կսպասեն: Յա՞ն ֆրանսիական սեքսից կանեմ, համ հայկականից, մենակ թող գնամ, շուն ու շանգալ չտեսնի, խայտառակ չլինեմ:

Յայրոն հանձնվեց պայմանով, որ հաջորդ օրը Յրաչին խանութի մոտից քաղաք «ճանապարհելուց» հետո գնա Սանամի մոտ:

Սեղրակը անշնչացած միսրձվել էր դեզի մեջ: Մեկ ուզում էր վագել գյուղ, ամեն ինչ պատմել Զոռքա Յրաշին ու Յայրոյին վրեժմնիդր լինել մի քանի օր առաջ տեղի ունեցած միջադեպի համար, մյուս կողմից մտածում էր, որ այդպիսով լավություն արած կլիմի Յրաչին: Մեկ մտածում էր հավաքել գյուղանեցի մարդկանց ու Յրաչենց ամբարում թամաշա կազմակերպել, մեկ էլ փոշմանում էր ու... սատանան գիտե, թե ինչեր էր մտքովն անցնում:

Սեղրակի համար նորություն էր ֆրանսիական սեքս արտահայտությունը, որը ոչ մի կերպ չէր տեղափորվում նրա մանկական երևակայության մեջ: Ինքը տեսականորեն սեքսի մի ծև գիտեր, որ լսել էր ավագ

ընկերներից, իսկ գործնականում՝ բազմիցս ականատես էր եղել, թե ինչպես են գյուղի ամեն մի պատահած վայրում անասունները զույգվում: Ֆրանսիական սեքսը գայթակղել էր Սեղրակին, ու չէր հասկանում, թե որն է իր պատկերացրած սեքսի ու ֆրանսիականի տարրերությունը:

Գիշերը Սեղրակը չըմեց: Քունը չէր տանում: Մտածում էր ու գալարվում անկողնում: Լուսադեմին փակեց աչքերը ու երազ տեսավ. դպրոց էր գնում իր երազած լաքից սուրբիթ կոշիկները հագին ու ձեռքին մի մեծ ծաղկեփունջ: Գյուղացիներն ու դասընկերները հավաքվել էին շուրջը և նայում էին կոշիկներին, իսկ կոշիկներն այնպես էին պլայում, ոնց որ հեքիաթում լիներ: Ծեր արադադի խռպոտ ծուլդուլուն դանակի պես կտրեց Սերոյի անուշաբույր երազը, և կիսարթուն պատանին ցավով արձանագրեց գիշերվա խարկանքը:

Գյուղամեջ: Յրաջը հագել էր քաղաքի շորերը ու Բենոյի ձեռքը բռնած խանութի մոտ սպասում էր քաղաք մեկնող առաջին ավտոբուսին:

- Ես քաղաք եք գնո՞ւմ,- իբր անտեղյակ հետաքրքրվեց Յայրոն:

- Յա, Բենոյիս տանեմ՝ դպրոցի համար մի քանի պակաս-պրատ բան կա առնելու,- պատասխանեց Յրաչը:

- Ես ախնախի համար էլ մի քանի հատ գրիչ առ, մեղք ա,- հայացքը ուղելիք պատի տակ նստած Սեղրակին՝ շարունակեց Յայրոն,- հերը խոպանից դափ դատարկ ա եկել:

- Ին հերը ամեն ինչ էլ բերել ա, դու քո ողորմությունը քեզ պահի,- չդիմացավ Սերոն:

- Պահ, պահ, հելք սրան նայի, սրա խոսելուն նայի: Են օրվա տուրք դաս չեղավ, հա՞,- շարունակեց Յայրոն:

- Պասը դու հետո կտեսնես,- քի տակ մրթնորալով վեր կացավ Սերոն ու քայլերն ուղելեց դեպի Յրաչենց թաղի կողմը:

Սեղրակը աննկատ տեղավորվեց Յրաչենց թոնրատան կողքի ամբարում՝ խոտի տուկերի վրա, որտեղից պարզ երևում էր ամբողջ ամբարի տարածքը: Սանամը ակտիվ դուրս ու ներս էր անում և պատրաստություն տեսնում: Սկզբից կարգի բերեց խոտի տուկերից պատրաստած անկողին հիշեցնող տարածքը, քիչ հետո վերադարձավ ջրի «տագիկով» ու գույնզգույն երկու սրբիչներով: Շատ չանցած հայտնվեց նաև Յայրոն, ու, միանգամից փաթաթվելով Սանամին, քավալվեցին հարդե անկողնում: Սեղրակի համար տեսարանը և տարօրինակ էր, և շատ հետաքրքիր: Աչքերը ճպճապնելով ու թուքը հազիվ կուլ տալով՝ փողոձում էր հատ-հատ կլանել նրանց յուրաքանչյուր շարժումը: Մի քանի վայրկյան էլ չէր անցել, երբ Սանամն ու Յայրոն հայտնվեցին մորե-

մերկ վիճակում: Սեղրակը ամոթից գլուխը շուր տվեց պատի կողմը և փոշմանց իր արածի համար, բայց հետագա ճիշդիցներն ու Սանամի տնքոցները նորից Սեղրակին վերադարձրեցին իրականության դաշտ, և այն, ինչ հետո տեսավ Սեղրակը, իրեն դեռ ոչ ոք չէր պատմել, ու ինքը ոչ ոքից չէր լսել: Մի պահ Սեղրակին թվաց, որ սրանք իրենց թաղի շների պես կցվել են ու չեն կարողանում իրարից պոկվել: Դետո Սեթոն ապշեց, երբ տեսավ Սանամին չոքած զուգընկերոց առջև, գլուխը՝ Շայրոյի ոտքերի արանքում:

Սեղրակը ծեռքերով ամուր փակել էր դեմքը, բայց, գայթակղությանը չփինանալով, մատերի արանքից շարունակում էր դիտել: Շայրոն անասնացած ճայներով շարունակում էր իր հաճույքը վայելել՝ մեկ Սանամի վրա պարկելով, մեկ Սանամին փորի վրա պարկեցնելով, իսկ Սանամը երանության մեջ էր ու դադար չէր ուզում՝ շունչ քաշելու համար: Սեթոն համեմատեց Շայրոյին գյուղի նախրի ցուլի հետ, որը մի կովից թռչելով մյուսի վրա՝ չէր հանգստանում մինչև արոտից տուն հասնելը: Սեթոն, ինքն էլ չխասկանալով՝ պաշած, թե հիասթավված, որոշեց ծածուկ վայր իջնել իր ընտրած բարձունքից ու աննկատ հեռանալ դեպքի վայրից, երբ հանկարծ հայացքը դիպավ Սանամի գետնին շարտված ներքնաշորերին: Սեթոն միանգամից որոշեց անելիքը: Աննկատ տիրանալով ներքնաշորերին՝ լրեց ամբարը՝ թռնելով Շայրոյին ու Սանամին իրենց կրթերի հորդանութուն:

Կեսօրին արդեն անելիքը որոշված էր: Սեթոն հաստատակամ էր. մինչև երեկո՝ Շայրի վերադառնալը, այցելել Սանամին: Սանամը երջանիկ հայացքով դիմավորեց Սեղրակին, մտածելով, որ նրան մայրն է ուղարկել հաց թխելու օրը պայմանավորվելու համար: Սակայն, լսելով Սեղրակի պահանջը՝ մոր աշխատանքի դիմաց հազար դրամ վճարելու փոխարեն բոլորից գաղտնի նվիրել մեկ գույգ լաքից սուրբիթ կոշիկ, դպրոցական պայուսակ և երեք հազար դրամ, կարկամեց, իսկ հետո սկսեց բարձրածայն ծիծաղել՝ շարունակելով մտածել, որ այդ աննորմալ պահանջի հեղինակը մայրն է:

- Է՛տ փայլուն մտքի արտացոլումը հորդ խոպանից գալուց հետո՞ է մորդ ուղեղում փայլատակել, - քահ-քահ ծիծաղելով՝ Սեղրակին դիմեց Սանամը: Սանամի ծիծաղը շատ նման էր մի քանի օր առաջ խանութի մոտ հավաքված տղամարդկանց քրթին: Սեղրակի մարմնով դող անցավ: Սանամին հորդորեց լրջանալ, քանի որ երեկոյան ողջ գյուղն է ծիծաղելու, երբ Շայրը քաղաքից գա: Այս խոսքերից հետո Սեղրակը պատկերավոր ձևով հատ հատ սկսեց շարադրել մի քանի ժամ առաջ իր տեսած ֆրանսիական, հայկական ու էլ չգիտեմ ինչական սերպի տեսակները և տղամարդու խոսք տվեց երկրորդ անգամ չպատմել տեսածը, եթե Սանամը ընդունի իր պայմանը: Սեթոյի հանդուգն պահվածքից Սանամը մի պահ կորցրեց չափի գգացողությունն ու իր բառապա-

շարում առկա լպիրշ արտահայտություններով հերքելով ու տարբեր հակափաստարկներ բերելով՝ խոստացավ Շայրի գալուց հետո Սեղրակի հոր գլուխը ուսերի վրայից պոկել: Սեղրակը գործի դրեց իր ծանր հրետանին, ասելով, որ ինքը Սանամի «լիֆչիկն ու շոլուսիկը» կախելու է խանութի պատից ու բոլորին պատմելու է այն ամենը, ինչ տեսել է ամբարում:

Սանամի համար հանելով էր մնացել ներքնաշորերի անհայտանալը: Քանի որ Շայրոն իր գործն ավարտելուց հետո արագ-արագ հագնվել ու հեռացել էր, Սանամը կարծում էր, որ այդ չար կատակի հեղինակը Շայրոն է և ուր որ է շորերը հետ կը երի: Այսպիսի դաժան շրջադարձը իրոք անսպասելի էր: Սանամին այլ ելք չէր մնում, քան համաձայնել Սեթոյի առաջարկին:

Սանամի տված փողին Սեթոն մատով չկպավ: Չվերցրեց: Մորն ի՞նչ էր ասելու: Բացատրություն չուներ: Միայն ասաց, որ ինքը երեսունչորս համարի կոշիկ է հագնում և առաջարկեց այդ փողը տալ Շայրոյին և առավոտյան ուղարկել քաղաք՝ իր համար գնումներ անելու: Պահանջած ապրանքներն ու երեք հազար դրամը՝ որպես նվեր, Սանամը բոլորից գաղտնի պետք է տար իր մորը, երբ երեք օրից մայրը գար հաց թխելու ու պետք է խնդրեր, որ ոչ ոքի չպատմի նվերի մասին: Սեղրակը խոստացավ Սանամի ներքնաշորերը հետ վերադարձնել նվերը ստանալուց անմիջապես հետո և ընդմիշտ մոռանալ այն ամենը, ինչ տեսել էր:

Առավոտյան Սեղրակը նստել էր խանութի մոտ, տամա խաղաղողների կողքին, երբ հայտնվեց Շայրոն անսովոր կոկիկի հազ ու կապով:

- Քաղաք եմ գնում, քրոջս տուն,- համագյուղացիների զարմացած հայացքներին պատասխանեց Շայրոն:

- Հո բան ման չի՞ եղել,- ծևական անհանգստությամբ, խաղից չկտրվելով՝ հետաքրքրվեց Շայրը:

- Չե, քրոջս եմ կարոտել, որոշեցի գնամ քաղաք, համ քրոջս կտեսնեմ, համ էլ մանր-մունը առևտուր կա անելու... Սեթը ջամ, ո՞նց ես, - չավարտելով խոսքը՝ մտերմիկ տոնով դիմեց Սեթոյին,- քաղաքում գործ չունե՞ս: Արի հետս տանեմ, դպրոցի համար բան-ման կառնես:

- Ինձ ոչ մի բան պետք չի, հերս խոպանից ամեն ինչ էլ բերել ա: Սեպտեմբերի 1-ին կհագնեմ, բոլորդ էլ կտեսնեք, - հպարտ պատասխանեց Սեթոն ու հեռացավ:

Միայն Սեթոն ու բոզ Սանամը գիտեին, թե Շայրոն ինչի և ում համար է գնում քաղաք:

70

Դավիթ Գրիգորյան  
(www.bnagir.am-ի «Ընթերցողի գործեր» էջից)

## Կյանքը քաք է

Իհարկել չկա այս կարծ ու անհմաստ պրոցեսի ավելի դիպուկ և բովանդակալից բացատրություն: Կյանքը նման է քաքի՝ թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստով:

Ուղիղ իմաստ.

Երկուսն էլ սկիզբ են առնում մեկ այլ կյանքից: Ապրելու և քաքելու տարբեր փուլերում մարդն ապրում է ցավոտ և սահուն պահեր, երջանիկ և տիսուր հիշողություններ: Կյանքը, հնչած և քաքը, լինում է երկար և կարծ, առողջ կամ՝ ոչ այնքան, շատ դեպքերում՝ անկանխատեսելի: Բայց երկուսի վերջն էլ անխուսափելի մահն է՝ մարդու ազատագրում տաճանքներից, որը երկու դեպքում էլ բերում է NIRVANA-ի: Կյանքի և քաքի մահվան պատճառները գութե չեն տարբերվում՝

1. Առողջ մահ - քաք,
2. Ճիշտն և տառապալից մահ - ցեռ կամ փորկապ,
3. Սպանություն կամ ինքնասպանություն - հոգնա,
4. Կյանքին սպառնացող վտանգ - տեռ կամ թիս,

Այս ամենը անալիգի ենթարկելով, մանրամասնորեն ուսումնասիրելով՝ հանգում ենք մի եզրակացության. կյանքը իրոք քաք է: Մնում է պատասխանել լոկ մեկ հարցի՝ արդյոք քաքը կյա՞նք է:

Փոխաբերական իմաստ. այո, իմ բարեկամ, այսուհետ իմացիր, որ քո կյանքը ոչ այլ ինչ է, քան՝ քաք, նույնքան անհմաստ ու տիսուր: Եվ եթե կարող ես իմաստ գտնել քո ապրած կյանքի, քո ներկայի և ապագայի մեջ, ապա ամեն անգամ գրասենյակում տնքաթասի վրա աշխատելիս եղիր երջանիկ, չլ՝ որ մեկ անգամ էլ քեզ բախտ վիճակվեց ապրել կյանքի ամենախորհրդավոր պահերից մեկը:

## Մոմիկ Վարդանյան

### Պ ո ս տ մ ո դ ե ռ ն ի զ մ ի մ ա յ ր ի կ ը ...

#### Գլուխ 1

Սպիտակ սավանի վրա բաց կապույտ  
արտացոլված էլեկտրականություն:  
Շների սերս՝ փողոցում: Շտապում է արուն,  
արագեցնում է:  
Միջարանում կիսամերկ աղջկներ:  
Բջջային հեռախոսների էլեկտրականությունը  
նրանց ականջների մեջ կուսությունը կորցնելու  
ցանկություն է ծնել:  
Մինչ ծնելը՝ գրգռել:  
Խոնավացրել:  
Օպերայի մոտի լուրերի կարմիր տողը  
դանդաղում է:  
Եղանակի տեսություն:  
Սաստիկ շոգ է:  
Հայտարարություն:  
Այսօր բոլորս գնում ենք մեր կուսությունը կորցնելու:  
Հանուն Հայաստանի Հանրապետության  
ժողովրդավար ճանաչվելու ազգային  
արժանապատվության նոր չափանիշի:

Սպիտակ սավանի վրա գրվում է ֆիլմի  
անվանումը, հետո ռեժիսորի անունը:  
Էկրանի շուրջ հավաքվում են կանգառի  
ուշացածները:  
Պոռճկուհիներից մեկը բոլոր տղամարդկանց  
հայինում է,  
խնդրում է,  
բոլոր տղամարդկանց համար էժանացնում է,  
միայն տղամարդկանց համար...

- Գիշերը քնելու համար չէ...

Ընդամենը 3000 դրամ:

Ոչ ոք ուշադրություն չէր դարձնում:

Սպիտակ սավանի վրա արյուն ծորաց...  
Հանո՞ւն Ազատության:

Հանո՞ւն ժողովրդավարության:

#### Գլուխ 2

Առավոտյան վարունգները դասավորվեցին  
շուկայում,  
հավերի ձվերը կնքվեցին ֆաբրիկայում ու

հիսուն դրամանոց դարձան:  
Դպրոցականը ձու խաշեց,  
կերավ,  
ու առանց ատամները լվանալու տնից դուրս  
եկավ:  
Բիլիարդանոց մտավ 8.30-ին,  
ծխեց,  
որովհետև դպրոցական էր և պիտի ծխեր:  
Դրսում շոգ էր.  
ոտքերի միացման հատվածը այրվեց,  
և նա ցավերով շտապեց տուն գնալ:  
Տուն մտավ և հեռուստացույցով լսեց,  
որ երեխայի իրավունքները պաշտպանվում են  
օրենքով, ինքն իրեն հաստատեց մի պահ,  
որովհետև ինքն արդեն մի տարի էր, թթել էր  
ծնողներին հարգելու իրավունքի վիա:  
Վարունգ կերավ, որովհետև վարունգները  
առավոտյան դասավորվեցին շուկայում:  
Մայրը ժպտաց, որովհետև ինքը մայր էր և  
պիտի ժպտար:

#### Ազատություն թիվ 2

Հանուն ժողովրդավար Հայաստանի՝ ծնողին  
շիարգել հին չափանիշներով,  
միայն նոր չափանիշներով հարգել.  
հայինելու դեպքում՝ հայինել,  
ապտակելու դեպքում՝ ապտակել,  
գնալ ննջասենյակ,  
հավաքել մայկա-տրուսիկը  
և հեռանալ միայնակ ընկերոջ տուն,  
երկու օր մնալ,  
և վերադառնալ ոստիկանների  
պարտադրանքով  
ու չխոստովանված ցանկությամբ ու կարոտով:

#### Գլուխ 3

Գորկին 1948 թվականին ինքնասպանություն  
գործեց:  
2004 թվականին Հայաստանի նկարիչների  
միությունում Գորկուն նվիրված ցուցահանդես  
էր:  
Գորկու «Ծիրան» կտավը գլուգործոց է:  
Գորկին հայ է:  
STOP.

72

Նո(t) գլոբալիզացիա...  
Գորկին հայ է. ամերիկացի չէ:  
Fuck USA!  
Փառք խորգոմին:  
Fuck turks!

## Գլուխ 4

Աղմուկ...  
Ոչ ոք չի լսում:

## Ազատություն թիվ 3

Խոսքի ազատություն:  
Հանո՞ւն Հայաստանի:  
Ընդդե՛ն համրության:  
Գոռա՞լ:  
Ծխե՞լ:  
Խմե՞լ:  
Հայինե՞լ:  
Երգե՞լ:  
Լացե՞լ:  
Անեն ինչը՝ բարձր:  
Փախչե՞լ:  
Կարգախոս:  
Թքե՞լ հիմ ժամանակների վրա:  
Լինե՞լ ժամանակակից:  
Զգն՛ւշ լինել պահպանողականներից ու  
ազգայնականներից:

## Գլուխ 5

Սենյակում հացը բորբոսնեց:  
Սենյակում հացադուլ էր:  
Խանութներում նոր չափանիշների հաց են  
վաճառում:  
360 դրամով,  
36 հատ տաս դրամանոցով:  
Փռում աշխատանքի տեղ չկա:  
Ոչ ոք չի աշխատում:  
Գիշերային մարդը կոտրեց փոփ պահակի՝ փոփ տիրոջ  
հիշողության մեջ ունեցած հարգանքը:  
Պահակը քնած էր:  
Գիշերային մարդու դպրոցականը քաղցած չէր:  
Դպրոցում ավելի փոփ են հավաքում:  
Դպրոցում ուսուցիչն արդեն աշակերտի հետ 20  
դոլարով չի պարապում:  
Հացը թանկացել է:  
20 դոլարով դպրոցական չեն պահում:  
Սեպտեմբերի մեկից 30 դոլար է:  
Գիշերային մարդը գողացավ:

Գ-Ռ-Ղ-Ա-Ց-Ա-Վ...  
Նստեց բանտ:  
Բերդ:  
Գաղութ:  
Թղթախաղ:  
Թմրանյութ:

Դպրոցում կողպեքի փող են հավաքում:  
Դպրոցում նվերի փող են հավաքում:  
Դիշեցում:

## Ազատություն թիվ 2

Դպրոցականը ծնողին չհարգելու իրավունք  
ունի:  
Հետո:

## Ազատություն թիվ 4

Յուրաքանչյուր մարդ գույք ունենալու  
իրավունք ունի:

## Ազատություն թիվ 5

Յուրաքանչյուր մարդ գույքը վաճառելու  
իրավունք ունի:

Բերդի օրենք:

Թղթախաղում տանուլ կա:  
Չտվող չկա:  
Չտվողը ֆուֆլո ա:

## Գլուխ 6

Յուրաքանչյուր մարդ կարող է կրթություն  
ստանալ:  
Պարտադիր է:  
Fuck դպրոց:  
Փակ դպրոց:  
Կիսագողական դպրոց:  
Դպրոց...  
School...  
Որբերը դպրոցում չեն սովորում:  
Մուրացկանները դպրոցում չեն սովորում:  
Պոռնիկները դպրոցում չեն սովորում:  
Քաղաքի լավ տղերը դպրոցում չեն սովորում:  
Դպրոցի սովորողները դպրոցում չեն սովորում:  
Դպրոցը...  
Ենին.

Սովորել, սովորել, սովորել...

ԽՄՀՄ-ը փլուզվել է,  
և Լենինին հայիոյուն են:

### **Ազատություն թիվ 6**

Յուրաքանչյուր մարդ ընտրություն կատարելու  
իրավունք ունի:  
Իրավունք ՈՒՆԻ...

### **Ազատություն թիվ 6.1**

Յուրաքանչյուր ուժեղ մարդ ընտրությունը  
կեղծելու իրավունք ունի:  
Ընտրողների իրավունքի վրա թքած ունի:

2004 թվական:  
ՀՅ ԿԳՆ:  
Հայկական դպրոց:  
Գլոբալզացիա:  
Աշակերտի և ուսուցչի իրավունքները  
հավասար են:  
Ուսուցիչը աշակերտից՝ Վերաբերմունք:  
Աշակերտը աշակերտից՝ NALOG.

պապիրոս,  
ուսկե ժամացույց (տանը կասես՝ կորցրել եմ),  
աղջիկներ հասունացած՝  
ծեռք գցելու համար հարմար,  
կույս,  
ծիստիկ,  
հարուստի,  
կապույտ աչքերով,  
լավիկ,  
մարալ,  
կայֆավատ սիրող:

FUCK 2004 թվական:

### **Գլուխ 7**

### **Ազատություն թիվ 7**

Մեծ արձան ԱՍԽ-ում:  
Հայ աղջիկների մայկաների վրա պատկերված է  
այդ արձանը:  
Freedom...  
Free DOM..  
Ազատ տուն-Հասարակաց տուն...  
(ծիծաղ):  
Աղոթում են Քեզ Ար. Ինտեռնետ,  
Թիթեռնետ,  
TITER-NET...  
HET...  
NO!...

Ոչ...

Քո վիրտուալությունը սուրբ է:  
Հանուն ժողովրդավարության:  
Ազատություն ունենալու պարտադրանք:  
Պարտադրված ազատություն:

### **Ազատություն թիվ 8**

Ազատություն ունենալու իրավունք:

### **Գլուխ 8**

Աղջիկները սիրում են իրար:  
Տղամարդիկ սիրում են իրար:  
Համբուրգում են.  
տղամարդիկ՝ տղամարդկանց հետ,  
աղջիկները՝ աղջիկների հետ:  
Հոլանդիայում էլ ամուսնանուն են:

### **Ազատություն առաջնահերթ թիվ 9**

Սեռական փոքրամասնությունների  
իրավունքները պաշտպանվում են օրենքով:

Fuck այդ օրենքը:  
Հանուն ժողովրդավարությա՞ն...  
Հանուն ընտանիքի անկայունության:  
Աստված ժողովրդավարություն չի քարոզե՞լ...

### **Գլուխ 9**

9-րդ գլուխ  
9-րդ գլխիկ  
9-րդ գլխուղեղ  
9-րդ գլխավոր մաս  
9-րդ գլխակեր  
9-րդ գլխիկավոր  
9-րդ գլխին մազ չկա  
9-րդ գլուխսկոտրուկ  
9-րդ հավը գլխիդքացով տա

(դպրոցականներն իրենց ուսուցիչն  
ծաղկեփունջ նվիրեցին, ուսուցիչը՝ O---,  
շնորհակալություն, մեռսի էրեխտք, սպասիքա  
երեխաներ, շոյված եմ)

9-րդ դասարան.

ԱՆԻ-1  
ԱՆԻ-2  
Արմինե  
Ռուս քած՝ անունը ԱՆՆԱ

74  
ԱՐՓԻՆԵ  
և այլն...  
ԳԼՈՒԽ 10

## Ազատություն թիվ 10

Խոնավ սենյակում ինքս ինձ գերհանձար  
անվաճելու համար, որն ըստ իս, հեզմանք է,  
դատապարտեցին:

Ուշադրություն.  
Ես գժվելու իրավունք ունեմ:

Ուշադրություն.  
Այստեղ ես իմ ազատությունների մասին եմ գրում,  
Խնդրում եմ հարգել իմ իրավունքները:

ԱԶԱՏ ՈՒ ԹՈՒՅՆ...

Զեր ազատությունների մասին կարդացե՛ք  
մեկից ինը,  
ուտե՛ք փողի տակինը...

Առաջին բանաստեղծությունը տպագրելու  
իրավունք.  
Ավիրվում է գերժամանակակից պոետին.

Պոետ, ո՞ւր է քո պահպանակը, -հագի՛ր,  
դրսում անձրւ է գալիս:  
Պոետ, ես գալիս եմ գորիկայից,  
ես եղել եմ նաև հեռու Հոմերոսի յոթ  
ծննդավայրերում,  
դու ժպտում ես դարձյալ,  
մի՞թե ես չեմ կարող գերհանձարեղ իմ  
խոսքերով չնվաճել սիրտը պոստմոդեռնիստ  
աղջիկների:

Երկրորդ բանաստեղծությունը տպագրելու իրավունք.  
ուղղված դարձյալ նրան.

Don't with yahoo poet,  
Now I am a poet,  
I am a talant...

Յետո խոնավ սենյակում ցուրտ է:  
Դիմա, նաև գորիկայում:

Յե՛յ պոետ, դու պոստմոդեռնի՛ստ ես...  
Յե՛յ, արձակագիր, դու պոստմոդեռնի՛ստ ես...  
Յե՛յ, էսսեիստ, դու պոստմոդեռնի՛ստ ես...  
Յե՛յ, պարոններ...

Յե՛յ, Յե՛յ, Յե՛յ, Յե՛յ...

Ես հայ մարդ եմ:  
Ես հայ մնալու իրավունք ունեմ:

Left Light...  
Fuck POSTMODERNISM...  
Դրսում անձրւ է գալիս,  
Սենյակում սաստիկ խոնավ է,  
բալը շուկայում թանկ է մայիսին.  
Զնօան դահուկաներ:

## Ազատություն թիվ 11

Մարդ գժվելու իրավունք ունի  
աղանդավորների ձեռքը:  
Պոստմոդեռնիզմը աղանդ է:

Աստված, որորնեա քո արարածոց և ինձ բազմամեղիս,  
ՄԵԽԻՍ...  
(3-րդ սրահի մասնակիցների, շտապեցե՛ք

մոտենալ անցման կետին):

Լուլմ եմ...

Վերադարձ վե՛րջա՞ պե՞ս ...

Ազատություն էր:  
Ազատությու էր:  
Ազատությ էր:  
Ազատութ էր:  
Ազատու էր: Ազատ ու անկախ էր, ազատ,  
անկա՞ն Հայաստան:  
Ազատ էր:  
Ազա էր:  
Ազ էր:

Ինքնակենսագրություն:  
0001985թ. - Ծնունդ:  
0001992-0002002թթ. - Դպրոց:

Տեղեկանք բժշկից:  
Ուսմատիզմ ++++:

Տեղեկանք բնակության վայրից:  
(not found)

Անվանումը:  
«Աստված իմ, ես վերադառնում եմ»  
(ծիծաղ, ծիծաղի բարձր արձագանք)

Վարագույր:

Յարցրեցի՝ ո՞ւմ կարդամ,  
ասացին՝ **Շեկոյանի** նոր գիրքը:  
Գրախանութում 3000 դրամ էր:  
Յարցրեցի՝ ո՞վ է հայ արդի գրողը,  
ասացին՝ **Ղարսլյանը**:

Բա, եղա՞վ...

Բա, չեղավ:

## Գլուխ 11

11-րդում գլխի ընկա,  
ՈՐ...  
Ժամանակի լրանալու հետ պարտվեցի,  
որովհետև ընթացքի միջոցներն անհեթեթ էին:  
Չար էին:  
Կեղծ էին:  
ՈՐ...  
Ես սիրում եմ կյանքը:  
Տարօրինակ խելագարի մոլագարությամբ և  
խղճահարելի մելանաղձոտությամբ փորձեցի  
կերտել իմ աշխարհը:

## ԱՆԻԾՎԻ՛ ԱՅԴ ՈՒՏՈՊԻԱՆ...

Աստված ի՞մ, ես վերադառնում եմ:  
Դիմա ազնիվ լինելու պարտադրանք կա:  
Թվում էր, կարող էի հայտնել բոլորին, որ ուժեղ  
եմ և հաղթում եմ, սակայն երբ լսեցի  
հարյուրհազարանոց ամբոխի քմծիծաղը:

Անիծվեն նրանք:

Իսկ ես հպարտանում էի, որ աշխարհում վեց  
միլիարդ մարդ կա:

11-րդում գլխի ընկա, որ սխալ է այդ վեց  
միլիարդի կյանքը:

## Գլուխ 12

Կանգառն արգելվում է:

Այստեղով, որ անցնում եք, Մակեղոնացին է  
անցել:

Այստեղ ճանապարհ չէ:  
Բայց քանի որ անցնում եք՝ առանց կանգ  
արմելու անցեք, շտապեցեք:  
Այստեղ չպեղված գերեզմանատուն է. այստեղ  
ազատություն չկա:

Այս տարածքը փակ է:

Այստեղ Դեր-Զորի ճանապարհը չէ:

Սովամահ լինել չեք կարո՞ղ:

Ծարավ մնալ չեք կարո՞ղ:

Նյու Յորք գնալ չեք կարո՞ղ:

## Գլուխ 13

Հայկական տոմարում 13-րդ ամիս կար,  
որը հիմա չկա,  
Հայկական տոմարում երբ 13-րդ ամիսը կար,  
Կոլումբոսը չէր հայտնագործել Ամերիկան.  
Կեցցե՛ հայկական 13-րդ ամիսը:

## ՎԱՐԱԳՈՒՅՐԻՑ ՀԵՏՈ

Վարագույրը բնականաբար ծածկեց 13  
գլուխները, քանի որ վարագույրը պետք է  
ծածկեր 13 գլուխներն էլ:

Ինչո՞ւ:

Որովհետև ասում են, թե պոստմոդեռնիզմը  
թույլ է տալիս արտահայտել սրտի խոսքը  
բանավորին հավասար լեզվով:

Չգիտեն՝ ասո՞ւմ են, թե՞ ինձ է թվում:

Դամենայն դեպս այդպես է:

Իսկ ի՞նչ կասեն, երբ լսեն, որ

պոստմոդեռնիստորեն պոստմոդեռնիզմի  
մայրիկը փիդ դարձավ:

Պոստմոդեռնիզմը թանաքի հերն էլ անիծեց:

Անունիս տեր լինելու բնագին էլ արթնացրեց:

Պոստմոդեռնիզմը ծմերուկ էր, կերա, կոճերն էլ պիտի  
դուրս գային՝ դուրս եկան:

Ուրիշ էական բան դուրս չեկավ:

Հյուրն Աստծունն է:  
Ասացվածք

Ե՞ս անցած օրեր...

Բոլորովին էլ չեմ պնդում, թե առաջ ամեն ինչ լավ էր, ոչ (Կոմկուսի պարանոիկ հերն եմ անիծել. ամեն ինչ չափազանցնում էր): Բայց կարգուկանոն, այնուամենայմիվ, կար. յոթը յոթ էր, քառասունքը՝ քառասունք, հյուրը գալիս էր՝ Գառնի-Գեղարդ, Եջմիածին, քյաքար-խորոված, եթե կոչումը բարձր էր՝ Էքսկուրսիա Կոնյակի գործարան... ճանապարհելիս էլ կարևորը՝ ինքնաթիռ խցկես: Ու համարիր՝ բոլոր հարցերը լուծված են («Օրինվի են սիհաթը, երբ որ ոսի ոտը Յայոց լիս աշխարքը մտավ»... Մի խոսքով՝ «Յավերժ միասին»): Յետո Կոնյակի գործարանը ցուցակից հանեցին. զոհ ունեցանք: Մարտական գեներալ էր...

Ըստ կանոնակարգի, յուրաքանչյուր տակարից լցված ընպանակը, թեթևակի համտեսումից հետո, դատարկվում էր հատուկ այդ նպատակի համար նախատեսված բյուրեղապակյա սկահակի մեջ, ուր էքսկուրսիայի վերջում առաջանում էր կոնկրետ այդ օրվա կոնյակների փունջը, որը և, զնապելուց հետո, ընծայվում էր թանկագին հյուրին: Գեղեցիկ սովորույթ էր... Գործարանի տակառներն անգիր գիտեի... Բայց գեներալը հենց սկզբից խնում էր մինչև վերջին կաթիլը և, տասնյոթերորդ տակարին չհասած, մեռավ...

Եեր վեցերորդ տակարի մոտ («Դվին» կոնյակ): ակնարկեցի, թե աղաք կա, մինչև վերջ պետք չի՝ անոթալայնիչ է, փոքր քանակության դեպքում է օգտակար, իսկ նա (արդեն՝ քեֆը լավ). «Նի ֆիգա, պռուվոնսյա», ու տասնյոթերորդ տակարի մոտ («Վասպուրական»)՝ գընի:

Մեղավորն էլ ես դուրս եկա. թե ինչո՞ւ տասննեկերորդ տակարի մոտ («Երևան» կոնյակ) նորից չես զգուշացրել... Կոնյակի գործարանը ցուցակից հանեցին: Սարսափելի դաս էր բոլորին համար: Յետո ներքին հրահանգ ստացվեց. չորս շշից ոչ մեկի, և խմել հյուրին հավասար: Կից տրված էր կենացների ցուցակը: Մուսաս ոդիտայի վոա էր: Արևս մայր մտավ, բայց պարտականություններս մնացին...

Ե՞ս, նոր օրե՞ր...

Եե իհմա եկ ու էս դանիացուն դիմավորիր: Գոնե բելգիացի լիներ. նորմալ գինագործներ են ունեցել՝ Բրաունինզը, Նագանը... Յեթանոսական տաճարից բան կհասկանա՞։ Ոչ մի բելգիացու չեմ կարողանում հիշել Աղամոյից բացի: Պետս էլ սպառնաց. «Թե իրա ոտով հյուրանոցի համար մտավ՝ ինձնից չնեղանաս»: Իսկապես որ «Թոն բըլանե՞-ժը»... Սրան ո՞նց դիմավորենք:

Բայց Յանս Քրիստիան Անդերսենը, կարծեմ, դանիացի էր... Յապա մի վերիիշենք: Զրահա՛րսը: Արձանը՝ Կոպենհագենի նավահանգստում: (Վերջերս դրա գլուխը, մեր Այվազովսկու վրձնի նման, գողերը պոկել-տարել էին, նորը ծովեցին-դրին: Աչքիս սա բարեկամ ժողովուրդ է):

Լավ... Զրին մոտիկ ի՞նչ ունենք: Ախթամարի՝ Ծրագիրը պարզ է: Ախթամարի մոտ՝ նախաճաշ, հետո Քյավառով՝ հյուրանոց: Օբյեկտիվ դատելով՝ պետք է որ եղբարյանանք, բայց դե թարզմանչից էլ շատ բան է կախված. առանց վեհաշուր կենացի էս դարում ով է խմում: Տեսմես ու՞ն կկցեն: Եթե ժողոր եղավ, քաշվեցինք. չորրորդ կենացից հետո լրիվ մայրանում է, սկսում հյուրին գուրգուրել, համբուրել, իսկ դա քչերին է դուր գալիս: Սպասիր, բայց ժողին ոնց որ առաջ են քաշել. կարծեմ զինվորական կցորդ է էտ Կոպենհագեններից մեկում. Վերջերս հեռուստացույցով տեսա...

Տեր Աստված, մի նորմալ թարգմանիչ ուղարկիր... Խոստանում եմ կյանքում էլ «Վեղոյ ցորենի» չխմել... Մի գործազուրկ նախկին գիտնական կամ Դանիայում եղած մի մարդաբող կին... Վերջին հնգամյակս մղձավանջ մի՝ դարձրու... Եթե «Ֆանտայով» մեծացած էս թուլեքից ուղարկեցիր, ես ոչ թե յարդի ցիռողից կմեռնեմ, այլ՝ սրտի կաթվածից. մի՛ շեղիր կյանքիս ուղին այդքան կտրուկ... Ամեն...

Ե՞ս, սպասումներ...

Փառքդ շատ լինի, Տեր Աստված, թուլեքից չի, նույնիսկ մի երկու տարի ժողից մեծ կլինի: Բարձրահասակ, ակնոցավոր, ճաղատ, անթրաշ. հազած-կապածի վիճակն էլ՝ կարծես լարված մարտում հավաքուն է գրավել: Ինչ ննան է գերմանացի ռազմագերու (Էն որ փաստավավերագրական ֆիլմերում ազատագրված քաղաքների փողոցներով տանում էին): Մտքունս իսկույն կնքեցի նրան՝ Դանս, բայց երբ, մինչ ես ծալովի դանակիս բացիչն էի փնտրում, ի միջի այլոց, թի եղունգով գարեցրի կափարիչը թարցեց ու շիշը մեկնեց ինձ, արժեքներիս սանդղակը վերագնահատման կարիք զգաց... Տարիների հետ ես պահպանողական եմ դարձել. խուսափում եմ նոր ծանոթություններից և ամուր կապերից: Նույնը ինձ կարող եմ ասել նաև նոր ծանոթիս մասին. ուստի մինչև դուք դու-ի անցանք, ուր շիշ քաշեց, ու արդեն լավ ենք.

- Կներես, կոլեգա, իսկ նախսկին գիտաշխատողին ես հեռվից եմ տեսնում, Վլադիսլավը արտակարգ գեղեցիկ, բայց մի քիչ երկար անուն է: Օպերատիվ նկատառումներից ելնելով՝ քո կեղծանունը կլինի՝ Գրոս: Դա կարծեցված գորսնայստերն է: Իսկ ինձ կարող ես դիմել ցանկացած կեղծանվամբ, բացի՝ Դազարան Բլբուլը, քանզի կարող են շփոթել Բլբուլի՝ իմ մանկության ընկերոջ հետ, իսկ ես նրա եղունգը չարժեմ:

- Ցնցված եմ քո համեստությունից, կոլեգա, և խորապես շնորհակալ հաճոյախոսության համար: Շախմատային մուսա Կախսային շդավաճանելու համար անվանենք քեզ՝ Վարպետ: Ոչ ոք չփոթի որևէ նկարչի կամ պոետի հետ. նրանք քո եղունգը չարժեն: Ի միջի այլոց, չգիտե՞՞ս՝ ո՞ր մարզից է մեր հյուրը:

- Ի՞նչ մարզ, Դանիայից է, Կոպենհագենից:

- Դասկանում եմ, Դանիան էլ նկատի ունեմ՝ ո՞ր մարզից է, ո՞ր ամսից:

Յշեցի, թե ում է նման՝ Մաքս Պլանկին, քվանտային ֆիզիկայի հորը...

- Ասենք... Առանձնապես մեծ նշանակություն չունի, այստեղ էլ գլոբալիզացիոն գործընթացներ կատարվեցին, երկրները խառնվեցին իրար, սահմանները դարձան թափանցիկ, ինչքան գեղցի կար՝ քաղաք լցվեց... քարմեց եղավ Կոպենհագենը... Սի-մի հատ էլ չխմե՞նք. Ես սպասելուց զգվելի բան չկա:

Ե՞ս, հանդիպումներ...

Գնդապետն առյուծ էր: Շարժասանդուղքով իջնելիս որ գրապանից ոսկեօծ տափաշիշը հանեց ու կում արեց, հասկացանք՝ առյուծ է... Գրոսի հետ ինչ-որ բան խոսեցին, ծիծաղեցին, ուս-ուսի թփթփացրին, մի ծեռքով Գրոսին գրկեց, մյուսով՝ ինձ, առօք-փառոք բերեց տեղավորեց մեքենայում (ճամպրուկը Զվարթնոցի ոստիկանները բերեցին): Ինքը նստեց Մրդոյի կողքին ու հրամայեց. «Վակերյող»: Ժպիտն էլ՝ ոնց որ լուսահոգի Յուրի Գագարինինը... Կյանքում այդպիսի հյուր ունեցե՞լ եք:

Գրողի տարած մթագնումները սկսվեցին. հյուրանոց տանելը, տեղավորելը, ճանապարհային գնումները չեն հիշում՝ մութ էր...

Ե՞ս, թամար...

Լուսավորվեց, երբ Չարենցավանն անցնում էինք. արկդի կեսը չկա, խորովածանոց բաց չենք թողնում, թեֆներս՝ միլիոն, բայց Գրոսը չկա. Արովյանի կողմերը, ինչ-որ դուքսանում կորցրել ենք... Բայց կարիքն էլ առանձնապես չի զգացվում. բաժակները լցնում ենք ու՝ «Թոմ բըլանթ»-ժը»... Դազարանի կողմերը մեկ էլ հրշեցները Գրոսին բերին... Յիմա մի փաթաթվել են գնդապետն ու ինքը. մինչև Մրդոյի օգնությամբ անջատեցի, մի-մի բաժակ լցրինք-խմեցրինք, հոգիներս դուրս եկավ: Լավ է, հետո մի իինգ րոպե քնեց: Արդեն մոտենում ենք Սևանին, արկդից բան չի մնացել... Սի արկդ էլ առանք:

...Անդերսենի ջրահարսից հարցրեցի՝ դարձավ Գրոսին: Ես տնաշենն էլ հեքիաթը ծերից ծեր պատմեց: Յիմա մի լաց է լինում գնդապետս՝ առաջին անգամ էր լսում... Մեքենայում էլ՝ շո՞գ...

Դեռ լավ է, ճանապարհին, հարյուր մետրը մեկ, ձկնավաճառներ էին կանգնած ու ծեռքով ծուկ էին պատկերում (իսկ Դանիայում դա շատ վիրավորական ժեստ է, մեր քրֆելուն համարյա հավասար): Յենց ընթացքի ժամանակ գնդապետը դրանցից մի երկուսին կպավ, հանգստացավ ու մի քիչ էլ քնեց...

Թերակղզի հասանք թե չէ՝ ինքն ու Գրոսը միաժամանակ զարթնեցին, ապշահար նայեցին Ախթամարին ու, ինձ թվաց, թե միաժամանակ հարցրին.

- Դուք է՞՞ եք ջրահարս ունեցել:

78

Իսկույն պատմեցի առասպելը՝ շփոթելով Վանա լիճը Սևանի հետ (կղզու թերակղզի դաշնալը ինձ շփոթեցրեց):

Այստեղ գնդապետը քարտեզ պահանջեց, ձեռքով գնահատեց ջրի սառնությունը և խնդրեց ցույց տալ լողորդի ուղին: Փորձված նավապետի վստահությանը, ես Նորադուզ-Թերակղզի մի կետագիծ անցկացրի և, զգաստ, սպասեցի հետագա հրահանգներին: Գնդապետը նայեց քարտեզի մասշտարին, մի պահ զարմացած մտածեց, նորից չափեց ջրի ջերմաստիճանը և դարձավ Գրոսին:

- Ի՞նչ է ասում, Գրոս:
- Ասում է, չի կարող պատահել. Էս ջրում էդ հեռավորությունը լողալուց հետո չի կանգնի:
- Ո՞վ չի կանգնի:
- Ով չէ՝ ինչը... Ասում է, էս սառնության մեջ, էդ հեռավորությունը անցնելուց հետո, չին կարող սեքսով գբաղվել:
- Դե, թարգմանի՛ր. չկանգներ, առասպելը չէր գրվի: Դետո կարծիք կա, որ Վանա լճում է կատարվել եղելությունը:

- Դիմա՝ ինչ է ասում:

- Վանա լճի քարտեզն է ուզում...

Նահլաթ քեզ, չար սատանա. Ի՞նչ Վան, ի՞նչ քարտեզ: Վերջը մի կերպ համոզեցի, որ Երկրաշարժից հետո Վանա լիճը վերացել է, այդ տեղում հիմա Քյավառն է, ուր մենք անպայման պետք է այցելենք...

Քյավառում սև գառը, գույնզգույն ժապավենը պողերին կապած, մեզ էր սպասում, տղերքն էլ շշերը աղբյուրն էին կախել: Ենախսի էլ խարույկ էին վառել, որ Գրոսը չղիմացավ. «Տնաշեններ, իր Զորդանո Բրունոյին չե՞նք վառելու»... Բայց, դե, գնդապետս առասպելից պոկ չի գալիս.

- Ինչո՞ւ չէին ամուսնանում:

- Տղան լողի մարզիչ էր: Վանա լճի չորացումից հետո գործազուրկ մնաց, ու որոշեցին մինչև նոր աշխատատեղերի ստեղծվելը ամուսնությունը հետաձգել...

Դամոգիչ չէր:

- Ծնողները կօգնեին... Դանիայում էլ Երիտասարդները միանգամից աշխատանք չեն գտնում:

Ի՞նչ պատասխանես. Երևակայությունս արդեն սպառվել էր: Առաջարկեցի խմել ջրահարսի և Թամարի կենացը ունկայս:

Կայացա՞վ: Դյուրանոցի համար ավելի դյուրին կլիմեր դաշնամուր տանել, քան՝ գնդապետին. Խիստ ցասումնալից տոնով անընդհատ գորգոռում էր: Զգում էի, որ որոշ դարձվածքներ կրկնվում են, բայց միայն «Եխ, Թամարն» էի հասկանում: Իսկ Գրոսն ամեն ինչ հասկանում էր, բայց չէր կարողանում թարգմանել (հետո պարզվեց, որ ֆլամանդական հիշոցները չգիտի): Երկու շաբաթ անց ծանրոց ստացա: Բյուրեղապակյա լիտրանոց էր՝ ջրահարսի պատկերը վրան...

Դուք Դանիայում ընկեր ունե՞ք:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

79

<i>Ծուշան Ավագյան</i>	
<i>ՄԱՅԻՍԻ ՄԵԿՆ Է</i>	4
<i>ԾՆՆԴՏԱՆՑ</i>	5
<i>ԼՍԱՐԱՆՈՒՄ</i>	6
<i>ՂԵԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱ</i>	6
<i>ՍԱՐՄԱՆԻՑ ԴՈՒՐՍ</i>	7
<i>ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՏՈՆ</i>	9
<i>Տիգրան Պասկալիյան</i>	
<i>Ծխախոտ</i>	11
<i>Դանդաղ ընթացք</i>	12
<i>Նենսի Ազարյան</i>	
<i>Ներբող՝ նվիրված խուճապի նոպային</i>	14
<i>Իրականություն</i>	16
<i>Վահե Ավետյան</i>	
<i>Թիֆլիս, իմ սե՞ր...</i>	17
<i>Դավայ, ես հելա, պակա...</i>	17
<i>Ոտի գենետիկա</i>	18
<i>10 դոլար տուր</i>	18
<i>Ժովինար</i>	
<i>ռեժիմ</i>	20
<i>անվերնագիր</i>	21
<i>սերը</i>	22
<i>Գոհար Նիկողոսյան</i>	
<i>Ինքնասիրություն</i>	23
<i>Ջաբեթ Մուրադյան</i>	
<i>Կույս՝ ժամանակ</i>	25
<i>Տանյա Հովհաննիսյանի չգրած բանաստեղծությունը</i>	26
<i>Ո Տ Ն Զ Գ Ո ւ Թ Յ Ո Ւ Ն</i>	27
<i>Արման Գրիգորյան</i>	
<i>Արշիլ Գորկու նամակները՝ Dr. F. G.-ի հավաքածուից</i>	28
<i>Լիդա Ասատրյան</i>	
<i>Sketch Դանտոնի և ֆանտոմի մոտիվներով</i>	31
<i>Իմանուիլ Կանտ տնուսույց փիլիսոփա</i>	32
<i>Բլինդաժ</i>	32
<i>Ջամընթաց շարժում ծիվաղի հետ</i>	33
<i>Վասն սիրո վարդակոկնի ու գեշության</i>	34
<i>Վահան իշխանյան</i>	
<i>իռենը</i>	36
<i>ուսապարկ</i>	38

# *www.բնագիր.am*

80

<i>Կարեն Ղարսյան</i>	
<i>Սեր ամեն հայացքից</i>	40
<i>Արթուր Սահակյան</i>	
<i>Զինվորի օրագիրը</i>	45
<i>Կարինե Գասպարյան</i>	
<i>...Օֆ...</i>	47
<i>Տենց էլ չիմացա, թե ով...</i>	47
<i>Ես ի՞ն ձեռը կրակը չեմ ընկել...</i>	47
<i>ՈՒՉՈՒՄ էի</i>	48
<i>Ասք սովետական կարգերի փլուզման մասին</i>	48
<i>Լևոն Ջավախյան</i>	
<i>Ապրիլի 12-ի՝ լուս 13-ի գիշերը</i>	50
<i>ԵՇ, Փանատներ</i>	52
<i>Նարեկ Նիկողոսյան</i>	
<i>Պլանավորված երազ</i>	52
<i>Նախավերջին հարցը</i>	52
<i>Լևոն Նազարեթյան</i>	
<i>Սուլիանի կյանքի և մահվան մասին</i>	53
<i>Լուսի Ստեփանյան</i>	
<i>Տենդ</i>	55
<i>Սեր քաղաքի «Ճիշտը»</i>	56
<i>Երգ երգոց</i>	57
<i>Ամերիկանիզմին ծախված հոգի</i>	58
<i>Djsheko</i>	
<i>Սասալ</i>	59
<i>Դովիաննես Թեքայոզյան</i>	
<i>Պապիե-մաշե</i>	60
<i>Անահիտ Դայրապետյան</i>	
<i>Պատմվածք</i>	63
<i>Դարություն Դարությունյան</i>	
<i>Ապտակի գինը</i>	67
<i>Դավիթ Գրիգորյան</i>	
<i>Կյանքը քաք է</i>	70
<i>Մոմիկ Վարդամյան</i>	
<i>Պ ո ս տ մ ո դ ե ո ն ի զ մ ի մ ա յ ր ի կ ը ...</i>	71
<i>O' Ջալոյյանց</i>	
<i>Եխթամար</i>	76